

1447

Ա. Միշուկով

Արարելով շնորհակալություն

և հարգանքներ

Հարգանքներով Անիսյա

9(37)

Մ-71

1937



127

Ա. ՄԻՇՈՒԼԻՆ

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԶԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՅԵՎ ՀՈՈՄԵՅԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

9 (37)
Մ-71

30 MAY 2011

Հ. Խ. Ս. Հ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 17 Հ Ե Ր Ա Կ Ա Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն № 17

9(37) սպ
Մ-71

Ա. ՄԻՇՈՒԼԻՆ


ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՅԵՎ ՀՈՈՄԵՅԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Թարգմ. Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ձ Ե

1937



0 1 JUL 2013

1942

Պատ. խմբագիր՝ ~~Ս. Մ. Գ. Մ. Մ. Մ. Մ.~~
Սրբագրիչ՝ Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

637
37

Իրավիւտ կ—4500 հրատ. № 6 պատմ. № 7 ամիս 1000

Հանձնված և արտադրութեան 10 հունվարի 1937 թ.
Ստորագրված և սպելու 26 հունվարի 1937 թ
Ուսուցիչների վերակազմման ինստիտուտի տպարան,
Յերևան, Մարքոսի փողոց 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՅԲԱՐԸ ՀԻՆ ՀՈՈՄՈՒՄ

Անտիկ աշխարհի պատմութեանը հին Հունաստանի և Հուս-
մի ստրկատիրական հասարակութեանների պատմութեանն եւ
Այս հասարակութեանները գոյութեան են ունեցել ավելի քան
յերկու հազար հինգ հարյուր տարի սրանից առաջ։ Նրանց պատ-
մութեան մասին մեզ վկայում են բազմաթիւ հիշատակարաններ,
հնագիտական պեղումներ, հունական և հռոմեական պատմա-
բանների, փիլիսոփաների ու բանաստեղծների մեզ հասած գրա-
կան գործեր, ինչպես և քարերի, տաճարների վրա և այլ վայ-
րերում մնացած պահպան տեսակի արձանագրութեաններ։ Բայց,
չնայած բավականաչափ պատմական նյութին, անտիկ աշխարհի
պատմութեանը ճիշտ լուսարանութեան չի ստացել բուրժուական
պատմագրութեան մեջ։ Տնտեսութեանը, դասակարգերը, կուլտու-
րան—հին աշխարհի ստրկատիրական հասարակութեանների ներ-
սում յեղած հարաբերութեանների ամբողջ կոմպլեքսը բուրժուա-
կան պատմաբանները խեղաթյուրել են հողուտ բուրժուազիայի
շահերի։ Ձգանլով ապացուցել վոր ստրկատիրական հարաբերու-
թեանները, ինչպես և շահագործման վրա հիմնված ամեն մի հա-
րաբերութեան, բնական են ու մշտնջենական՝ բուրժուական
պատմաբաններն իրեալականացրել են անտիկ աշխարհը, և այն
ժամանակ գերիշխող ստրկատիրական հարաբերութեանները
պատկերացրել իբրև իսկական մարդկային հարաբերութեանների
զարգացման յերակետ։ Տնտեսութեան ստրկատիրական ձևերը մա-
տուցվում եյին իբրև իրեալական ձևեր, իրեալականացվում եր
ստրկատիրների դասակարգի կուլտուրան և փառաբանվում կապի-
տալիզմը, վոր իբր թե սկսեց կազմվել դեռևս անտիկ ժամանակ-
ներում։

Բուրժուական գիտնականներ Վերբերի, Ռոստովցեվի, Զոմբարտի, Դոպլի և Կաուցկու պատմական սխեմաներում հին ժամանակների անտեսակարգը ներկայացվում էր ինչ-վոր ավարտված, իբրև մի կուռ և վորևե հակասությունից զուրկ հարաբերությունների սխեմա: Որինակ՝ Կաուցկին մինչկապիտալիստական հասարակությունների համար բացատրում է ամեն մի սոցիալական հեղաշրջում: Նրա թեորիայի համաձայն, մի հասարակակարգն աստիճանաբար վերածում է մյուսին: Այս դրույթը նա հաստատում է վոչ միայն մինչկապիտալիստական Ֆորմացիաների համար, նրա թեորիան պարտադիր չի դարձնում նաև սոցիալական հեղափոխությունը՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու համար: Հենց այս է նրա հիմնական դրույթը հին աշխարհի ուսումնասիրության գործում:

Նույն բայնն են քարոզում նաև Ռոստովցեվը, Դոպլն ու Վերբերը: Այս բոլոր թեորիաները միատեսակ սրված են հեղափոխական մարքսիզմի դեմ, վորը (հեղափոխական մարքսիզմը), ինչպես հայտնի չէ, բացահայտում է յուրաքանչյուր մինչկապիտալիստական Ֆորմացիայի ներքին հակասությունները, ինչպես և բուն կապիտալիստական հասարակության ներքին հակասությունները, վորոնք անյուժեմ յեն առանց պրոլետարական հեղափոխության, առանց պրոլետարիատի դիկտատուրայի: Բուրժուական նման դրույթների զարգացումն այժմ իր բարձրագույն սահմանին է հասնում ֆալսիտական «պատմական գիտության» մեջ, վորն իր նշանաբանն է հռչակել՝ «Հե՛տ, դեպի հինը»: Կապիտալիստական հասարակությունն ավելի հաջող պաշտպանելու համար բուրժուական «պատմաբանները», սկսած Մեյերից, Բեյլից, Վերբերից և վերջացրած Կաուցկիով, առաջադրում են այն դրույթը, թե կապիտալիզմը գոյություն ունի արդեն հնագույն ժամանակներից և վոր նա, աստիճանաբար զարգանալով, մեր որերին հասել է իզեալական ձևի: Հին ժամանակների տնտեսական հարաբերությունների այսպիսի մոգեմագուստական բուրժուական մեթոդոլոգիայի ամենաբնորոշ առանձնահատկությունն է, վոր կապիտալիզմը հռչակում է հավիտենական կատեգորիա՝ իր անխախտ հատկություններով, բոլոր ժամանակներում:

Մարքսը վերջ գրեց բուրժուական մեթոդոլոգիային նրա-

նով, վոր ամենից առաջ խորտակեց կապիտալիստական հասարակակարգի վերաբերյալ այն պատկերացումը, թե իբր նա զուրկ է հակասություններից և ներդաշնակ հասարակակարգ է: Կապիտալիստական հասարակության վերլուծությունը Մարքսին հասցրեց վոչ միայն այն յեզրակացության, վոր անխուսափելի չէ կապիտալիզմի անկումը, այլև սրա հետ միասին հնարավորություն տվեց խորամուխ լինելու բոլոր հին հասարակական Ֆորմացիաների արտադրական հարաբերությունների մեջ:

Կապիտալիզմի եկոնոմիկայի վերլուծությունը Մարքսին տվեց անտիկ եկոնոմիկայի «բանալին», այսինքն՝ հնարավորություն տվեց յերևան բերելու հին Հունաստանի ու Հռոմի տնտեսական զարգացման առանձնահատկությունները:

Մարքսը, ինչպես և Ենգելսը, ամենից առաջ ընդգծում էր հին Հունաստանի և Հռոմի տնտեսական զարգացման բնատնտեսական բնույթն անտիկ պատմության ամբողջ տևողության բնութացրում: Մարքսյան այս դրույթը մենք կարող ենք հաստատել կոնկրետ նյութով, վորը լուսաբանում է հին ստրկատիրական հասարակությունների ազրարային հարաբերությունները: Նույնիսկ մասնավոր սեփականության ծագումն ու զարգացումը հին հունական և հռոմեյական համայնքների ներսում և նրանց միջև փոխանակության առկայությունը չէլին խախտում անտիկ հանրապետությունների տնտեսական կյանքի ազրարային, հիմնականում բնատնտեսական, բնույթը:

Հռոմի տնտեսակարգի բնատնտեսական բնույթն ամենից լավ վերարտադրել է գյուղատնտեսության հարցերով զբաղվող հռոմայեցի գրող Վարրոնը: Նա համառորեն ընդգծում է, վոր գյուղատնտեսության համար անհրաժեշտ բոլոր առարկաները և նույնիսկ աշխատանքի գործիքները պատրաստվում էլին տնտեսության ներսում, իսկ զուրսը գնվում էր այն, ինչ չէր կարելի շինել բուն կալվածքում: Իսկ ինչ վերաբերում է իր տնտեսության մթերքները վաճառելուն, ապա թե հունական և թե հռոմեյական հեղինակները խոսում են միայն ավելցուկները վաճառելու մասին: Մթերքները վաճառվում էլին միայն նրա համար, վորպեսզի, ինչպս ասում է Վարրոնը, «հասութեով գնվեն բոլոր հարկավոր բաները կալվածքի համար»: Հռոմայեցի մյուս գրող Կատոնը, դեռևս մինչև Վարրոնը նշում էր հին ժամանակ-

ների գյուղատնտեսութեան այս հիմնական առանձնահատկու-
թյունը: Նա թվարկում է այն բոլոր աշխատանքների տեսակնե-
րը, վոր անհրաժեշտ են հարուստ կալվածքն սպառման և արտա-
դրութեան բոլոր առարկաներով ապահովելու համար: Այս բոլոր
աշխատանքները կատարվում են հենց կալվածքի ներսում: Վար-
րունի նման նա նույնպես նշում է. «Ինչ վոր ավելցուկ է, միայն
այն պետք է ծախել»:

Հույն փիլիսոփա Արիստոտելը նույնպես փոխանակութեանը
սահմանափակում էր սեփական տնտեսութեան պահանջմունքնե-
րի բավարարումով: Այս փոխանակութեանը նա անվանում է
բնական, իբրև հակադրութեան առևտրական փոխանակութեան,
վոր նպատակ ունի շահույթ ստանալ, վորը նա բնորոշում է
իբրև անբնական յերևույթ: Այստեղից, ի միջի այլոց, հասկանալի
է դառնում այն, թե ինչու Արիստոտելը գծվարութեան մեջ էր
այն հավասարութեանը վորոշելու վերաբերմամբ, վոր իրականա-
նում է փոխանակութեան ժամանակ: Փոխանակային արժեքի
արտահայտումը չէր կարող յերևան գալ այն տնտեսութեան մեջ,
վորն արտադրում էր գերազանցապես սպառման մթերքներ: Կամ,
ինչպես ասում է Մարքսը, Արիստոտելի պարզած հասարակութեան
պատմական սահմանները խանդարում էին նրան բացահայտե-
լու, թե վորն է իրոք փոխանակվող մթերքների հավասարութեան
հարաբերութեանը:

Մենք աշխատեցինք ընդգծել անախկ տնտեսութեան, հիմ-
նականում բնատնտեսական հարաբերութեանները նրա համար,
վորպեսզի, նախ՝ յերևան հանենք գյուղատնտեսութեան առաջա-
տար դերն այն դարաշրջանի ամբողջ տնտեսական գործունեյու-
թեան մեջ, յերկրորդ՝ վորպեսզի ցույց տանք, վոր տնտեսավո-
րող սուբյեկտն ամենից առաջ հանդես էր գալիս, ինչպես ասում
է Մարքսը, իբրև սպառող տնտեսութեան ներկայացուցիչ, և, վեր-
ջապես, յերրորդ՝ վորպեսզի հաստատենք, վոր հետադարձում բու-
տեղծված արհեստագործութեանը նույնպես, ինչպես և արդյունա-
բերութեան սահմանը, վոր միայն կազմվում էր, այլև համարյա
ամբողջովին, Մարքսի արտահայտութեամբ, դեռևս կախված էր
գյուղատնտեսութեանից, չնայած արհեստագործութեան արդեն
տեղի ունեցած անջատմանը գյուղատնտեսութեանից: Այս բո-
լորն անհրաժեշտ է սկստի ունենալ, վորպեսզի չհափշտակվենք

հին հասարակութեանների տնտեսական-քաղաքական կյանքի
լուսարանութեան բուրժուական դրույթների արդյունք հանդիսա-
ցող հեքյաթներով: Թե իբր հին Հունաստանում և Հռոմում գո-
յութեան ունեք զարգացած ապրանքափոխանակութեան և հա-
մարյա թե կապիտալիստական տիպի տնտեսութեան:

Ինչպես յերկրագործութեանը, այնպես էլ արհեստները հեն-
վում էին ստրկութեան վրա, վորն աշխատանքի հիմնական ձևն
էր: Այն ժամանակվա արտադրողականութեան ցածր մակարդա-
կի պայմաններում ստրկի դերն իջեցվում էր նույնիսկ մինչև
աշխատանքի հասարակ գործիքի աստիճանի: Այս մասին լավ է
ասում Մարքսը, յերբ նա, մեջ բերելով Վարրոնից, նշում է, վոր
ստրուկն արտադրութեան պրոցեսի մեջ մտնում էր իբրև ստրկա-
տիրոջ կենդանի ինվենտար. ինստրումենտում վոկալի զրու-
թեամբ, այսինքն՝ իբրև խոսող գործիք:

Ստրուկների շահագործումը գյուղատնտեսութեան, և ար-
հեստագործութեան մեջ կատարվում էր ամենադաժան ձևերով
ինչպես հին Հունաստանում, այնպես էլ Հռոմում: Մարքսն ասում
է, վոր ստրկական աշխատանքի ժամանակ աշխատանքային որ-
վա նույնիսկ այն մասը, վորի ընթացքում ստրուկը հատուցում
է միայն իր սեփական գոյութեան միջոցների արժեքը, և վորի
ընթացքում նա փաստորեն աշխատում է միայն իր համար, հան-
դիսանում է աշխատանք տնտեսատիրոջ համար: Մի ուրիշ տեղ,
բնորոշելով ստրուկների շահագործման ամենադաժան ձևերը հին
Հունաստանում և Հռոմում՝ Մարքսը նշում է, վոր ստրկատիրա-
կան տնտեսութեանը ջանում էր «... մարդ-անասունից (նույն
խաթիթի) ըստ հնարավորին կարճ ժամանակում աշխատանքի
վորքան կարելի է շատ քանակ դուրս քամվի»*: Միանգամայն
բնական է, վոր շահագործման այս ձևի դեպքում ստրկի կյանքը
պահպանելու շահը մղվում էր յերկրորդական պլանի վրա: Բացի
սրանից, Մարքսն ասում է, վոր մշտական պատերազմների պայ-
մաններում հնարավորութեան կար ստրկական մասսաներ հափշ-
տակելու կամ նվաճված բնակչութեանն ստրուկ դարձնելու, այս-
ինքն՝ ստրկին մշտապես կարելի էր փոխադրվել նոր ստրկով-
այսպիսի պայմաններում ստրկի կյանքի տեղութեանն ավելի
պակաս կարևոր է դառնում, քան նրա աշխատանքի արտադրո-

*) Կ. Մարքս. «Կապիտալ» I հ., էջ 231, կուսերստ:

դականությունը: Ստրկի այսպիսի դրությանը հետևում էր վոչ միայն ստրուկների հավելյալ արգյունքների յուրացումը շահագործողների կողմից, այլև ստրկին անհրաժեշտ մթերքների յուրացումը, այսինքն՝ հանգում էր ստրկի կյանքի ոտարացման, ինչպես ասում է Մարքսը, իբրև հետևանք «...նրանց սննդի մեծազույն կոշտության և ուժաթափ անող ու անընդհատ շարժարանքների շնորհիվ, այլև գերաշխատանքից հյուժող և քնի ու հանգստի պակասությունից դանդաղորեն խոշտանգվելու հետևանքով»*):

Այս դարհուրելի շահագործումը հանգում էր ստրուկների ապստամբություններին, վորոնք բացառիկ ուժով բռնկում էին անտիկ Հունաստանում և Հռոմում, — ապստամբություններ, վորոնք ցնցեցին ստրկատիրական հասարակարգի հիմքերը: Ստրուկներն այն դասակարգն էին, վորը շահագրգռված էր ամբողջ ստրկատիրական սխտեմի լիակատար վերացումով. ստրուկների պայքարը, նրանց հեղափոխությունները վերջիվերջո անտիկ աշխարհը հասցրին կործանման:

**Հին Հռոմը Մինջեվ
ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՀԵՂԱՓՈՒՑՈՒՆԸ**

Հռոմն ստրուկների հեղափոխություններին հասավ սոցիալական յերկարատև պայքարի հետևանքով: Այս պայքարի մասին մենք տեղեկություններ ունենք արդեն Հռոմ քաղաքի հիմնվելու ժամանակներից, վոր, ըստ ավանդության, տեղի յե ունեցել 753 թվին մինչև մեր թվականը: Այսպիսով հին Հռոմը պատմական ասպարեզ է յեղում դասակարգերի բաժանված: Հռոմի սոցիալական պայքարին կարելի յե հետամուտ լինել դեռևս թագավորների ժամանակաշրջանում (753—510 թվականները մինչև մեր թվ.) Իրան հետևող թագավորական իշխանության վերացումը և 510 թվին հանրապետության անցնելն ուժեղացնում են հին յոնիական արիստոկրատիայի քայքայումը և անբացնում ստրկատիրական դեմոկրատիայի ինտիտուտը: Պլեբեյների մասանները, վորոնք բացահայտ կռվի էին յեղել պատրիկ-

*) Գ. Մարքս. «Ճապիտալ» 1 հ. ԿՂ՝ 281, Կուսհրատ:

ները դեմ և յերկար ժամանակ շարունակում էին պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները, 494 թվին, վերջապես, իրավունք են ստանում ընտրելու ժողովրդական տրիբուններ և քաղաքական իրավահավասարություն են ձեռք բերում պատրիկների հետ:

Ստրկատիրական սեփականության ամրացումը, վոր անդրազարձել է դեռևս 12-րդ տախտակների որենքներում (450 թ.), Հռոմի հետագա նվաճումները (սամնիտյան պատերազմներն՝ սկսած 343 թվից մինչև 290 թվը) ավելի ու ավելի էին հաստատում հողատերերի և ստրկատերերի իշխանությունը: Հռոմի մղած հաջող պատերազմներից, բացի սամնիտյանը, առանձնապես պետք է նշել Տարրենտի և Պիրրոս Եպիրացու դեմ մղած պատերազմը (280—272 թ. թ.) և յերեք հուշակավոր պոնտիկյան պատերազմները (264—146 թ. թ.), վորոնց հետևանքով Հռոմը դարձավ համաշխարհային պետություն:

Այս պատերազմներն ե՛լ ավելի մեծացրին ստրկատեր դասակարգի հարստությունները և, սրա հետ միասին, ավելի շատ քայքայեցին Հռոմի հողագործ բնակչությանը: Մանր հողատերերի հենց այս քայքայումը, վորոնք պատերազմ էին գնում և իրենց անտեսությունը թողնում բախտի քմահաճույքին, նրանց հասցնում էր խոշոր հողային սեփականատերերի կողմից ծառայագրվելու աստիճանին, վորոնք գյուղացիների հողերն աստիճանաբար հավաքում էին իրենց ձեռքը: Հենց այս պետք է վերջիվերջո ստեղծեր ազրարային այն լայն շարժումը հողերի վերաբաժանման համար, վոր հայտնի յե Իտալիայի գյուղացիության գրակքոսյան շարժում անունով:

Այս շարժման գեկավարն էր Տիբերիոս Գրակքոսը: «Իտալիայում ալրող վալրի գազաններն էլ — ասում էր Տիբերիոս Գրակքոսը, — ունեն ըուն ու վորջ, այսինչ Իտալիայի համար մարտընչող մարդիկ վոչինչ չունեն, բացի ողից ու լույսից: Նրանք անոթեան են և գուրկ են մշտական բնակավայրից՝ իրենց կանանց ու յերեխաների հետ միասին»: Մի ուրիշը, վկայելով այս նանց ու յերեխաների հետ միասին»: Մի ուրիշը, վկայելով այս շարժման մասին, այսպես է նկարագրում ժողովրդի դրությունը. «ժողովուրդը ծանրաբեռնված էր գինվորական ծառայությամբ ու կարիքով, իսկ ռազմական ավարը հափշտակում էին գլխավոր հրամանատարներն ու նրանց փոքրաթիվ մերձավորները,

դականությունը: Ստրկի այսպիսի դրությանը հետևում էր վոչ միայն ստրուկների հավելյալ արդյունքների յուրացումը շահագործողների կողմից, այլև ստրկին անհրաժեշտ մթերքների յուրացումը, այսինքն՝ հանդում էր ստրկի կյանքի ոտարացման, ինչպես ասում է Մարքսը, իբրև հետևանք «...նրանց սննդի մեծագույն կոշտության և ուժաթափ անող ու անընդհատ շարժարանքների շնորհիվ, այլև գերաշխատանքից հյուժող և քնի ու հանգստի պակասությունից դանդաղորեն խոշտանգվելու հետևանքով»*):

Այս զարհուրելի շահագործումը հանգում էր ստրուկների ապստամբություններին, վորոնք բացառիկ ուժով բռնկում էին անտիկ-հունաստանում և Հռոմում, — ապստամբություններ, վորոնք ցնցեցին ստրկատիրական հասարակարգի հիմքերը: Մարուկներն այն դասակարգն էին, վորը շահագրգռված էր ամբողջ ստրկատիրական սխտեմի լիակատար վերացումով. ստրուկների պայքարը, նրանց հեղափոխությունները վերջիվերջո անտիկ աշխարհը հասցրին կործանման:

ՀԻՆ ՀՌՈՄԸ ՄԻՆՁԵՎ ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմն ստրուկների հեղափոխություններին հասավ սոցիալական յերկարատև պայքարի հետևանքով: Այս պայքարի մասին մենք տեղեկություններ ունենք արդեն Հռոմ քաղաքի հիմնվելու ժամանակներից, վոր, ըստ ավանդության, տեղի յե ունեցել 753 թվին մինչև մեր թվականը: Այսպիսով հին Հռոմը պատմական ասպարեզ է յեղում դասակարգերի բաժանված: Հռոմի սոցիալական պայքարին կարելի յե հետամուտ լինել դեռևս թագավորների ժամանակաշրջանում (753—510 թվականները մինչև մեր թվ.) Իրան հետևող թագավորական իշխանության վերացումը և 510 թվին հանրապետության անցնելն ուժեղացնում են հին յոնմական արխտոկրատիայի քայքայումը և ամբասցնում ստրկատիրական դեմոկրատիայի ինստիտուտը: Գլխեյների մասանները, վորոնք բացահայտ կռվի էին յեղել պատրիկ-

ների դեմ և յերկար ժամանակ շարունակում էին պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները, 494 թվին, վերջապես, իրավունք են ստանում ընտրելու ժողովրդական տրիբուններ և քաղաքական իրավահավասարություն են ձեռք բերում պատրիկների հետ:

Ստրկատիրական սեփականության ամբասցումը, վոր անդրադարձել է դեռևս 12-րդ տախտակների որենքներում (450 թ.), Հռոմի հետագա նվաճումները (սամնիտյան պատերազմներն՝ սկսած 343 թվից մինչև 290 թիվը) ավելի ու ավելի էին հաստատում հողատերերի և ստրկատերերի իշխանությունը: Հռոմի մղած հաջող պատերազմներից, բացի սամնիտյանը, առանձնապես պետք է նշել Տարբենտի և Պիրրոս Եպիրացու դեմ մղած պատերազմը (280—272 թ. թ.) և յերեք հուլիանոսի պատերազմները (264—146 թ. թ.), վորոնց հետևանքով Հռոմը դարձավ համաշխարհային պետություն:

Այս պատերազմներն ել ավելի մեծացրին ստրկատեր դասակարգի հարստությունները և, սրա հետ միասին, ավելի շատ քայքայեցին Հռոմի հողագործ բնակչությանը: Մանր հողատերերի հենց այս քայքայումը, վորոնք պատերազմ էին գնում և իրենց անտեսությունը թողնում բախտի քանահաճույքին, նրանց հասցնում էր խոշոր հողային սեփականատերերի կողմից ծառանանարար հավաքում էին իրենց ձեռքը: Հենց այս պետք է վերջիվերջո ստեղծեր ազրարային այն լայն շարժումը հողերի վերաբաժանման համար, վոր հայտնի յե Իտալիայի գյուղացիության գրակքոսյան շարժում անունով:

Այս շարժման ղեկավարն էր Տիբերիոս Գրակքոսը: «Իտալիայում ապրող վայրի գաղաններն էլ — ասում էր Տիբերիոս Գրակքոսը, — ունեն բուն ու վորջ, այսինչ Իտալիայի համար մարտընչող մարդիկ վոչինչ չունեն, բացի ողից ու լույսից: Նրանք անոթեան են և գուրկ են մշտական բնակավայրից՝ իրենց կանանց ու յերեխաների հետ միասին»: Մի ուրիշը, վկայելով այս շարժման մասին, այսպես է նկարագրում ժողովրդի դրությունը. «ժողովուրդը ծանրաբեռնված էր գինավորական ծառայությամբ ու կարիքով, իսկ ռազմական ավարը հափշտակում էին գլխառու կարիքով, իսկ ռազմական ավարը հափշտակում էին գլխառու վոր հրամանատարներն ու նրանց փոքրաթիվ մերձավորները,

*) Գ. Մարքս. «Մատիտալ» 1 հ. էջ 231, կուսերատ:

այնինչ զինվորներն ծնողներն ու մանկահասակ յերեսաները քշվում էին իրենց հողերից»:

Գյուղացիությունը, չնայած բազմիցս արած յերույթներին, չկարողացավ հաջողություններ ձեռք բերել իր կռիվով: Տիրերիտոս և Կայ Գրակըսները 133—123 թվականներին, Ապուլեյ Սատուրնինը 100 թվին և 90—88 թ. թ գյուղացիական պատերազմը վոչ մի բարեկամում չմտցրեցին իտալական գյուղացիության դրության մեջ: Տնտեսության ստրկատիրական սիստեմն այնքան ուժեղ եր, վոր իրենով ամուր կաշկանդում եր գյուղացիությանը: Ստրկության, առևտրի ու փոխանակության հետևանքով գյուղացիությունը շերտավորված եր: Նրանց մեջ միաբանություն չկար: Շատերը դեռ կարծում էին, թե ստրկատիրական սիստեմը գյուղացիական տնտեսության դարգացման միակ ուղին է:

Նոշոր ստրկատիրական տնտեսության գերիշխանության ժամանակ միայն մի դասակարգ կարող եր շահագրգռված լինել ահագործման ստրկատիրական սիստեմի խորտակումով, զրանք ստրուկներն էին, վորոնք կարող էին իրենց սղատությունը ձեռք բերել միայն կռվելով ստրկատիրական հասարակարգի դեմ: Փանի վոր ստրկատիրական հասարակարգի խորտակումը պետք է ազատեր նաև գյուղացիությանը, այս ստնախաղըջալներ եր ստեղծում ստրուկների ու գյուղացիության կապի դանազան, դեռևս անկատար, ձևերի համար իրենց դասակարգային յերույթներում:

Ստրուկների հետագա սպստամբությունների ժամանակ, վորոնք տեղի յեն ունեցել արդեն Հռոմեյական կայսրության ժամանակները, ստրուկներին պաշտպանում են գյուղացիները և, առանձնապես, այսպես կոչված՝ կոլոնները, կամ կիսաստրուկները, վորոնց աշխատանքն ստրկական աշխատանքի համեմատությամբ դարձավ ավելի ձեռնաու և մեծ տարածում ստացավ: Հռոմեյական կայսրության դարաշրջանի կոլոնատի, իբրև կիսաստրկական, կիսաճորտատիրական աշխատանքի դարգացման վրա բազմիցս նշել է Ենգելը: Այս պրոցեսի վերջում ստրկատիրական լատիֆունդիաներին փոխարինեց մանր տնտեսությունը, վոր դարձավ իրեն արդարացնող միակ ձևը: Հողատերերն իրենց հողերը հանձնում էին մանր պարցեչներով (հողակտորներով) կոլոններին, վորոնք ամեն տարի նրանց վճարում էին վորոշակի գումար: Կոլոնները,

վոր ստրուկներ չէին համարվում, միաժամ մանակ ազատ էլ չէին. նրանք ամբացված էին հողին և կարող էին վաճառվել պարցեչների հետ միասին: Սրանք միջնադարյան ճորտերի նախորդներն էին:

Կոլոնները հաճախ իրենց հարստահարողներից փախչում էին գերմանացիների մոտ, վորոնք ապրում էին Հռոմեյական կայսրության սահմաններում և, միանալով նրանց հետ, հանդես էին գալիս Հռոմեյական կայսրության և ստրկատիրների գերիշխանության դեմ:

Հետագա շարադրանքով մենք մանրամասն կանդ կանենք այն բանի վրա, թե ինչպես իրականացավ ստրուկների ու գյուղացիության այս կապը: Մի բան պետք է արդեն այժմ նշել, վոր 1) ստրկատիրության դեմ կատարված բոլոր յերույթներում նախաձեռնությունը պատկանում եր ստրուկներին, վորոնք բացահայտրեն հանդես էին գալիս հեղափոխության ուղու վրա, 2) ստրուկները և գյուղացիները կապն առաջին հեղափոխություններում բավարար չեց, վորը և վորոշեց ստրուկների հեղափոխության յիլքը նրա առաջին ետապում:

Բայց հեղափոխության այս ետապը վեթխարի նշանակություն ունի ստրուկներին նոր հեղափոխությանը պատրաստելու համար, վորը 4-րդ և 5-րդ դարում արդեն սերտորեն ստրուկներին կապում է գյուղացիության ու գերմանական հարստահարված ցեղերի հետ և հասցնում «աշխատավորները շահագործման ստրկատիրական ձևի վերացմանը» (Ս ա ա լ ի ն):

Հռոմեյական կայսրության այսպես կոչված գերմանական նվաճումը մեծ գեր իազաց հենց այն իմաստով, վոր նա հանդիսացավ ստրկատիրական հասարակության մեջ դասակարգային տեսական պայքարի յիզրափակման ետապը: Այս տեսակետից Հռոմի նվաճումը գերմանացիների կողմից մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները պատկերացնում են վոչ թե ուղղակի նվաճում, այլ, ավելի շուտ, գերմանացիների վեթխարի սպստամբություն ստրուկների ու կոլոնների հետ միասին, վոր սկսվել է հռոմեյական նահանգները ծայրամասերում իբրև փոքրիկ բուռտեր և այնուհետև աճել ու դարձել ընդհանուր արշավանք Հռոմի վրա:

Հռոմի 410 թվի (մեր թվակ.) անկումով մենք կարող ենք սոցիալական հեղափոխության այս հասուել ձևը համարել ավարտ

ված: Այս հեղափոխութեան հետևանքով հին Հոռմի ստրկատիրական հասարակութունը յեկավ փոխարինելու ֆեոդալների, իշխանիկների տիրապետութեանը, այսինքն՝ տեղի ունեցավ անցում դեպի ավելի բարձր տնտեսական ֆորմացիան, դեպի ֆեոդալիզմը:

Բայց ստրուկների այս հաղթական հեղափոխութեան իրականանալուց առաջ անհրաժեշտ էր նրանց տեսական, համառ ու հերոսական պայքարն ամբողջ հարյուրամյակների ընթացքում ընդդեմ ստրկատիրական հասարակակարգի ու մի խումբ ստրկատերերի կեղեքման: Գրքիս թեման ել հենց այս պայքարի պատմութեանն է:

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՎԱՂ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՌՈՄՈՒՄ

Ստրուկների պայքարն ստրկատերերի դեմ, վոր բղխում է անտիկ հասարակութեան հիմնական դասակարգային հակասութեանից, լուսաբանված է շատ կցկտուր ու միակողմանի: Բուրժուական պատմաբանները լավագույն դեպքում սահմանափակվում են հին հեղինակների հաղորդած փաստերի առավել կամ պակաս մանրամասն վերապատմութեամբ: Մեր խնդիրն այն է, վորպեսզի փորձենք լուսաբանել Հոռմի ստրուկների պայքարի ընթացքն ու զարգացումը վոչ թե մեկուսացած, այլ այն կապերով ամբողջ հասարակութեան դասակարգային պայքարի հետ:

Չնայած նյութի լրիվ չլինելուն, նրա միակողմանի լուսաբանութեանը հին ժամանակների դասակարգայնորեն նախապաշարված պատմաբանների կողմից, մենք այնուամենայնիվ կարող ենք հավաստել, վոր հին Հոռմի ստրուկների ապստամբութեանները զարմացնում են իրենց վիթխարիութեամբ, արտասովոր հզորութեամբ, տարածման մասշտաբով և իրենց մասսայականութեամբ: Թերևս կարելի լինի ասել, վոր այս ապստամբութեանները տալիս են կազմակերպման որինակներ, պայքարը հետևողականորեն մինչև վերջ հասցնելու որինակ: Հոռմն ավելի, քան հին ժամանակների վորևե ուրիշ յերկիր, ցույց տվեց կեղեքված ստրուկների առաջնորդների հերոսութեանը: Սպարտակի, անտիկ պրոլետարիատի այս մեծ ներկայացուցչի, կողքին այստեղ կարելի չէ առաջ մղել մի ամբողջ շարք հերոսներ, վորոնք կարո-

ղացել են տալ ժողովրդական մասսաների հարստահարիչների դեմ քաղաքացիական պատերազմ կազմակերպելու գարմանահրաշ որինակներ:

Ստրուկները յերկար և համառորեն պատրաստվել են Հոռմում մասսայական մեծ յելույթներին: Սկզբում պայքարն այստեղ, ինչպես և մյուս յերկրներում, անցնում էր առանձին բռնկումներով, մանր ապստամբութեաններով:

Հարկավոր է նկատի ունենալ, վոր ստրուկների պայքարն ստրկատերերի դեմ ամբողջ ժամանակ ղուգահեռաբար էր ընթանում հենց իրենց՝ ստրկատերերի շրջանում տեղի ունեցող սոցիալական պայքարին:

Մեզ հայտնի ամենավաղ ապստամբութեան մասին (5-րդ դար մինչև մեր թվ.) մենք շատ քիչ բան գիտենք: Հոռմեյական աննալիստները (այսինքն՝ ժամանակագիր-պատմաբանները, վոր անցքերը նկարագրում եյին տարեցտարի), վորոնք պատմել են մինչև մեր թվականութեան 5-րդ և 4-րդ դարերի և ավելի վաղ դարաշրջանների անցքերը, հենց իրենք հուսալի նյութ չեն ունեցել իրենց յարոնիկաների համար. դրանք կազմում եյին ըստ տոհմական արիստոկրատիայի գերդաստանային զբանցումների, ամեն տեսակ ավանդութեանների և այլն: Այս պատճառով մեր աղբյուրներում հիշատակած ստրուկների առաջին ապստամբութեան մասին մենք միայն յենթադրաբար կարող ենք ասել, վոր այն սերտ կապ ուներ այն ժամանակաշրջանի դասային պայքարի սրման հետ, վոր մղվում էր հողատեր պատրիկների և պարտքերով ծանրարեռնված պլեբեյների մասսայի միջև:

Այս առաջին ապստամբութեան մոմենտին հոռմեյական տոհմային համայնքն արդեն քայքայվում էր: Պայքարը սակավազոր գյուղացիութեան և խոշոր հողատերերի միջև, վոր ցույց է տալիս, թե վորքան հեռու յե գնացել դասակարգային շերտավորումը, ավելի ու ավելի սուր ձևեր էր ընդունում: Նրա սրմանը նպաստում էր զարգացող ստրկութեանը և ստրկական աշխատանքի աճող կիրառումն արտագրութեան բոլոր ձյուղերում, վորն ամբացնում էր ստրկատերերի դիրքերը և թուլացնում սակավազոր գյուղացիութեան զրութեանը, վորը պրոլետարացման հետևանքով կանչնած էր ստրկացման ճանապարհին:

Ստրուկների քանակի մեծացումը, նրանց համախմբումը և

առանձնապես այնպիսիների դժգոհութեան անուամբ, վորոնք զեզ-
 յերեկ ազատ եյին և նստած իրենց մանր հողաբաժինների վրա,—
 նախապատրաստեցին հոռմեյական պատմութեանից շատ թե քիչ
 արժանահավատ կերպով հայտնի առաջին ապստամբութեանը: Հին
 պատմաբաններ Տիտոս Լիվիոսի և Դիոնիսիոս Գալիկարնասցու տե-
 դեկութեաններով, ապստամբութեանն սկսվեց բուն Հռոմում 419
 թվին, մեր թվակ. առաջ: Ստրուկները մի փոքրիկ խումբ մշակեց
 ապստամբութեան պլանը: Սկզբում վճոված եր զիշերն ամեն
 կողմից այրել Հռոմը և այսպիսով ազդանշան տալ Հռոմի ստրուկ-
 ների ընդհանուր յերույթին: Այնուհետև, խառնաշփոթութեան
 ժամանակ պետք է գրավվեր Հռոմի կենտրոնը՝ Կապիտոլին և
 նրա ամրոցը, վորից հետո ստրուկները մտածում եյին, վերջա-
 պես, հաշիվ տեսնել իրենց տերերի հետ, նրանց բոլորին սպանել
 և, գրավելով նրանց գույքն ու կանանց, այս բոլորը բաժանել
 միմյանց միջև: Բայց այս դավադրութեանը, ինչպես մենք գի-
 տենք, չհաջողվեց. ստրուկների մեջ դավաճան գտնվեց, վորը
 մատնեց նրանց: Նախաձեռնողները բռնվեցին և կախվեցին:

Ավելի ուշ (3-րդ դ. վերջում և 2-րդ դարում մինչև մեր թվ.)
 ստրուկների յերույթներն սկսում են ավելի մասսայական ու
 ավելի կազմակերպված բնույթ կրել և 1-ին դարում, մեր թվակա-
 նից առաջ իրենց գազաթնակետին են հասնում: Սպարտակի
 վիթխարի ապստամբութեան մեջ:

Սկսած 3-րդ դարից, ստրուկների շարժման անունն ընթա-
 նում է հոռմեյական ազատ քաղաքացիների և իտալիկների (քա-
 ղաքացիական իրավունքներ չունեցողների) բուն հասարակու-
 թեան ներսում սոցիալական ներհակութեանների անման հետ
 միաժամանակ: Բացի դրանից, այս զուգադիպում է պոնտիկյան
 յերկարատև պատերազմների շրջանին, վորոնց հետևեցին պատե-
 րազմներն արևելքում՝ Մակեդոնիայում, Սիրիայում, Հունաստա-
 նում, զուգորդվեցին հոռմեյական պետութեանը նորանոր տերի-
 տորիաներ միացնելու հետ, իբրև «ծայրագավառներ», այսինքն
 մարզեր, վորոնք հարստացման աղբյուրներ եյին հանդիսանում
 հոռմեյական բարձր դասի—սենատորների ու ձիավորների հա-
 մար: Հարստութեանների կուտակումն այս բարձր դասի ձեռքում
 կողոպտիչ պատերազմների միջոցով ընդգեմ Արևելքի տնտեսա-
 պես հարուստ և կուլտուրապես ավելի զարգացած հելլենիստա-

կան պետութեանների, փողով և բնաբերքով միջոցներ կորզելը
 ծայրագավառներից, նվաճումների հետևանքով առևտրական փո-
 խանակութեան մեծացումը Միջերկրական ծովի ավազանում—
 այս բոլորն ստրկատիրութեան անման հետ միասին ծայրահեղ չա-
 փով սրում եր դասակարգային հակասութեանները, մի կողմից՝
 խոշոր ու մանր հողատերերի և, մյուս կողմից՝ փողատեր բարձր
 դասի (ձիավորների) և հողատեր արիստոկրատիայի (սենատոր-
 ների) միջև: Սրա հետ միասին քաղաքական իրավունքների և
 նրանց հետ կապված նյութական ոգուտների անհամաչափ բաշ-
 խումը Հռոմի քաղաքացիների ու իտալիկների միջև, վորոնք բո-
 յոր պատերազմներին հոռմեյական քաղաքացիների հետ մասնակ-
 ցել եյին կողք-կողքի, էլ ավելի բարդացրին ընդհանուր դասա-
 կարգային պայքարը Հռոմում: Այս ժամանակաշրջանում (2—1-ին
 դարեր մինչև մեր թվակ.) այս պայքարի ընթացքից կախված և
 նրա աղբյուրութեամբ մենք տեսնում ենք ստրուկների ապստամ-
 բութեանների զարգացման հետագա փուլը:

217 թվին, պոնտիկյան յերկրորդ պատերազմի շրջանում,
 վոր առանձնապես համառ ու վղանդավոր եր Հռոմի համար, Տի-
 տոս Լիվիոսի տեղեկութեաններով (մինչև մեր թվակ. 1-ին
 դարի վերջի և մեր թվակ. 1-ին դարի սկզբի հոռմայեցի
 պատմաբան), բուն Հռոմում հայտարարվել է ստրուկների դավա-
 դրութեան: Յենթադրութեան կա, վոր այս ապստամբութեան
 կազմակերպիչն է յեղել վոմն կարթագենացի, վոր այն ժամա-
 նակ մոտ յերկու տարի ապրել է Հռոմում, յերբ կարթագենի ղեմ
 պատերազմ եր մղվում: Դավադրութեանը բացվեց մի դավաճան
 ստրկի մատնութեամբ, վորը սրա համար ազատվեց ստրկութեան-
 նից և գրամական մեծ պարգև ստացավ:

Դավադրութեան կազմակերպիչը բռնվեց և ձեռքերը կտրված
 արտաքսվեց կարթագեն, իսկ Մարսյան դաշտում բռնված 25
 դավադիր ստրուկները կախվեցին խաչերի վրա: Հավանաբար
 այս դավադրութեան մեջ մասնակցել են ավելի մեծ թվով ստրուկ-
 ներ, բայց մնացածներին չի հաջողվել հայտարարել:

Մի քանի տարի հետո, 198 թվին, հենց Հռոմի մոտ, Սեսի
 քաղաքում, ինչպես հաղորդում է Տիտոս Լիվիոսը, պատրաստվում
 եր ստրուկների նոր յերույթ: Այս քաղաքում շատ պատանդներ
 կային կարթագենյան բարձր դասից, վորոնք վերցված եյին

տպահովելու համար դրանից քիչ առաջ Հոռմի և Կարթագենի միջև կնքված խաղաղությունը: Բացի սրանից, Սեաթուս և Հոռմին մտախի ուրիշ քաղաքներում տեղավորված ելին շատ ստրուկներ, նախկին զինվորներ և Կարթագենի բնակիչներ, վորոնք բռնված ելին պատերազմում իբրև գերիներ: Այս ստրուկներին մեջ կարթագենացի պատանդներն սկսեցին ազիտացիա վարել ազատագրության համար: Ապստամբության մանրամասն մշակված պլանն ամենից ատաջ միավորում եր կարթագենացի ստրուկներին իբրև մի ազգության մարդկանց, վորոնք բնդհանուր լեզվի շնորհիվ հեշտությամբ համաձայնության ելին գալիս միմյանց հետ, բայց այս դավադրության մեջ, ըստ յերևույթին, մասնակցում ելին նաև ուրիշ ազգությունների ստրուկներ, վորովհետև դավադրությունը միավորում եր մի քանի քաղաքների ստրուկների:

Դավադրության պլանով ստրուկների ապստամբությունը պետք ե տեղի ունենար Հոռմին մտախի գտնվող հետևյալ քաղաքներում. Սեաթի, Նորբա, Յերցեյ և Պրենեստա: Նշված եր նույնիսկ յերևյթի սրբ: Սեաթում պետք ե բացվեր մեծ տոնակատարություն՝ հասարակական խաղերով և թատերական ներկայացումներով, վորտեղ պետք ե հավաքվեյին նաև մերձակա քաղաքների բնակիչները: Դավադիրները վճռեցին ողովել այն բանից, վոր բնակիչների ուշադրությունը գրավված կլինի խաղերով, և գրավել Սեաթի, Նորբա, Յերցեյ և Պրենեստա քաղաքների կենտրոնն ու ամրացրած վայրերը: Դավադրության կենտրոնը Սեաթումն եր, և այնտեղից ապստամբության կազմակերպությունն իր ներկայացուցիչների միջոցով գործում եր ուրիշ քաղաքներում: Բայց այս անգամ ել ապստամբությունը չհաջողվեց, վորովհետև դավադիրներից յերկու հոգի դավադրությունը մատնեցին քաղաքի պրետոր Կոնսելլիոս Լենտուլին: Ստրկատերերն անսկարագրելի յերկյուղ ելին կրում ապստամբությունից, և շտաղ գումարված սենատը Լենտուլին արտակարգ լիազորություններ արամագրեց և հանձնարարեց զաժան հաշվետես կապարել խոռվարներին հետ: Լենտուլն անհապաղ հավաքեց 2 հազար հոգուց կազմված մի զորամաս և գնաց Սեաթի պատժելու համար: Ապստամբության ղեկավարների հետ միասին բռնվեցին և մահա-

պատժի յենթարկվեցին դավադրության մեջ կասկածելի մոտ 2 հազար ստրուկ:

Թվում եր, թե խոռվությունը վերջնականապես ճնշված ե: Սակայն այդ այգպես չեր, հենց վոր Լենտուլը պատժելուց հետո գնաց Հոռմ, լուր յեկավ, վոր ապստամբության վողջ մնացած ղեկավարները պատրաստվում են գրավելու Պրենեստան: Լենտուլը նորից ուղարկվեց պատժելու, վորից հետո մահապատիժ արվեց 500 հոգու:

Ստրկատերերը մորեխիզացիայի յենթարկեցին բոլոր միջոցները՝ ապստամբությունը ճնշելու համար, բայց ստրուկները, ժամանակավորապես հանդուստանալով այստեղ, սկսեցին նոր յերևյթի պատրաստվել մի ուրիշ տեղ:

Յերկու տարի հետո վորտե յելան Ետրուրիայի՝ Հոռմից հյուսիս գտնվող մարդի, ստրուկները, վորտեղ գերակշռում եր խոշոր հողատիրությունը և նրա հետ կապված շահաշորժման ստրկատիրական ձևը: Ապստամբությունն ընդգրկեց ամբողջ մարզը, այնպես վոր խոռվարարներին պատժելու համար Հոռմն ստիպված եր ուղարկել մի ամբողջ լեգիոն զինվոր: Թեև ապստամբությունը բավականաչափ կազմակերպված ել չեր, սակայն ապստամբները կատաղի զիմադրություն ցույց տվին ճնշելու համար յեկած հռոմեական զորքերին: Սկսվեց կատաղի ճակատամարտ, վորտեղ մի դասակարգը կանգնած եր մյուսի դեմ: Տխոս Լիվիոսն այսպես ե նկարագրում այս ճակատամարտը. «Մեծ եր սպանվածների թիվը, քիչ չեյին նաև գերի բռնվածները: Կովի մեջ բռնված ապստամբության պարագլուխները տանջանքների յենթարկվեցին և խաչվեցին խաչերի վրա, մնացածները վերադարձվեցին իրենց տերերին՝ համապատասխան պատիժ կրելու համար»: Բայց ստրկատերերը դեռ չեյին վերջացրել մի ապստամբության պատժումը, յերբ մի այլ տեղ հասունանում եր ստրուկների արդեն նոր յերևյթ, վորը մի տեսակ պատասխան եր նախընթաց ապստամբության ճնշմանը:

Համարյա տաս տարվա ընթացքում (192-ից մինչև 182 թիվը) Իտալիայի հարավում, Ապուլիայի, Լուկանիայի և Կալաբրիայի մարզերում տեղի յեն ունենում անընդհատ ապստամբություններ: Այս մարզերում լատիֆունդիսալ հողատիրության աճումը և անտանապահության զարգացումը հանգեցին մեծ թվով

Ստրուկների հեղափոխությունը—2

637
37



ստրուկների ոգտագործմանն իբրև հովիվների: Այս հովիվները հոտերի հետ միասին թափանկելով Իտալիայի հարավի լայնար-
ձակ դաշտերում, մշտապես պատրաստ էյին առաջին կոչով հան-
դես գալու իրենց կեղեքիչների և հարստահարիչների դեմ: Հա-
ճախ նրանք քշում էյին իրենց տերերի անասունները և լու-
ներում թագնված՝ կողոպուտով էյին զբաղվում մեծ ճանապարհ-
ների վրա: Տաս տարվա ընթացքում հոռմեյական սենատն ամեն
տարի մեկը մյուսի հետեից եքսպեդիցիաներ եր ուղարկում
Իտալիայի հարավային կողմերը՝ ստրուկների յեյուլթները ճըն-
շելու համար: 185 թվին ապստամբությունն այնպիսի շափերի
հասավ, վոր հոռմեյական պրետոր Լուցիոս Պոստումին ստիպված
եր ինքը մեծ զորքով այնտեղ ուղեվորվելու: Տարենտի շրջանում
նա բացեց դավադրության կենտրոնը և սկսեց ապստամբության
լիկվիդացիան: Բռնվեց մոտ 7 հազար ստրուկ: Նրանցից շատերը
դատապարտվեցին և մահապատժի յինթարկվեցին: Փախած և
թագնվել կարողացած ստրուկները կրկին շարունակում էյին
պատրաստվել յեյուլթների և ամեն տարի անհանգստացնում
էյին ստրկատիրական Հոռմին:

Կեղեքված մասսաների կազմակերպությունն առանձնապես
ուժեղ եր Իտալիայի հարավում. այնտեղ նա գոյություն ունեը
մինչև մեր թվականության 357 թվից և հանդիսանում եր կրո-
նական միության նման մի բան՝ նվիրված Իրոնիսիոս-Բաքոս
աստծուն: Նրա ղեկավարներն սկզբում հույներ էյին, վորոնք
միավորում էյին վոչ միայն հարավային իտալական ստրուկնե-
րին, այլև իրենց ազգեցության շրջանի մեջ էյին առնում Սի-
ցիլիա կղզում կենտրոնացած հունական և փոքր-ասիական ըստ-
րուկներին:

ՍԻՑԻԼԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԳԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՊԱՏՈՒՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ստրուկների վերև նշված բոլոր ապստամբություններն այն
նշանակությունն ունեն մեկ համար, վոր նրանք հանգիստ-
նում էյին մի յուրատեսակ նախերգանք Միցիլիայի ստրուկների
մասսայական ապստամբության, վորը տևեց հինգ տարի (137-ից
մինչև 133 թիվը): Միցիլիայի ստրուկները, ինարկի, զիտեյին,
թե ինչ և կատարվում իտալական ցամաքում: Ապստամբություն-
ների լուրերը նրանց բերում էյին այն ստրուկները, վորոնք
ելուլթներին մասնակցելու համար մասսայորեն աքսորվում էյին
Միցիլիայի հուշակավոր քարհանքները՝ Սիրակուզի մոտ, և վորոնք
իրենց հետ Միցիլիա բերեցին հարստահարիչների դեմ մղած
իրենց նախկին պայքարի փորձը:

Միցիլիայի ստրուկները հուշակավոր յեյուլթի, վորը հայտնի
է սիցիլիական առաջին ապստամբություն անունով, գլխավոր
պատճառներից մեկն ստրուկների բացառիկ ծանր գրությունն եր:

Իր աշխարհազրական դիրքի շնորհիվ Միցիլիան միջնորդի
դեր եր կատարում Միջերկրական ծովի արևմտյան և արևելյան
յերկրների առևտրի զարգացման մեջ: Այս պատճառով այնտեղ
վաղ գոյացան հին աշխարհի մի շարք մեծ քաղաքներ, առևտրա-
ստրկատիրական կենտրոններ: Հունական հողային մաղնատ-
ները, հոռմեյական փողատեր արխատիրատները, կարթագենի
վաճառականներն ու վաշխատուները, — սրանք բոլորն ել այստեղ
ունեյին յեկամտարեր գործեր և ձեռնարկություններ: Միցիլիան
աչքի յեր ընկնում նաև իր ընական հարստություններով: Այս-
տեղ առատորեն կային հողագործության համար հարմար հար-
թավայրեր, իտալի հարուստ այգիներ ու ձիթապղի պուրակ-

ներ և մարմարի ու ձյունափայլ քարի՝ հին ժամանակների այս շինանյութի, մեծ պաշարներ: Միցիլիայի ամենագլխավոր ձեռնարկութիւններն էլին գլուղաանտեսական լատիֆունդիաներն ու հանքերը՝ Միրակուղի քարհանքների շրջանում, վորտեղ կուտակվում էլին Միջերկրական ծովի զանազան յերկրներից բերված ստրուկների հսկայական մասաններ: Ստրկատիրական սիստեմն այստեղ առաջացավ և լայնորեն զարգացավ վաղ ժամանակներից, դեռևս Միցիլիան Հոմերի կողմից նվաճվելուց առաջ:

Միցիլիայում ստրուկները գտնվում էլին առանձնապես ծանր դրութիւն մեջ: Ահա թե այս մասին ինչ է գրում հին պատմաբան Դիոդոր Միցիլիացին. «Յերկար ժամանակ հարստանալով և խոշոր հարստութիւններ ձեռք բերելով, սիցիլիացիք բազմաթիւ ստրուկներ էլին գնում: Ստրուկներին բազմութեամբ դուրս տանելով անկարաններից, նրանք իսկույն նրանց խարանում էլին և զրոյնում: Յերիտասարդ ստրուկներին նրանք սգտագործում էլին իբրև հովիվներ, իսկ մնացածներին՝ ինչպես վոր յուրաքանչյուրին պետք էր: Տերերը նրանց ծանրաբեռնում էլին ծառայութեամբ և շատ քիչ էլին հող տանում նրանց սնման և հագուստի մասին: Ուստի ստրուկների մեծ վասն ապրում էր կողոպուտով, և մասսայական չափերով սպանութիւններ էլին լինում, կարծես թե ավազակների մի վողջ բանակ լինելով՝ ցրված ամբողջ կղզու վրա: Հոմերական պրետորները, զրգված ստրկատերերի ուժի և ազդեցութեան նկատմամբ ունեցած հարգանքից, վորոնց պատկանում էլին ավազակ ստրուկները, չէլին համարձակվում պատիժների դիմելու ստրուկների վերաբերմամբ, ուստի և ստիպված էլին թույլ տալ, վոր գավառները կողոպտվեն: Ստրուկների այսպիսի դրութիւնը հաճախ հարկադրում էր նրանց գոյութեան միջոցներ հայթաթել կողոպուտով, յերբեմն իրենց իսկ ստրկատերերի հովանավորութեամբ, վորոնք այսպիսով ազատվում էլին ստրուկներին պահպանելու, նրանց սնունդ ու հագուստ տալու պարտականութիւնից:

Ստրուկների դրութիւնն էլ ավելի ծանրացավ նրանց մասսայական կերպով Միցիլիայում կուտակելու հետևանքով: «Ստրուկների այսպիսի քանակը, — ասում և Դիոդոր Միցիլիացին, — այնպես հեղեղեց ամբողջ Միցիլիան, վոր այս մասին լսողները չէլին հավատում և սա համարում էլին չափազանցութիւն»: Ստրուկ-

ների այսպիսի կուտակումը, նրանց ծայրահեղ ծանր դրութիւնն արտադրութեան մեջ և կենցաղում, տերերի մշտական կեղեքումը չէլին կարող բացառիկ լարված դրութիւն չտեղծել: Բավական էր մի կայծ, վորպեսզի ապստամբութեան հրդեհի բոցն ընդգրկեր ամբողջ կղզին, Միցիլիայի բոլոր քաղաքներն ու գյուղերը: Այսպիսի կայծ գցեց սիցիլիական խոշոր մագնատ և ստրկատեր Դամոֆիլը, վոր իր կնոջ՝ Մեգալլիդայի հետ միասին վոչ մարդկային տանջանքների յեր յենթարկում ստրուկներին: Ահա, թե ինչ է հաղորդում մեզ այս մասին Դիոդոր սիցիլիացին. «Մեծ քանակութեամբ ստրուկներ գնելով, Դամոֆիլը նրանց հետ դաժանորեն էր վարվում, շիկացած յերկաթով խարանում էր նրանց մարմինը, ովքեր ազատ էլին ծնված իրենց հայրենիքում, բայց կրում էլին գերութեան և ստրկութեան ծանրութիւնը: Վոմանց նա շղթայված ուղարկում էր ընդհանուր աշխատանքների, մյուսներին հովիվ էր նշանակում, բայց նրանց վոչ հագուստ էր տալիս, վոչ էլ բավականաչափ սնունդ: Չեր անցնում մի ուր, վոր Դամոֆիլն իր ինքնիշխանութեամբ ամենաշնչին հանցանքների համար տանջանքների չենթարկեր իր ծառաներից միքանիսին: Նրա կին Մեգալլիդան, հրճվելով ընտիր պատիժներով, պակաս դաժանութեամբ չէր վերաբերվում իր կին ծառաների և իր ծառայութեանը հանձնված ստրուկների հետ: Վերավորանքների ու տանջանքների պատճառով ստրուկները կատարելապես գազանացան իրենց տերերի հանգեղ ունեցած ատելութեամբ՝ վճռեցին, վոր իրենց կրած տանջանքներից ավելի վատ բան իրենց հետ չի գատահի...» Այսպես, հուսահատութեան հասցված, կորցրած ամեն մի համբերութիւն, Դամոֆիլի ստրուկներն առաջինը դիմեցին ապստամբութեան: Դավաղիրների մի խումբ իր շուրջը հավաքեց մոտ 400 գլուղական ստրուկ և գիշերը գնաց հայցելու աստվածների կամքը:

Դավաղրութիւնը նախապատրաստելու մեջ զգալի դեր խաղաց Յեֆլոս սնունով սիրիացի մի ստրուկ, վոր տնային ծառայութեան մեջ էր գտնվում Ննոս քաղաքի բնակիչներից մեկի մոտ: Յեֆլոսը մարգարեյի և կախարդի համբավ ուներ: Նա կարողանում էր զանազան ֆոկլուսներ անել, որինակ, կարող էր կրակ թափել բերնից, զուշակում էր ապագան և սրանով մեծ հռչակ էր ձեռք բերել ստրուկների մեջ: Վորովհետև սիցիլիայում

զլխավորապես սիրիական ծագում ունեցող ստրուկներն էյին, ապա սերբացի Յեվնոսի համար դժվար չէր հեղինակություն նվաճել իր ցեղակիցներին մեջ: Բացի սրանից, սիրիացիք ընդհանուր կրոն ունեյին, վորն այս դարաշրջանում, զխառնեցության ցածր մակարդակի ժամանակ, ամուր համախմբում եր մարդկանց և հաճախ ասիթներ կը ստեղծուէ ժողովրդական շարժումների կամ նույնիսկ ամբողջ ապստամբությունների համար: Այսպես եր և ալյալ զեպքում: Դավադիրները զիմեցին իրենց ցեղակից Յեվնոսին՝ հավանություն ստանալու դավադրության պլանի համար: Յեվնոսը հաստատեց դավադրությունը, դավադիրներին հայտարարելով, թե աստվածներն կամքն ստրուկներն կողմն ե: Նա նույնիսկ զլխավորեց ստրուկներին, վորոնք, վորեվորված, ներխուժեցին Ննա և տաւշին հերթին սկսեցին կոտորել ըսարկատերերին և սպառել կեղեքվածներին: Դամոֆիլն ու իր կինը բռնվեցին պարսեղում, զրոտանքի ժամանակ: Դամոֆիլին սպանեցին ամբողջ ժողովրդի առջև, իսկ նրա կին Մեզալիդան հանձնեցվեց իր նախկին ստրուկներին, վորպեսզի նրանք նրա հետ վարվեն իրենց ցանկությամբ: Իսկ իր սեփական տերերին Յեվնոսն սպանեց իր ձեռքով:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԸ

Դասակարգային ատելությունը շահագործողների հանդեպ արտահայտվեց մասսայական տեսողով, բայց ստրուկները կուրորեն դաժան չեյին իրենց ատելությամբ: Ստրկատիրական կուրտուրայի ներկայացուցիչ հին գրողները սովորաբար ստրուկներին ներկայացնում էյին իբրև բարբարոսների՝ գաղանային հողով, անընդունակ աղնվության և մարդասիրության: Սակայն նույն Դիոգոր Միցիլիացին ստեղծված եր միքանի որինակ բերելու հաղթող ստրուկների մարդասիրական վերաբերմունքից զեպի այն ստրկատերերը, վորոնք իրենց ստրուկների նկատմամբ ցուցաբերել էյին մարդկային վերաբերմունքի գեթ մի կայծ: Դիոգոր Միցիլիացին ասում ե, վոր Դամոֆիլն ստրուկները ձեռք չառլին նրա ազկկանը Վնրա մարդասիրության և նրանց ցավակցելու համար: Իսկ Յեվնոսը, վոր իր սեփական ձեռքով սպանել եր իր տերերին և Ննայի շատ ստրկատերերի, ինայից զրանցից նրանց,

ովքեր հյուր լինելով իր սիրոջ մոտ, մեղմ և ներողամտաբար են վարվել Յեվնոսի հետ:

Ստրուկները ըստմաթիվ զեպքերում ցուցաբերել են մարդասիրություն, խոհականություն, զգաստ տեսակետ ապագայի վերաբերմամբ: Ի միջի այլոց, ապստամբության առաջնորդ Յեվնոսը հրամայեց կենդանի թողնել զինագործ վարպետներին, վորոնք շղթայակապ ուղարկվեցին արհեստանոցները՝ զենք պատրաստելու համար: Ապստամբների զինման գործի պլանաչափ կազմակերպուէր վորքի յեւած ստրուկների առաջնորդի ուշադրության առարկան եր: Այնուհետև, իրենց տերերի խոշոր կալվածքները խորտակող ստրուկները ձեռք չեյին տալիս մանր վելաներին, չեյին վոչնչացնում վոչ նրանց գույքը, վոչ ել մանր արտադրողներին: Այս յերևույթից, ի միջի այլոց, կարելի չե յենթադրել, վոր ստրուկներն ստրկատերերին հաղթելուց հետո մտածում էյին իրենք վերադառնալ այսպիսի մանր ազրարային հարաբերությունների, բայց այս մասին մենք միայն յենթադրություններ կարող ենք անել: Շարժման ծրագրային դրույթները բնութագրելու համար, յեթե միայն այդպիսիները կային, այս մոմենտն արժանի չե առանձին ուշադրության, մանավանդ, վոր այսպիսի դրույթ եր պաշտպանում, ինչպես մենք գիտենք տղբյուրներից, Միցիլիացի հասարակ ժողովուրդը, այսինքն՝ մանր հողագործները:

Ննում իրենց հաջող յելույթից հետո ստրուկներն սկսեցին իշխանություն կազմակերպել: Յեվնոսը թագավոր ընտրվեց և ըստացավ Անտիոքոս անունը: Վեր սիրիական թագավորությունը», Անտիոքի թագավորությունը հայտարարելով ստրուկներն իրենց նասարակակարգը հակադրում էյին հռոմեյական կարգերին և վերականգնում միապետությունը, այսինքն այսպիսի հասարակարգ, վոր նրանք ունեյին իրենց մոտ՝ Արևելքում: Թագավորին կից ընտրվեց խորհուրդ, վորի մեջ մտան Վերենց խելքով ամենից աչքի ընկնող ստրուկները: Բացի սրանից, զինված ուժերին և ուղեմական գործողությունները զեկավարելու համար կարգվեց լավագույն հրամանատար, ծագումով հույն Աքեոսը: Աքեոսն արագորեն կարողացավ մեծ դորք հավաքել և հաջողությամբ հետ մղեց ապստամբ ստրուկներին զեմ ուղարկված հռոմեյական յեպեոնների շարժակումը:

Եննում կատարված յելույթի հաջողությունը չէր կարող

չանգրադատնալ ամբողջ Միցիլիայի վրա: Միցիլիայի մեծ քաղաքներն աչրվում ենին հեղափոխութեան կրակով: Եննից հետո շուտով, Միցիլիայի հարավ-արևմտյան մասում՝ Ազրիդենտ քաղաքում առաջացավ մի ուրիշ հեղափոխական ուղի: Ստրուկների ապստամբութեան այս կենտրոնի գլուխ կանգնեց կիլիկիացի Կլեոնը, վոր հավաքեց 5 հազար հողուց կազմված բանակ: Ստրկատերերը հուսով էյին, վոր ապստամբների մեջ պատակտիչ պատերազմ կսկսվի, վորը կթուլացնի նրանց ուժերը, բայց նրանք սխալվեցին: Կլեոնը մեկնեց Եննա, կամավոր կերպով յինթարկվեց Յեփլուսին, և ստրուկների միացյալ բանակներն սկսեցին իրենց հռչակավոր հաղթական արշավանքները հռոմայեցիների դեմ:

Ստրուկների միացյալ բանակն ամենից առաջ Չախճախեց հռոմեյական այն զորքերին, վոր դործում էյին Հոմից յեկած պրետոր Լուցիոս Դիպսեյի հրամանատարութեամբ: Սրանից հետո ստրուկների ձեռքն անցան Միցիլիայի համարյա բոլոր խոշոր կենտրոնները՝ Տավրոմենին, Ազրիդենտը, Մեսսանան և Կատանան: Ապստամբների բանակն այժմ հասնում էր մինչև 200 հազար հոգու: Հարստահարիչները իշխանութեանը տապալած ըստրուկները ներ գարձան համարյա ամբողջ Միցիլիա կղզուն:

Պատմաբան-տնտեսագետ Բյուխերի յենթադրութեաններով, Միցիլիայի ստրուկների շարժումը շարունակվեց մոտ 10 տարի: Ուրիշ պատմաբաններ այս ժամկետը վորոշում են 5 տարի: Դժվար է ասել, թե նրանցից վորն է ավելի իրավացի, բայց անհրաժեշտ է նշել, վոր հին գիտութեանը, վոր չեր գրադվում ստրուկների հեղափոխութեան ուսումնասիրութեամբ, ավելի շուտ կարող էր կրճատել ապստամբութեան ժամկետները: Հաղիվ թե կարելի լինի բուրժուական լուրջ գիտնական Բյուխերին կշտամբել այն բանի համար, վոր նա ընդարձակում է Միցիլիայի ըստրուկների այս առաջին ապստամբութեան ժամանակագրական շրջանակները:

Հարց է առաջանում. ինչպե՞ս էր կազմակերպված սոցիալ-քաղաքական հասարակակարգը, տնտեսական կյանքը և այն ազատագրված ստրուկների այս համեմատաբար յերկար գոյութեան ունեցած պետութեան մեջ: Դժբախտաբար, մեր արանսդրութեան տակ յեղած նյութը մեզ պարզ պատասխան չի տալիս

այս առթիվ: Միայն կարելի յէ յենթադրել, վոր կղզին, ըստ յերևույթին, գտնվում էր տնտեսական նորմալ գործունեութեան պայմաններում և իր տնտրիսութեան տակ ունեւր ամեն ինչ՝ նվաճված հաղթանակը յերկար ժամանակ պաշտպանելու համար:

ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ

Կղզու դրութեանն սկսում էր ավելի ու ավելի յերկյուղ ներշնչել հռոմայեցիներին, վորովհետև հեղափոխութեան կայծերը թռչում էյին արդեն մինչև մայր ցամաքը, այնտեղ հարուցելով ապստամբութեանների բռնկումներ: Հռոմայեցիք մեկը մյուսի հետևից էքսպեդիցիաններ են կազմակերպում դեպի Միցիլիա. բայց պատժիչ էքսպեդիցիաններն իրենց նպատակին չեն հասնում. հռոմեյական զորավարները պարտութեան են կրում: Այն ժամանակ Հոմն ստիպված էր մեծ քանակութեամբ զորք ուղարկել կոնսուլներ Կայոս Փուրլի Ֆրակոսի, Լյուսիոս Կալպուրնիա Պիգոսի և Պիգոսի հաջորդ՝ կոնսուլ Պուբլիոս Ռուպիլիոսի հրամանատարութեամբ:

Յերկար ժամանակ համառ կռիվ էր մղվում, վերջապես, կոնսուլ Պուբլիոս Ռուպիլիոսին հաջողվեց միջանի ձախտամարտ տանել: Ռուպիլիոսը, վոր լավ ծանոթ էր Միցիլիայի տեղագրական առանձնահատկութեաններին, մոտեցավ Տավրոմենիա քաղաքին և պաշարեց այն: Ստրուկները հերոսաբար պաշտպանվում էյին: Չցանկանալով անձնատուր լինել, պաշարված ստրուկներն ստիպված էյին՝ զուրկ լինելով ամեն տեսակ պարենից, սնվել իրենց յերեխաներով, ապա կանանցով և ծայրահեղ հյուժման հասնելով, անցան փոխադարձ վոչնչացման: Բայց նույնիսկ այս պայմաններում նրանք չեյին մտածում անձնատուր լինել զստակարգային թշնամուն: Միայն մի ստրիկ՝ Սկրապիոնի զավաճանութեան հետևանքով Ռուպիլիոսին հաջողվեց վերցնել Տավրոմենին՝ հեղափոխութեան գլխավոր հենարաններից մեկը: Կենդանի մնացած ստրուկները բռնվեցին, տանջանքների յենթարկվեցին և ժայռից ցած նետվեցին:

Ռուպիլիոսն առաջ շարժվեց դեպի Եննա՝ ստրուկների «Նոր սիրիական թագավորութեան» մայրաքաղաքը: Մայրաքաղաքը պաշտպանում էր Կլեոնը, վոր իր բանակի և Աքեոսի զորքի միացումից հետո դարձել էր գլխավոր հրամանատար: Մի փոքրիկ

զորամասով կրօնը արտելը կատարեց հոռմեյական հսկայա-
կան զորքի զեմ և ճերտասկան կովից հեռու, — առում է Դիողոր
Սիցիլիացին, — ընկավ վերքերով ծածկված:

Ստրուկները հերոսաբար կռվում էին մինչև վերջ: Միայն
զավանանության հեռանալով հոռմայեցիներին հաջողվեց
վերցնել ստրուկների թագավորության մայրաքաղաքը, վոր
գտնվում էր բարձրության վրա և զժվարամտաչլի ամրոց էր:
Յեվնոս թագավորը գերի բռնվեց և տարվեց Մորգանտինա քա-
ղաքը, վորտեղ նետվեց բանա: Բանաարկության զարնուրելի
պայմաններում վոջիները կերան Յեվնոսին, ինչպես այս մասին
վկայում է Դիողորը:

Այսպես վերջացավ Սիցիլիայի ստրուկների առաջին ապս-
տամբությունը, վոր ավեց կեղեքվածների իրենց հարստահարիչ-
ների զեմ մղած կովի մի շարք հերոսական գրվազներ: Չնայած
մենք շատ անբավարար տեղեկություններ ունենք Սիցիլիայի
ստրուկների առաջին ապստամբության ծրագրի վերաբերյալ,
միանգամայն ակնհեր է, վոր այն պարզ բռնկում չէր, այլ մաս-
սայական հեղափոխական յելույթ՝ ընդդեմ ստրկատիրական անտե-
սության սիստեմի, ընդդեմ այս սիստեմի ծայրահեղությունների,
վորը Սիցիլիայում ամենախայտառակ կիրառում ուներ:

Հենց այս է պատճառը, վոր ավյալ՝ ապստամբությունը չէր
կարող արձագանց չդառնել հոռմեյական պետության ամենահե-
ռավոր անկյուններում: Այս ապստամբության արձագանգները
կարելի չէ գտնել նուրիսի հոռմեյական աշխարհի սահմաններից
հեռու, Հոռմին չենթարկվող, կամ, գոնե, նրա կողմից զեռու
չամբացված մարզերում (Մակեդոնիա, Փոքր Ասիա):

ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅԱՆ ԱՐՉԱԳԱՆԳՆԵՐԸ

Անհրաժեշտ է նշել, վոր վոչ միայն ստրուկները, այլև գյու-
ղատնտեսության մանր արտադրողները վորոշպես համակրում
էին սիցիլիական յելույթը՝ ընդեմ ստրկատիրության: Մենք
արդեն առիթ ունեցանք խոսելու Սիցիլիայի մանր գյուղացիու-
թյան համակրանքի մասին զեպի ապստամբությունը: Բայց
միայն Սիցիլիայի հողագործները չէին ապստամբների կողմը՝
ապստամբության լուրը հասավ Իտալիայի գյուղացիության, և

Հոռմը բռնվեց սպարապին լայն շարժումով, վորտեղեկ Իտալիա-
յում ստրկության զարգացումն իր հեռակց բերեց հողերի խիստ
կենտրոնացում առանձին սեփականատերերի ձեռքում և մանր
արտադրողների թե կատարյալ քայքայում և թե մասսայական
պրոլետարացում: Բնական է, վոր այսպիսի պայմաններում գյու-
ղացիական մասսան վտարի չէր յիշում, իսկ չքավորները մշտա-
պես պատրաստ էին պաշտպանելու ստրուկների ամեն մի սուղու-
տամբություն, քանի վոր վերջինս ուղղված էր խոշոր հողային
սեփականատերերի ու ստրկատերերի զեմ:

Հետաքրքրական է նշել, վոր այն ժամանակ, յերը Սիցիլիա-
յում ապստամբություն էր տեղի ունենում, և Հոռմը յերկրորդ
տարին համառորեն պատժիչ և քսակցիցիտաներ էր ուղարկում, այ-
սինքն՝ 133 թվին, Իտալիայի գյուղացիությունը վտարի չէ կանգ-
նում հողը վերաբաժանելու լողուններով:

Մեր թվականության առաջին դարի վերջի և յերկրորդի
սկզբի հույն գրող Պլուտարքոսը հավորում է, վոր այս լողունը
ները լսելի էին ամենուրեք: Մշտնաբաններում, շենքերի պա-
տերին, գերեզմանաքարերի վրա — ամենուրեք պահանջներ էին
ուրվագծվում չքավորներին վերադարձնելու գրավված հողը: Կա-
րելի չէ չենթարկել վոր ազրարային ճղնաժամը և չքավոր գյու-
ղացիության շարժումն առանձին սուր ձև ընդունեց հենց Սիցի-
լիայի ստրուկների յելույթի ազդեցությամբ: Վոր գյուղացիու-
թյունը վորոշել էր սղտագործել Հոռմի և ամբողջ ստրկատիրա-
կան դասակարգի համար զժվարին մոմենտը, այս յերևում է
Տիբերիոս Գրակոսի՝ վտարի յերամ իտալական գյուղացիության
առաջնորդի մի ճառից: Նա նախատեսում է ազրարային ռեֆորմ
կատարել, ընդվորում, պնդելով վերաբաժանելու այսպես կոչված
«ագեր պուբլիցուս»-ը, այսինքն՝ հասարակական հողը, նա ուղղակի
նշում է, վոր, ուրիշ չելք չլիս, և վոր յերթն այս վերաբաժանումը
չկատարվի, ապա ապստամբություն կարող է ծագել նման այն
չկատարվի, ապա ապստամբություն կարող է ծագել նման այն
բանին, ինչ տեղի ունեցավ Սիցիլիայում: Ստրկության զարգա-
ցումը, վոր ընթանում էր նաև ի հաշիվ պրոլետարականացած
գյուղացիների, վախեցնում էր Տիբերիոսին, և, ըստ ավանդու-
թյան, նա յեկավ այն յեզրակացության, վոր անհրաժեշտ է ազ-
րարային ռեֆորմն այն մոմենտին, յերը անցնելով Եւրոպայան
մարդով, նա տեսավ մեծ թվով ստրկերկրացի ստրուկներ, վորոնք

մշակում էյին դաշտերը, և ազատ գյուղացիութեան կատարյալ բացակայութեամբ: Գյուղացիութեան պակասումը նշանակում էր Հոռոմի պահեստի բանակի կրճատում, ստրուկների քանակի մեծացումը գյուղատնտեսութեան մեջ նշանակում էր սպառնալիքի աճում գերիշխող դասակարգերի համար: Թե մեկը և թե մյուսը հուզում էյին Տիրեքրիոսին, վորովհետև Սիցիլիայի որինակով նա տեսնում էր, թե ինչքան հեռու կարող է գնալ դժգոհ բնակչութեան շարժումը: Այսպես սաղմնավորվեց աղբարային մեծ շարժման գաղափարը Հոռոմում:

Սիցիլիայի ապստամբութեանը, ինչպես մենք նշեցինք, արձանգանգ գտավ հոռոմեյական պետութեան ծայրամասերում և Իտալիայի սահմաններից շատ հեռու՝ Դելոս կղզում, Լավրիոնի հանքերում և Մակեդոնիայում:

5-րդ դարի հին քրիստոնյա գրող Որոզիոսի տեղեկութեամբ, Հոռոմի մոտ մի քանի խոշոր քաղաքներում կրկին սկսվեց ստրուկների շարժումը: Մինտուրնիի ապստամբութեանը ճնշվեց, և 450 ապստամբ ստրուկները մահապատժի յենթարկվեցին: Ե՛լ ավելի մեծ ապստամբութեան սկսվեց Մինտուսում, վորին մասնակցում էյին մոտ 4 հազար ստրուկ: Հոռոմեյական յերկու հրամանատարի մեծ դժվարութեամբ միայն հաջողվեց ճնշել ապստամբութեանը:

Դելոս կղզում, վորտեղ հաճախ կուտակվում էյին մեծ թվով ստրուկներ, բոլոր ազգութեանների ստրուկների համահոռոմեյական տոնավաճառներում տեղի էյին ունենում այս խոսող աղբանքի հաճախակի յերլայթներ: Սիցիլիայի ապստամբութեան լուրը, հավանաբար, Դելոս հասավ սիցիլիական նավահանգիստներից, վորոնք յերկար ժամանակ գտնվում էյին ապստամբների ձեռքում: Դելոսի ստրուկները կրկին վորոշեցին հանդես գալ իրենց կեղեքիչների դեմ, և այս ապստամբութեանը կարող էր ծավալվել սիցիլիական մասշտաբով, յեթե միքանի քաղաքացիներ իշխանութեանը չնախազգուշացնէին պատրաստվող յերլայթի մասին: Ռազմական ուժերի զորահավաքի հետևանքով սկսված ապստամբութեանը ճնշվեց: Որոզիոսի արտահայտութեամբ՝ այսպես մարեց «այն առաջին խարույկի շողջողուն կայծից առաջացած հրդեհը», վոր սկզբում վառվեց սիցիլիայում:

Սիցիլիական հեղափոխութեան ավելի լուրջ արձագանգն էր

Ատտիկայի ստրուկների ապստամբութեանը, վոր տեղի ունեցավ 134—133 թվերին: Յերկու հին հեղինակ՝ Դիոդորը (առաջին դար մինչև մեր թվ.) և Որոզիոսը (5-րդ դար մեր թվ.) այս ապստամբութեանն անմիջականորեն կապում են Սիցիլիական հեղափոխութեան հետ: Ապստամբութեանը տեղի ունեցավ Լավրիոնի հանքերում՝ Աթենքի մոտ: Այս հանքերում աշխատող ստրուկներն ավելի վառ դրութեան մեջ էյին գտնվում, քան ուրիշ արհեստի իրենց յեղբայրակիցները: Մրանք մեծ մասամբ պատերազմում բռնված ոտարերկրացիներ էյին, կամ փախստակ ստրուկներ, վորոնք, իբրև պատիժ, ուղարկվում էյին հանքերն աշխատելու: Լավրիոնի հանքերը շատ խոշոր ձեռնարկութեան էյին, Հունաստանի համար հիմնական արծաթ մատակարարողներ: Մենք չենք կարող ճիշտ գաղափար կազմել այն մասին, թե վերջան ստրուկներ էյին դբաղված այս հանքերում, բայց մեզ հայտնի յե, վոր պելոպոնեսյան պատերազմի շրջանում (5-րդ դ. վերջում) առանձին ձեռնարկատերեր ունեյին 300—600 ստրուկ, իսկ Նիկիոսն ուներ նույնիսկ 1000 մարդ: Ու թեև ավելի ուշ՝ մակեդոնյան և հոռոմեյական դարաշրջաններում Լավրիոնի հանքերը վորոշ անկման հասան, սակայն այնտեղ, ըստ յերևույթին, դեռևս շարունակում էյին աշխատել ստրուկների հազարանոց խմբեր: Համենայն դեպս, Դիոդորը մեզ հաղորդում է, վոր ապստամբութեան ժամանակ վոաքի յերան 1000-ից ավելի ստրուկ, այնպես, վոր հարկ յեղավ գործադրելու ուղղմական մեծ ուժեր, արագ ու դաժան միջոցներ՝ ապստամբ ստրուկներին ճնշելու համար:

Լավրիոնի հանքերի ապստամբութեանը հետաքրքրական են նրանով, վոր նա արագորեն տեղափոխվեց Մակեդոնիայի հանքերը: Դիոդորը մեզ վոշ մի վկայութեան չի թողել Մակեդոնիայի այս ապստամբութեան մասին, բացի այն խուլ ցուցումից, թե Դելոսից և Լավրիոնից գառ սիցիլիական հեղափոխութեան արձագանգները յեղան «նաև ուրիշ վայրերում»: Հնարավոր է, վոր «ուրիշ վայրեր» ասելով նա նկատի ուներ հենց Մակեդոնիան, վորի մասին հիշատակում է Ավգուստինոսը (մեր թվ. 4-րդ դ. վերջը—5-րդ դ. սկիզբը):

Նկարագրելով դանազան պատերազմներ, վորոնք իրենց հետևելից բերեցին ազետներ ու քաղաքացիական քայքայում՝ Ավգուստինոսը սիցիլիական ապստամբութեան հետ միասին հիշա-

տակում և նաև ստրուկների մեծ յնուլթ Մակեդոնիայում, վորի հետևանքով, նրա խոսքերով՝ Հայս ամբողջ մարզն ամայացվեց վոտքի յելած ստրուկների ավազակախմբերի միջոցով:

Ստրուկների այս բոլոր շարժումները ձայնակցում էին այն վիթխարի ապստամբութեան հետ, վոր այն ժամանակ տեղի յեր ունենում Միցիլիայում և շարունակվում միքանի տարի, բայց, անտարակույս, մի քիչ տարբերվում էին իրենց բնույթով այն կովից, վորին բարձրացան հասնն Միցիլիայի ստրուկները: Միցիլիայի ապստամբութեանների նյութերից յերևում է, վոր այն տեղ ստրուկներն ավելի կազմակերպված էին, նենարան ունեյին ուժեղ բանակի մեջ և իշխանութեան ապարտում, և վոր գրեթե խափոքն է, հավանաբար, խնդիր էին դնում իրենց՝ խորտակել խոշոր ստրկատիրական տնտեսութեանը: Դելոսի, Լավրիոնի հանքերի և Մակեդոնիայի ստրուկները տարբեր պայմանների մեջ էին գտնվում: Նրանք կրկնակի չափով կրում էին իրենց վրա թե իրենց ստրկատիրոջ և թե հոռմեյական այն պուրլիկանտի՝ առևտրա-վաշխատուական կապիտալի գործակալի ճնշումը, վորը ուղղմատուրքով սղմում էր տեղական իշխանութեաններին ու ստրկատերերին և էլ ավելի շատ՝ ստրուկներին: Այս պատճառով ստրուկներն այստեղ, հավանաբար, հանդես էին գալիս վոչ միայն ստրկատերերի, այլև հոռմեյական ստրկերկրյա իշխանութեան ու առևտրական կապիտալի գործակալների դեմ:

Բայց այստեղ սրանք այնքան սերտ միանյութվում են միմյանց, վոր դժվար է վորևե վորոշակի յեզրակացութեան անել: Յերբեմն ստրուկների ապստամբութեանը բարձրանում էր հենց ոտարերկրյա հարստահարիչների, հոռմեյական նվաճողների դավթումների դեմ պայքարը ծավալելու հետևանքով:

Ստրուկների ապստամբության շարժման հետ միանյութված այսպիսի ապստամբության որինակ մեզ տալիս է Արիստոնիկի հուշակավոր ապստամբութեանը Պերգամի թագավորութեան մեջ՝ Փոքր Ասիայում, վորն արժանի յե հատուկ հիշատակութեան:

ԱՐԻՍՏՈՆԻԿԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Պերգամում Արիստոնիկի ապստամբութեանն սկսվեց 133 թվին և շարունակվեց մինչև 129 թվը: Ապստամբութեանը բռնկվեց սիցիլիական հեղափոխութեան դեմ Հռոմի մզած պայ-

քարի ամենայետուն շրջանում: Բացի սրանից, այն զուգադիպեց բուն Հռոմում Դրակոնների սկսած ազրարային շարժման հետ: Իժրախտաբար մեզ տեղեկութեաններ չեն հասել այն մասին, թե արդյոք այս ապստամբութեանը վորևե կերպ կապված էր սիցիլիական ստրուկների հետ: Կա միայն Դիոդորի մի պատմական ցուցումը, վոր այն ժամանակ, յերբ Միցիլիայում ծավալվում էր ստրուկների հեղափոխութեանը, Վալդ ժամանակ նման իրադարձութեաններ էին տեղի ունենում Փոքր Ասիայում: Մի այլ տեղ Դիոդորը նույնիսկ ուղղակի խոսում է ստրուկների ապստամբութեան մասին Պերգամի թագավորութեան մեջ՝ Արիստոնիկի ղեկավարութեամբ: «Արիստոնիկը ձգտում էր իրեն չվայելող թագավորական իշխանութեան, իսկ ստրուկները խելառութեաններ էին տնում նրա հետ միասին տերերի ճնշումների հետևանքով և շատ քաղաքներ մեծ դժբախտութեան մեջ գցեցին»: Նշելով Միցիլիայի և Փոքր Ասիայի Պերգամի թագավորութեան իրագործութեանների նմանութեանը՝ Դիոդորը սահմանափակվում է միայն ժամանակագրական զուգադիպումով և վորևե քաղաքական ու հեղափոխական կապ չի հայտարարում Միցիլիայի և Պերգամի միջև:

Յեթե մենք բավականաչափ տվյալներ չունենք Արիստոնիկի և Միցիլիայի կապի մասին խոսելու համար, ապա Արիստոնիկի ու Հռոմի կապի մասին մենք կարող ենք դատել Պուլան մոմենտին դեպի Պերգամ՝ Արիստոնիկի մոտ փախավ Տիրբեսոս Դրակոնի մերձավոր ընկեր՝ փիլիսոփա Բլուսիոսը: Թագանվելով պատժից, վորի գոհն էր զարձել արդեն Տիրբեսիոսը, Բլուսիոսը, իհարկե, պատահաբար չգնաց Արիստոնիկի մոտ. անշարակույս, նա յենթադրում էր ոգնել Արիստոնիկի ծավալող տարակույս, նա յենթադրում էր ոգնել Արիստոնիկի ծավալող շարժմանն ընդդեմ մեծապետական Հռոմի, ընդդեմ ստրկատիրական սիստեմի ծայրահեղութեանների: Հնարավոր է, վոր Բլուսիոսը դիտեր Պերգամի շարժման մասին, համարում էր նրան, իսկ թերևս և համագործակցութեան մեջ էր Արիստոնիկի հետ: Կարելի յե նույնիսկ յենթադրել, վոր վոչ միայն Բլուսիոսը, այլև ինքը Տիրբեսիոսը կապված էր Պերգամի հետ և դիտեր այնտեղ պատրաստվող իրագործութեանների մասին, վորովհետև միայն սա կարող էր առիթ տալ Կլինատոս Պոմպիոսին սենպտում հան-

դես գալու այն դեմագոգիական հայտարարութեամբ, թե իտալական գյուղացիութեան առաջնորդ Տիբերիոս Գրակըսը կամենում է դառնալ Պերգամի թագավոր:

Ըստ յերևութիւն անսխալ կլինի այն յեզրակացութեանը, թե իտալական գյուղացիութեան առաջնորդներ Տիբերիոսն ու Բլուսիոսն այսպես թե այնպես կապված ելին Պերգամի առաջնորդ Արիստոնիկի հետ:

Գրակըսոյան շարժման շախմատից հետո Պերգամ յեկած Բլուսիոսն անմիջական համագործակցութեան սկսեց Արիստոնիկի հետ, վորը, հավանաբար, Բլուսիոսից կարողացավ իմանալ Միցիլիսյում տեղի ունեցած ապստամբութեան մասին: Ահա թե ինչպէս է պատկերանում հռոմեական իրադարձութեանների կապն այն իրադարձութեանների հետ, վոր սկսեցին ծավալվել Պերգամում:

Ի՞նչ իրադարձութեաններ ելին սրանք: Ի՞նչ խնդիրներ դրեց այնտեղ հանդես յեկած Արիստոնիկը: Ի՞նչ բնույթ ունեւ ստրուկների այս ապստամբութեանը: Տվյալ հարցերին պատասխանելու համար նախ տեսնենք, թե ինչպէս եր ընդհանուր դրութեանը Պերգամում:

Պերգամի թագավորութեանը կազմվեց Փոքր Ասիայում 280 թվին, Ալեքսանդր Մակեդոնացու կայսրութեան քայքայումից և նրա ժառանգների ու զորավարների փոխադարձ պայքարից հետո: Եվմեն առաջին (263—241 թթ.), Ատտալ առաջին (241—207 թթ.), Եվմեն 2-րդ (197—159 թթ.) և Ատտալ 2-րդ (159—138 թթ.) թագավորների ժամանակ Պերգամը վոչ միայն մեծացրեց իր տերիտորիան մինչև Եգեյան ծովափը, այլև ամրացրեց իր քաղաքական դիրքը, ծագկման հասնելով նաև կուրտուրայի՝ քանդակագործութեան, ճարտարապետութեան և զանազան գիտութեանների ասպարեզում: Ատտալ 3-րդ (138—133 թթ.) թագավորի ժամանակ դրութեանը փոխվեց, վորի մասից հետո ել սկսվեց ապստամբութեանը:

Ատտալը չկարողացավ պաշտպանել իր պետութեան ինքնուրույնութեանը: Թույլ ու խելացնոր արևան՝ նա մերթ արտասովոր նուրբ ու մեղմ եր իր մերձավորների հետ, մերթ, իբրև բռնակալ, վորեւ ամենաչնչին կասկածի դեպքում հրամայում եր

սպանել թե իր ազգականներին և թե պարստում գտնվող ազգացիկ բարեկամներին:

Այս ժամանակ Հռոմն արդեն վերջնականապես նվաճեց ամբողջ Հունաստանն ու Մակեդոնիան: Հերթը Պերգամի թագավորութեանն եր, վորն այն ժամանակ հռչակված եր անչափ համարութեաններով ու արվեստի գանձերով: Ատտալ 3-րդի ժամանակ Պերգամը չկարողացավ հակառակել հռոմայեցիների ներս մտնելուն: Նա պահպանեց իր անկախութեան ուրվականն այն պատճառով միայն, վոր ամեն ինչ անում եր հռոմեացիների հրահանգով: Հռոմեական ստրկատերերի ու վաշխառուների ախորժակը հագեցնելու համար կիրառվեց ֆինանսական սեփորմ, վորն իր ամբողջ ծանրութեամբ ընկավ Պերգամի ստրուկների և գյուղացիութեան վրա. ուժեղացան հարկերը, մտցվեց հարկատուների ընդհանուր հաշվառում, վաշխառուներն ու չինովներն արհեստավորի, գյուղացու և ստրկի մարմնի մեջ:

Պերգամը բոլորի աչքի առջև խաղաղորեն կորցնում եր իր անկախութեանը: Հռոմեական ազդեցիկ անձանց հետ միասին մեծ հոսանքով դեպի Պերգամ ուղղվեցին հունական սպեկուլյանտներն ու հողային մագնատները, վորոնք իրենց ձեռքն ելին լյանտներն ու հողային մագնատները, Կախտրա, Գերմա և Կաիկա գետերի պլան հավաքում Մեանաղբա, Կախտրա, Գերմա և Կաիկա գետերի պլան հարեր հովիտների լավագույն հողերը: Այս բոլորը տեղի յեր ունենում հեթինացման, կամ հելլենական կուլտուրան Պերգամի թագավորութեան մեջ թափանցելու անվան տակ: Հասկանալի յե, վոր այսպիսի պայմաններում Ատտալ 3-րդը մի շերմա յեր միայն իսկ Պերգամի իսկական տերերը հանդիսանում ելին հռոմայեցիք: Յերբ մեռավ Պերգամի թուլամիտ բռնակալ Ատտալ 3-րդը, պարզ Յերբ մեռավ Պերգամի թուլամիտ բռնակալ Ատտալ 3-րդը, պարզ վեց, վոր նա իր թագավորութեանը կտակել է Հուսիին, վորը և նշանակվեց իբրև միակ որինական ժառանգ: Հռոմ ուղարկվեց Եվգեմիոս դեսպանը, վորն Ատտալի այս կտակը հանձնեց հռոմեական սենատին:

Պերգամի ժողովրդական մասսաների համբերութեան քաժակը լցվեց: Նրանք Ատտալի մահվանն սպասում ելին վոչ թե նրա համար, վորպեսզի հանձնվին նոր հարստահարիչներ իշխանութեանը, այլ բռնակալի մահն ուզում ելին սպասագործել վոր

պեսդի քշեն հոռմեյական հարատահարիչներին և աղատվեն ամեն մի կեղեքումից: Այսպիսի մի առիթ շուտով ներկայացավ:

Ատտալի մահվանից հետո մնաց նրա խորթ յեղբայր Արիստոնիկը, Եվմեն 2-րդի վորդին նրա անպաշտոն կնոջից: Արիստոնիկն այն ժամանակ յերիտասարդ հասակումն էր և, ըստ հունական որենքների, կարող էր ժառանգել իր յեղբոր դահը: Ատտալի մահվանից հետո Արիստոնիկն առաջագրեց իր իրավունքները Թագավորության վերաբերմամբ և հանդես յեկավ Պերգամը հռոմեյական տիրապետությանը հանձնելու դեմ: Արիստոնիկի կողմը դուրս յեկավ քաղաքների մեծ մասը՝ Լեվկին, Կոլոֆոնը, Մինդոսը և ուրիշները, վորոնց ատելի յեր հռոմեյացիների իշխանությունը: Ժողովրդական մասսան շարժվեց Արիստոնիկի հետեւից, վորը Լեվկի ծովափնյա փոքրիկ քաղաքում իրեն հայտարարեց Պերգամի թագավոր:

Շարժումն աճում էր, բայց քնած չեյին նաև ստրկատերերը: Արիստոնիկի դեմ ամենից առաջ հանդես յեկավ Եֆես քաղաքը՝ հին ու հարուստ մի նավահանգիստ, վորտեղ շատ առևտրականներ կային, վաշխառուներ և ստրկատերեր: Վերջիններս հռոմեյական կայսրոնների ոգնությամբ կռիվ ավին Արիստոնիկին և նրան ջարդեցին ծովային ճակատամարտում: Սակայն Արիստոնիկը չզղադարեցրեց կռիվը. նա դիմեց դեպի յերկրի խորքը և ժողովրդական մասսաներին սկսեց զորահավաքել հռոմեյացիների դեմ: Այս ժամանակ յերկրի խորքում արդեն վոսքի եյին կանգնում ստրուկներն ու գյուղացիական մասսաները: Արիստոնիկը նրանց բոլորին՝ թե ստրուկներին, թե չքավորներին, թե արհեստավորների լայն մասսաներին և թե գյուղացիներին հրավիրեց իր շարքերը: Այսպիսով շարժումն ընդունեց լայն, ազատագրական հակահռոմեյական բնույթ:

Վոսքի յեյած ստրուկների ու գյուղացիների այս ամբողջ մասսային Արիստոնիկը կարողացավ միավորել մի գաղափարով. նա նրանց ուրվագծեց շարժման ծրագիրը, վորի վերջնական խնդիրն էր կազմակերպել «Արևի պետությունը»: Նրա մտահացումով այս պետությունը պետք է հիմնվեր ազատության և յեղբայրության վրա: Բոլոր քաղաքացիք պետք է դաճնային հավասար «արևի քաղաքացիներ» (հելիպոլիտներ):

Ինչպես Յեվնոսի ծրագիրը Սիցիլիական առաջին ապստամ-

բության մեջ, այնպես էլ Արիստոնիկի ծրագիրը բացահայտորեն գունազարդված էր կրոնական յերանգով, վոր միանգամայն բնական էր այն դարաշրջանի համար: Արևելքում, Պերգամի թագավորության շրջաններում լայնորեն տարածված էր Արևի աստուծու պաշտամունքը: Այս աստուծուն զանազան անուններով յերկրպագում էյին թե սիրիացիք, թե բաբելացիք, թե պարսկները, և նրա պաշտամունքի հետ կապվում էր յերկրային բարեքներ տվող արևի բերկրալից ճառագայթների մտապատկերը: Արևն, իբրև ուրախության, աճեցողության, առատության ու ազատության աղբյուր, հակադրվում էր խավարին, տխրությանը, ստորերկրյա թագավորությանն ու դժբախտությանը: Զարմանալի չէ, վոր ապստամբ ստրուկների ու չքավորության լայն շարժման մեջ արևի խորհրդանշանը կարողացավ դաճնալ պետության կազմակերպման ծրագրի յերակետը:

Մեծ քանակով առաջ շարժվելով՝ Արիստոնիկը շատ քաղաքներ գրավեց և մի շարք հողթանակներ տարավ իր թշնամիների դեմ: Նրանից սկսեցին յերկյուղ կրել նույնիսկ հարեան պետությունները. Բիթինիան, Կապադովկիան և Պաֆլագոնիան, վորոնց ներսում նույնպես հասունանում էր ապստամբությունը:

Տեսնելով ապահանցող վտանգը և չցանկանալով պերգամյան հարուստ ժառանգությունը թողնել ապստամբների ձեռքին՝ Հուսն Արիստոնիկի դեմ մեծ ուժեր շարժեց կոնսուլ Կրատոսի հրամանատարությամբ:

Կրատոսը պահանջեց, վոր Պերգամին շրջապատող հոռմահայտակ բոլոր պետությունները, այն է՝ Բիթինիան, Կապադովկիան, Պաֆլագոնիան և Պոնտոսն ուժեր ուղարկեն հոռմին ոգնության՝ ընդդեմ Արիստոնիկի: Ապստամբության առաջնորդը, կարծես թե, բոլոր կողմերից շրջապատված էր հռոմեյական ստրկատերերի վարձկանների հորդաներով:

Կրատոսն ամենից առաջ մտտեցավ Լեվկի ամրացված քաղաքին: Մի ամբողջ ձմեռ տևեց այս տնամաշիլի քաղաքի պաշարումը, վոր ապստամբ ստրուկները պատրաստ էյին մինչև վերջ պաշտպանելու: Անարդյուն պաշարումից հետո Կրատոսը մտադիր էր արդեն հեռանալու, յերբ հանկուժեք Արիստոնիկի գործը հարձակվեց Կրատոսի վրա: Չախճախեց նրա զորքը, իսկ իրեն՝ Կրատոսին գերի վերցրեց, վորտեղ և նա մեռավ:

130 թվին Արիստոնիկի դեմ կռվելու համար ուղարկվեց կոնսուլ Մ. Պերպերնան, վորը, իմանալով Կրասոսի պարտութեան մասին, շտապեց դրութեանը շտկելու: Պերպերնան ափ իջավ Փոքր Ասիա և մի անակնկալ հարձակումով ջախջախեց Արիստոնիկին, վորն ստիպված յեղավ փախչել Ստրատոնիկիա քաղաքը՝ Կարիայի մարզում: Հռոմեական զորքերը գազանաբար հաշվետես արին ապստամբներին հետ. նրանց վերցրած քաղաքները կործանվում էին, անհնազանդ քաղաքներին ստիպում էին անձնատուր լինել թունափորելով խմելու ջուրը, գերվածներին սպանում էին: Վերջապես Ստրատոնիկիա քաղաքն էլ պաշարվեց, հարկազրկեց հանձնվելու, և այնտեղ դռնվող ապստամբութեան առաջնորդը գերի բռնվեց: Նրան շղթայեցին և ուղարկեցին Հռոմ: Այնտեղ, բանտում, դաժան տանջանքներից հետո նրան խեղդեցին սենատի հրամանով: Արիստոնիկի ընկեր թլուսիոսն ապստամբութեան ջախջախումն ու իր բարեկամի մահը չտեսավ. նա ինքը զրկեց իրեն կյանքից:

Հռոմեական ստրկատերերն ու հողային մագնատները ցընծութեան մեջ էին. Պերգամը նվաճված էր: Սպեկուլյանտները, չինովնիկներն ու կրապալառուները պարագիտների վրնմակի նման կրկին ուղղվեցին դեպի Փոքր Ասիա, վորպեսզի ձձեն նոր գրավված ավարի հյուսթերը:

Բայց ստրկատեր դասակարգի ցնծութեանը վաղաժամ էր. յերեսուն տարի էլ չանցավ, յերբ նորից վիթխարի ապստամբութեան բռնկվեց Հռոմի մոտերքում՝ Սիցիլիա կղզու հսկայական տարածութեան վրա:

ՍԻՏԻԼԻԱՅԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԿԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԿՍՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԾԱԿԻՆ

Արիստոնիկի ազատագրական շարժումն ուղղված էր հռոմեական հարստահարման դեմ, բայց ստրուկներին ու չքավորներին ապստամբ մասսան պահանջով էր նաև փոփոխել կյանքի կառուցվածքը, բարելավել իր դրութեանը և ազատել ստրկութեանից: Ապստամբութեանը խորտակվեց այն պատճառով, վոր հռոմեական ինտերվենցիան Պերգամում միավորեց ստրկատիրական հասարակութեան ուժերը և այս ուժերի դեմ յելած Պերգամի փոքրիկ թագավորութեան կեղեքված ժողովուրդը չկարողացավ դիմանալ: Արտաքին և ներքին դատակարգային թշնամիների դեմ պայքարելու բարդութեանը վերջիվերջո ուժասպառ արեց ապստամբներին:

Այսպիսով, ստրուկների հեղափոխութեան այս վիթխարի ակտը, վոր Սիցիլիայից Լավրիոնի հանքերի ու յիելոսի վրայով հասել էր Պերգամ, ստրկատիրական Հռոմը հետ մղեց: Թեև մեծ դժվարութեամբ, այնուամենայնիվ Հռոմը գլուխ բերեց ստրուկների ապստամբութեանների ճնշման խնդիրը և շարունակեց էլ ավելի ամուր կանգնել ստրկատիրական տնտեսութեան հիմքի վրա, վորն ավելի ու ավելի յեր զարգանում, իր մեջ էր ներծրծում ստրուկների նոր կազմեր: Բայց այս պրոցեսն ուներ նաև իր հակառակ կողմը. մագնատային լատիֆունդիաների ամուրը, ստրուկների թվի աճումը, ծայրամասերում շատ պետութեան ստրուկների թվի աճումը, ծայրամասերում շատ պետութեան ստրուկների թվի աճումը, ծայրամասերում շատ պետութեան ստրուկների թվի աճումը, ծայրամասերում շատ պետութեան ստրուկների թվի աճումը: Հպատակված պետութեանները կովի յեն դուրս գալիս իրենց անկախութեան համար, գյուղացիութեան հողազուրկ մասսան հող և պահանջում, իսկ ստրուկներն ու չքավորները շարունակում են նոր

բանոր ապստամբություններ կազմակերպել ստրկատիրական հասարակարգի դեմ:

Սոցիալական սուբձ գնաժամի այս պայմաններում հասունանում էր Միցիլիայի ստրուկների հոշակավոր՝ յերկրորդ ապստամբությունը, վոր նույնպես տեկց մոտ հինգ տարի (104—100 թթ.): Այս ժամանակաշրջանում դասակարգային փոխհարաբերությունները խիստ սրված էյին՝ «Միցիլիայի ստրուկները՝ ապստամբությունից առաջ,—ասում է Դիոգորը,—Իտալիայում տեղի էյին ունենում ստրուկների այնքան շատ կարճատե սպստամբություններ և մանր դավադրություններ, վոր կարծես թե աստվածությունն ինքն այսպիսով կանխապես հայտնում էր Միցիլիայի ապագա նոր վիթխարի ապստամբության մասին»: Դիոգորը նույնիսկ թվարկում է այդ մանր պոռթկումներից միքանիսը, վորոնք կայծեր տարածեցին իրենց շրջաններից շատ հեռու. մի ապստամբություն յեղել է Նուցերիոս քաղաքում, վորտեղ միքանի տասնյակ ստրուկներ դավադրություն են կազմակերպել, բայց իշխանություններին հաջողվել է վերացնել դավադրությունը. մյուս աղքատամբությունը տեղի յե ունեցել Կապուա քաղաքի մոտ. այնտեղ ապստամբել են 200 ստրուկ, բայց այս ապստամբությունն էլ ճնշվել է Կամպանյան քաղաքներում մեծ քանակությամբ հոռմեյական զինվորներ լինելու պատճառով:

Կամպանիան մեծ ու պողաբեր գյուղատնտեսական մարդ էր, վոր գանվում էր հոռմեյական ստրկատիրական ազնվականության հողային միքանի տեղերի իշխանության տակ: Ստրկատիրական լատիֆունդիաներում աշխատեցվող մեծ քանակությամբ ստրուկներն սպառնական ուժ էյին ներկայացնում, և հողատեր ազնվականությունը յերկյուղից մեծ քանակությամբ զորք էր պահում: Ե՛լ ալեկի անհանգիստ էր դրությունն այս մարզի գլխավոր քաղաք Կապուայում, նույն այն քաղաքում, վորը ինչպես մենք դեռ հետո կտեսնենք, գարձավ սպարտակյան հրոշակավոր հեղափոխության յերակետն ամբողջ Իտալիայում:

Միցիլիայի յերկրորդ ապստամբության նախորդակին Կապուան ստրուկների լայն շարժման ասպարեղ էր: Դիոգորի տեղեկություններով, այս շարժման համար ազդակ հանդիսացավ վոմի Տիտոս Վետտիոսի (Մինուցիոս) ռոմանտիկ պատմությունը: Վետտիոսը հափշտակված էր մի ստրկուհով, վորին սիրելու

պատճառով նա ուզեց հետ գնել նրան, և, միջոցներ չունենալով, նրան վերցրեց ապառիկ: Բայց Վետտիոսը միջոցներ չունեցավ նաև այն ժամանակ, յերբ հասավ վճարման ժամկետը. Վետտիոսը վորոշեց դավադրություն սարքել իրեն վարկավորողների դեմ: Նա սպառազինեց իր 400 ստրուկներին, նրանց ուղարկեց գյուղերը և համոզեց ապստամբություն բարձրացնել: Իսկ իրեն նա թագավոր հայտարարեց, շրջապատվեց լիկտորներով (պատվավոր պահակներ) և դիմեց դեպի ստրկատիրական կալվածքների գրավումը: Շուտով նրա մոտ հավաքվեցին մոտ 700 հոգի: Հոռմի, իմանալով շարժման մասին, նրա ջախջախման և փախստակ ըստրուկներին բռնելու համար ուղարկեց պրետոր Լուցիոս Լուկուլյոսին: Վերջինս, համնելով Կապուա, այնտեղ հավաքեց 4500 հոգուց կազմված բանակ, իսկ Վետտիոսի բանակն այս ժամանակամիջոցում արդեն հասել էր 3500 հոգու: Նա գրավեց Կապուայի մոտակա ամրացրած բլուրը և պատրաստվեց դիմավորելու թշնատուն: Յերբ առաջին ընդհարման ժամանակ ստրուկները ջարդեցին հոռմեյական զորքերին, Լուկուլյոսը խորամանկության դիմեց, նա կաշառեց Վետտիոսի զորավար Ապուլլոնիոսին: Վերջինս մատնեց ամբողջ ապստամբությունը և հանձնեց իրեն իսկ՝ Վետտիոսին:

Այս շարժման մեջ կարևոր է, իհարկե, վոչ թե Վետտիոսի ռոմանտիկ պատմությունը, այլ այն հանգամանքը, վոր ստրուկներն ամեն բուպե պատրաստ էյին ընդհարվելու շահագործողների հետ և պատրաստ էյին ամեն մի առիթ ոգտագործել պայքարելու համար հանուն իրենց ազատագրության: Վետտիոսի շարժումը վկայում էր, վոր ապստամբության համար հողը պատրաստված էր, վոր ապստամբության համար հողը պատրաստված էր Հոռմի հանրապետության շատ վալրերում: Նույն Դիոգորի տեղեկություններով, «այս ապստամբությունը (վետտիոսի:— Ա. Մ.) սիցիլիականի նախորդակին ստրուկների ամենամեծ ապստամբությունն էր, մի տեսակ նրա նախերգանքը հանգիստնալով»:

ՅԵՐԿՐՈՐԳ ԷՆԴԱՓՈՆՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Ի՞նչն առիթ ծառայեց Սիցիլիայի նոր ապստամբության համար:

Այս հարցի վերաբերյալ մենք ավյալնք ունենք նույն Իրոզորից, վորին պատմագրությունը շատ բան է պարտական նրա վկայությունների համար, վորոնք հանդիսանում են կարե-վորագույն փաստագրերից մեկը՝ հին ժամանակների ստրուկների վազ շարժումներն ուսումնասիրելու համար:

Սիցիլիայի յերկրորդ ապստամբության վերաբերյալ մենք հետևյալ տեղեկություններն ենք գտնում Իրոզորի մոտ: Յերբ հյուսիսից Հռոմի վրա սկսեցին արշավել կեմքների ցեղերը (հավանաբար կելտերի), սենյանն առաջարկեց զորավար Մարիոսին՝ դաշնակից պետություններին հրավիրել ոգնելու Հռոմին:

Մարիոսը դեմեց Նիկոմեզ Իիթինացուն, ինդրելով ոգնություն ցույց տալ բայց նա պատասխանեց, վոր չի կարող զորք ուղարկել, վորովհետև նրա քաղաքացիները մեծ մասին տարել են հոտեյական կապալառուները և վաճառել իրրև ստրուկներ: Այն ժամանակ սենյալը վորոշում հրատարակեց ազատելու բոլոր ազատածին դաշնակիցներին և առաջարկեց այս հարցով զբաղվել նահանգների գլուխ կանգնած պրետորներին: Սենյատի այս վորոշման համաձայն սիցիլիական պրետոր Լիցինիոս Ներվան սկսեց ազատել ստրուկներին: Բոլոր ստրուկները հույս ունեյին ազատվելու, բայց Ներվան ազատեց միայն մոտ 800 հոգի, վորովհետև սենյատի վորոշումից զժգո՞ ստրկատեր ազնվականությունը կաշտեց պրետորին և զաղաբեցրեց ազատագրման գործի հետագա քննությունը: Ազատագրվելու համար Ներվայի մոտ յեկամ ստրուկները հայնոյանքով հետ եյին քշվում և վերադարձ-վում իրենց նախկին տերերին: Սա ազգանշան հանդիսացավ ապստամբության համար:

Ապստամբության առաջին կայծը բռնկվեց Սիրակուզի մոտ՝ սրբազան բլրի վրա, վորտեղ հավաքված ստրուկները կազմեցին ապստամբության պլանը: Հենց այն գիշեր 30 ստրուկ սպանեցին իրենց տերերին, իրենց խմբին միացրին դարձյալ մոտ 200 ստրուկ, զբաղեցին մի բարձր տեղ և պատրաստվեցին քաղաքա-

ցիական կռիվ մղելու կեղեքիչների դեմ: Ներվան մի դավաճանի միջոցով իմացավ պատրաստվող ապստամբության մասին, և մարեց այս առաջին կայծը: Բայց հաղիվ նա կարողացել էր այս անկ, յերբ ապստամբություն բռնկվեց մի այլ տեղ:

Յերկրորդ ապստամբություն սկսվեց Սիցիլիայի մի այլ տեղում և արդեն վիթխարի չափեր ընդունեց:

Կղզու արևմտյան մասում, Հերոկլիտ քաղաքի մոտ, 80 ստրուկ հոշոտեցին հոտեյական անվանի ձիավոր Պուբլիոս Կլոնիային և սկսեցին ուժիբ հավաքել ապստամբության համար: Այս ապստամբությունն այնքան անսպասելի յեր պրետոր Ներվայի համար, վոր նա միանգամայն անպատրաստ էր նրան ձնշելու: Նրա մոտ մար, վոր նա միանգամայն անպատրաստ էր նրան ձնշելու: Նրա մոտ քիչ ուժ էր մնում, իսկ ապստամբների քանակը գնալով մեծանում էր: Ստրուկներն ամբարձրեցին իրենց արամագրության և պատրաստ եյին կռիվ ընդունելու, իրենց արամագրության տակ ունենալով 2000 հոգուց կազմված զորամաս: Ներվան յեկավ Հերակլիտ, բայց վախկոտությունից չհամարձակվելով ինքը հանդես գալ խռովարարների դեմ, հրամանատար նշանակեց Մարկոս Տացինիոսին: Ստրուկները վախուստի մատնեցին Տացինիոսի զորքը, գրավեցին նրա դեմքը և շարունակեցին ամբարձրել իրենց բանակը: Շարժումն աճում մեծանում էր: Ապստամբների իրենց բանակը: Շարժումն աճում մեծանում էր: Ապստամբների բանակում կար մոտ 6 հազար մարդ, այժմ հարց առաջացավ սպստամբներին կազմակերպելու և բանակում համապատասխան կարգ ստեղծելու մասին: Իրոզորի տեղեկություններով մեծ ժողով գումարվեց, սրա ղեկավարություն համար ընտրվեց խորհուրդ, վորը կազմվեց «բանականությունը աչքի ընկնող մարդկանցից»: Այնուհետև ստրուկները թագավոր ընտրեցին Մարկիոս անունով մի ստրկի, վորը փորձված մարդու համբավ ուներ զոհված կենդանու ներսի մասերից գուշակելու և զանազան թատերական ներկայացումներում ֆլեյտա նվագելու մեջ:

Թագավոր ընտրվելով՝ Մարկիոսը ձեռնամուխ յեղավ ոսոք մական կազմակերպության և սկսեց կարգի բերել ապստամբների բանակը: Վերջինս բաժանվեց յերեք մասի, ընդվորում յուրաքանչյուրի գլուխ կանգնեցվեց հատուկ հրամանատար: Այս յեքանչյուրի ղեկավարներին Մարկիոսը հրամայեց հետախուզություններ բեք բանակներին Մարկիոսը հրամայեց հետախուզություններ կատարել, ուսումնասիրել վայրը, հարձակումներ գործել: Վորոշակի Ժամանակից հետո հրամանատարները պետք է հավաքվեյին մի

տեղ՝ խորհրդի: Այսպիսի վերակազմութեան հետեանքով բանակը դարձավ շատ մարտունակ. նա ուներ մոտ 2 հազար հեծյալ, մոտ 20 հազար զինված ու մարզված հետակի: Ապստամբները բավականաչափ անասուններ և ձիեր ունեցին և այժմ նրանք կարող էին պատրաստվել լայն հարձակում դործելու հարստահարիչների դեմ: Մարվիտը շարժվեց դեպի Մորզանտին քաղաքը, պաշարեց, բայց նրան չհաջողվեց այս քաղաքը գրավել, վորովհետև նրա պաշտպանութեան համար կանչված էին ստրուկներ, վորոնց որս փոխարեն տերերը խոստացել էին ամբողջովին ազատել: Ստրուկները պաշտպանում էին Մորզանտինան, բայց, չստանալով խոստացված ազատութեանը, փախան Մարվիտի մոտ, վորն այսպիսով անհաջողութեանից ավելի շատ շահեց, քան մորզանտինի տերերը:

Սրա հետ միաժամանակ ապստամբութեան կայծ բռնկվեց Սիցիլիա կղզու արևմտյան կետում, Լիլիբեյ քաղաքի մոտ: Այստեղ ապստամբութեանը գլխավորում էր Աթինիոն անունով կիլիկիացի մի ստրուկ՝ սաղմական գործում շատ փորձված մարդ, արտասովոր չափով յեռանդուն ու համարձակ: Նա նույնպես, ինչպես և Մարվիտը, շրջապատված էր միատիկ փառապաշակով, աստղագետի, գուշակույի ու աստղերով ապագան նախատեսողի համբավ ուներ: Թագավոր ընտրվելով՝ Աթինիոնն արագորեն հավաքեց 10 հազար հոգուց կազմված բանակ: Իբրև խելոք և, ըստ յերևույթին, ստրուկների նախկին ապստամբութեանները լավ ուսումնասիրած մարդ, Աթինիոնը, նախ, այնուամենայնիվ, ձեռնարկեց իր բանակի կազմակերպման: Իր մոտ յեկող ստրուկներից նա ընտրում էր միայն ամենաուժեղներին ու ամենահուսալիններին, իսկ մնացած մասային նա հրամայում էր մնալ իր նախկին աշխատանքում և, հավանաբար, ազատվելով ստրկատերերից, անտեսութեանը վարել այնպես, վոր, Դիոդորի արտահայտութեամբ, «այնտեղ կատարյալ կարգ պահպանվի»: Աթինիոնը միքանի անգամ է տվել այս անտեսական հրահանգները: Այսպես, մի ուրիշ տեղ Դիոդորը հաղորդում է մեզ, վոր ապստամբութեան այս առաջնորդը, աստղերով գուշակելով, հաստատում էր, վոր Սիցիլիայում նոր թագավորութեան կլինի, նա՛ Աթինիոնը, կլինի նրա թագավորը, ուստի և անհրաժեշտ է խնայել յերկիրը, կարգ պահպանել անտեսութեան մեջ և հետևել

գույքի, պաշարների և անասունների անվնաս մնալուն այնպես, ինչպես իր սեփականութեանը: Ստրուկներին տրված այս խրատը՝ խնայել ստրկատերերից գրավված հողը Վերև և իր սեփականը», չափազանց ուշադրով տեղ և մեզ հասած փաստագրի մեջ, վորովհետև այն լույս է սփռում ապստամբների անտեսական կազմակերպութեան վրա սիցիլիական յերկրորդ ապստամբութեան շրջանում, համարյա հինգ տարվա ընթացքում:

Սիցիլիայի առաջին ապստամբութեան ծրագրային դրույթի համեմատութեամբ, այստեղ՝ յերկրորդում, աչքի յեն ընկնում միանգամայն նոր մոմենտներ: Յեթե առաջին խնդիրն էր պահպանել մանր գյուղացիական անտեսութեանները, ապա յերկրորդ ապստամբութեան մեջ խնդիրն, ըստ յերևույթին, հանդիսանում է ստրուկների գրաված ստրկատիրական անտեսութեանների ինչվոր ինքնուրույն կազմակերպումը: Դժբախտաբար մենք վոչ մի ավյալ չունենք դատելու համար այն մասին, թե վորպիսին էր այս կազմակերպութեանը: Միայն մի ցուցում, վոր անհրաժեշտ է գույքը խնայել Վերև իր սեփականը» — հարկադրում է յենթադրելու այս սեփականութեան վորոշ տեսակի կոնկրետ կառավարման վերաբերյալ, մի սեփականութեան, վոր այժմ դարձել է ստրուկներինը:

Աթինիոնն իր բանակով հարձակում սկսեց արևմուտքում: Ամբողջ Սիցիլիան գտնվում էր հեղափոխութեան բոցերի մեջ: Կենտրոնն ու հարավ-արևմուտքը հանդիսանում էին Մարվիտի գործողութեանների վայրը, ծայրահեղ արևմուտքում այժմ գործում էր Աթինիոնը: Աթինիոնը շարժվեց Լիլիբեյ քաղաքի վրա բայց, չնայած նրան չհաջողվեց գրավել այս քաղաքը, սակայն ապստամբութեանը շարունակեց աճել ու ծավալել: Ստրկատերերին սարսափ պատեց իրենց վիճակի համար: Նրանց միակ հույսն այն էր, վոր յերկու առաջնորդները կհովեն միմյանց դեմ, կթուլացնեն իրենց ուժերը և ստրկատերերին հնարավորութեան կտան հաշիվ տեսնելու ապստամբների հետ, բայց այս հույսը խորտակվեց: Յերբ Մարվիտը Տրիոկալա քաղաքին մոտենալիս իմացավ, վոր Աթինիոնը հեռու չի գտնվում, նրա հետևից մարդ ուղարկեց, «ինչպես թագավորը զորավարի հետևից»: Աթինիոնն իր ամբողջ զորքով շարժվեց դեպի Տրիոկալա: Իջրորը կարծում էին, թե նա կվիճարկի առաջնութեանը Մարվիտից, վորը մինչ այդ թագավոր

եր հայտարարված Տրիֆոն անունով, սակայն Աթինիոնը յեկով Տրիոկարա, միացավ Տրիֆոն թագավորի հետ և, նրան յենթարկվելով, նրանից բանակի հրամանատարի նշանակում ստացավ: Մասն գագաթնակետն էր, վոր ցուցադրեց ասպտամբների ուժերի կատարյալ միասնականությունը և թշնամիների հաշիվների կատարյալ ձախողումը:

Այս բարձրագույն կետը Սիցիլիայի ասպտամբություն զարգացման մեջ բնորոշվում է վոչ միայն կովի ղեկավարություն կատարյալ միասնականությունը, այլև ազատ գյուղացիություն մասնասյական անցումով ստրուկների կողմը: Դժվար է ճշգրիտ պարզել, թե ինչ խնդիրներ էր հետապնդում Սիցիլիայի ազատ բնակչություն մանր-գյուղացիական մասն այս յերույթի մեջ, միայն կարելի յե յենթադրել, վոր Սիցիլիայի չքավորների յերույթն ստրուկների կողմում ինչդիր ունեւր գրավել տարկատերերի հողերը և եքսպրոպրիացիայի յենթարկել նրանց գույքը, վորովհետև պրոլետարականացած արտադրողները սովորաբար հանդես եյին գալիս հողը գրավելու և վերաբաժանելու պահանջներով: Աղբյուրներում վոչ մի ցուցում չի մնացել այն մասին, թե ինչպես էր ընթանում ստրկատերերի եքսպրոպրիացիայի և նրանց սեփականություն վերաբաշխման այս պրոցեսը: Կա Դիոդորի միայն մի ցուցումը, վորից յերևում է, վոր չքավորության գյուղացիական շարժումն ընթանում էր տարերայնորեն, անարխիկ կերպով և առանց ստրուկների ու նրանց առաջնորդների պատշաճ ղեկավարություն: «Վոչ միայն ստրուկները, այլև ազատների միջից չքավորներն էլ,—ասում է Դիոդորը,—անձնատուր եյին լինում ամեն տեսակ անկարգությունների ու կողոպուտների, անամոթաբար սպանելով իրենց պատահած ստրուկներին ու ազատներին, վորպեսզի իրենց խենթություններին վկաներ չլինեն»: Այս տեղեկություն մեջ, անտարակույս, դուրս և ցցվում գրողի դասակարգային գնահատությունը, իսկ նրա համար այս բոլոր իրադարձությունները բեկվում էյին ստրկատիրական հայացքների պրիզմայի միջով: Մակայն կարելի յե համարձակ կերպով յենթադրել, վոր ստրուկների ու գյուղացիություն միջև բավականաչափ միասնակարություն, միպտեղ պաշքարի ճիշտ կազմակերպություն չկար Սիցիլիական յերկրորդ ասպտամբություն մեջ: Հենց այս հանգամանքն էր ամբողջ շարժման մեջ մտցնում այն

անարխիայի տարրը, վորի մասին հաղորդում է Դիոդորը: Այս մասնետ վրա հարկ յեղավ կանգ առնել, վորովհետև սա վորոշ չափով բացատրում է ստրուկների պարտություն պատճառները նաև այս ասպտամբության մեջ:

Չնայած հոռմբ ուժերն զբաղված էյին հյուսիսից արշավող կիմրների ցեղերի դեմ կովելով, սենատը, անհանգստացած Սիցիլիայի վիճակով, ստիպված էր ասպտամբության ճնշման համար ուղարկել մեծ բանակ՝ 17 հազար հոգուց՝ կեղեքվածների շարժումների հայտնի խեղդիչ Լուցիոս Լուկուլլոսի հրամանատարությունը: Լուկուլլոսը ճակատամարտ ավեց ստրուկներին Սկիրտեյա ավանի մոտ: Կովի հաջողությունը փոփոխական էր, այն յերկար ժամանակ հակվում էր մերթ մեկ, մերթ մյուս կողմը: Ասպտամբների ուժերի հրամանատար Աթինիոնն ընտիր զորամասի գլուխ անցած՝ կովում էր առաջին շարքերում: Ստրուկները հերոսաբար էյին կովում հոռմայեցիների դեմ, վորոնց կորուստները շատ մեծ էյին: Բայց յերբ վերավոր Աթինիոնն այլևս հնարավորություն չուներ շաքունակելու այս ճակատամարտի հրամանատարությունը, ասպտամբների բանակի վողին ընկավ և նրանք փախուստի դիմեցին: Տրիֆոն թագավորն իր զորքով դիմեց դեպի անմատչելի և լավ ամրացված Տրիոկարան: Իսկ իսպ վերքեր ստացած Աթինիոնը մնաց կովի դաշտում, մեռած իսպ վերքեր ստացած Աթինիոնը մնաց կովի դաշտում, մեռած ձևացավ և գրանով իսկ փրկվեց հոռմայեցիներից: Այս ժամանակամիջոցում Լուկուլլոսը մոտեցավ Տրիոկարային և պաշարեց: Ստրուկներն իրենց առաջնորդի բացակայություն ժամանակ սկսեցին տատանվել: Վոմանք գտնում էյին, վոր հարկավոր է անձնատուր լինել և վերադառնալ տերերին՝ ապավինելով նրանց վողորմածությունը: Վերջապես յերկար վիճաբանությունից հետո հաղթանակեց այն կարծիքը, վոր հարկավոր է իր դասակարգային թշնամիների դեմ կովել մինչև արյան վերջին կաթիլը: Այս ժամանակ կովի դաշտից վերադարձավ Աթինիոնը, վորին Սյուրոլը համարում էյին մահացած: Նա կարողացավ ել ավելի վողորքերը համարում էյին մահացած: Նա կարողացավ ել ավելի վողորքերը համարում էյին մահացած: Նա կարողացավ ել ավելի վողորքերը համարում էյին մահացած: Նա կարողացավ ել ավելի վողորքերը համարում էյին մահացած:

Ստրկատիրական հոռմը, վոր Լուկուլլոսին համարում էր շատ փորձված զորավար, չէր հասկանում պարտություն պատճառները: Նույնիսկ Դիոդորը, վոր բավական մանրամասն նկարագրում է

ստրուկներն զեմ մզված կովի բոլոր եպիգոդները, չի կարող բացատրել Լուկուլլոսի ամոթալի պարտութեան պատճառը: Հետաքրքրական է, վոր նա հետեյալ յենթադրութեանն և անուամ հռոմեյական հրամանատարի խայտառակութեան մասին. «Այն բոլորից, ինչ անհրաժեշտ եր անել պրետորը (Լուկուլլոսը—Ա. Մ.) վռչինչ չարեց կամ իր սեփական անգործունեյութեամբ, կամ կաշառքով»: Մենք չգիտենք, թե վորքան ճշմարիտ է Դիոգորի այս յենթադրութեանը, բայց մեզ հայտնի չէ, վոր Լուկուլլոսը հետ է կանչվել, դատի չէ տրվել և կրել է իր պատիժը:

Սրանից հետո Հռոմն ստիպված եր ուղարկելու ուրիշ պրետորի՝ Գայ Սերվիլիոսին, բայց այս պրետորի բախան էլ չբերեց Սիցիլիայում, նրա զեմ կովելիս ստրուկները ցույց տվին համառութեան, տոկունութեան ու հերոսութեան: Գայ Սերվիլիոսը նույնպես հետ կանչվեց և դատապարտվեց տարագրութեան: Սըրանից հետո սկսվում է Սիցիլիայի հեղափոխութեան վերջին շրջանը:

Այս ժամանակամիջոցում մեռավ ստրուկների պետ Տրիֆոն թագավորը, և նրան ժառանգորդ հայտարարվեց Աթինիոնը, վոր անգուլ յեռանդով շարունակում եր կռիվը հարստահարիչների զեմ: Դիոնիս կասիոսի տեղեկութեաններով, Աթինիոնը վճեց վերցնել Մետանան՝ Սիցիլիայի հյուսիս-արևելյան քաղաքը, վոր Խտալիայից անջատված եր միայն մի փոքրիկ նեղուցով: Մեսսանայի պաշտպանութեան համար Հռոմն ուղարկեց նոր կոնսուլ ընտրված Գայ Ացիլիոսին, վոր հայտնի չեր իր քաջութեամբ: Մեսսանայի կռիվն այնքան կատաղի ընույթ ընդունեց, վոր Աթինիոնը, ստրուկների այդ առաջնորդը, Դիոգորի արտահայտութեամբ, «հերոսական մենամարտի» բռնվեց հռոմեյական կոնսուլի հետ: Այս մենամարտում Աթինիոնն սպանվեց, իսկ հոռմայեցի կոնսուլ Ացիլիոսը խիստ վիրավորվեց գլխից: Հաղթանակը հռոմեյական զորքերինն եր, իսկ ստրուկների փախած ջուկատները զիմեցին զեպի ամբարցրած վայրեր, վորտեղ նրանք, հավանաբար, մտադիր չէին կռիվը շարունակելու հռոմայեցիների զեմ, բայց Ացիլիոսը պաշարեց ստրուկների ամրութեանները և ստիպեց նրանց անձնատուր լինել: Միայն մնաց յերկար ժամանակ պարտութեանից խուսափող ստրուկների մի փոքրիկ ջոկատ Սատիրի զեկավարութեամբ, վոր ընդունում եր հռոմեյա-

կան զորամասերի կռիվը: Ացիլիոսը, ցանկանալով կենդանի բռնել Սատիրի այս ջոկատը, խոտացավ, վոր չէթե ջոկատը հանձնվի առանց կռիվի, ապա բոլորին ազատութեան կշնորհվի և ստրուկները նույնիսկ չեն պատժվի: Զոկատը հանձնվեց, բայց ազատելու փոխարեն Ացիլիոսը շղթայեց բոլոր ստրուկներին և ուղարկեց Հռոմ, վորտեղ նրանք հանձնվեցին դրազիատորութեան: Ըստ ավանդութեան, այս բանն այնքան վիրավորեց ստրուկներին, վոր նրանք, չցանկանալով ծառայել Հռոմի հասարակութեան զվարճութեան համար, վորոշեցին սպանել միմյանց՝ պահակների ու հանդիսականների աչքի առաջ: Սատիրը, ստրուկների վերջին ջոկատի նախկին հրամանատարը, մենակ մնալով բոլորից հետո, սրով խոցեց իրեն: Դիոգորի խոսքերով, այսպես հերոսաբար վերջ դրեց իրեն Սիցիլիական հեղափոխութեան վերջին ջոկատը:

Սիցիլիայի ինչպես առաջին, այնպես էլ յերկրորդ ապստամբութեան ժամանակ ստրուկների հեղափոխութեան կայծերը տարածվեցին Սիցիլիայի սահմաններից շատ հեռու: Մեզ համար նյութի բացակայութեան պատճառով անտեսանելի չեն մնում այն թելերը, վորոնք Սիցիլիական ապստամբութեանը կապել են Հռոմի պետութեան ծայրամասերի ստրկական հուղմունքների պոթկուսների հետ, բայց հազիվ թե պատահական լինի այն հանգամանքը, վոր մի շարք ապստամբութեաններ զուգադիպում են Սիցիլիայի յերկրորդ ապստամբութեան ժամանակի հետ:

Այսպես, Պոսիդոնիոսի տեղեկութեաններից, վոր մեզ թողել է Աթինեյը, հայտնի չէ, վոր Լավրիոնի հանքերում, վորտեղ, ինչպես մենք տեսնք, բազմիցս տեղի եյին ունենում ստրուկների հուղմունքներ, կրկին ապստամբութեան սկսվեց: Ստրուկները վտարի չեյան, կոտորեցին պահակներին, զրավեցին մտադանված Մունիյ ամրոցը և այնտեղ տեղավորվելով, յերկար ժամանակ, առում է Պոսիդոնիոսը, «ամայացնում եյին Ատտիկան»: «Այս բանը պատահում է այն ժամանակ,—հայտնում է Պոսիդոնիոսը,—յերբ Սիցիլիայում էլ տեղի չեր ունենում ստրուկների յերկրորդ ապստամբութեանը»:

ԲՈՍՊՈՐԹԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՕՏՐՈՒԿՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Թե վորքան մեծ էր ստրկատիրական սխտեմի ապրած ճրգ-
նաժամը, վորքան սրա հետեանքով հող էր պատրաստված դա-
սակարգային սուր բաղխումների համար վոչ միայն ըուն Հո-
մում, այլև նրա շուրջը, — մեզ ցույց է տալիս Հոմոմի պետութեան
հետու ծայրամասում Բոսպորի թագավորութեան մեջ ծագած
ապստամբութեանը:

Իհուս 6-րդ դարում հույների հիմնած այս պետութեանը
գտնվում էր Տամանի և Կերչի թերակղզիների վրա: Սա կուլտու-
րական անկախ պետութեան էր, վորի նյութական կուլտուրայի
հուշարձանները դեռ մինչև այժմ բացվում են ԽՄՂՄ հարավում,
Ղրիմում և Կերչի շրջանում: Բայց սկսած 2-րդ դարից, Պոնտոսի
թագավորութեան բարձրագույն հետեանքով, վորը գտնվում էր
Սև ծովի հարավային ափին, Բոսպորի անկախութեանը վտանգ
սկսեց սպառնալ. Բոսպորն սկսեց հեղեղվել Պոնտոսի առետրական
և ուղմական գործակալներով:

Բոսպորի դրութեանը չափազանց ծանր էր սկյութական
ցեղերի՝ հունական քաղաքների վրա հարձակվելու հետեանքով,
վորոնցից առեցեցին Ուլիյն ու Խերսոնեսը, և վորոնք սպառնում
էին նաև Բոսպորին: Այս հանգամանքը վորոշեց ուղադարձել
Պոնտոսի թագավոր Միհրդատ Յեվպատորը, վորն իր գորավար
Դիոֆանտին ոգնութեան ուղարկեց Խերսոնեսին՝ ընդգեմ սկյութ-
ական թագավոր Պալաիի, վոր Սկիպուրի ժառանգորդն էր: Դիո-
ֆանտը, հետ մղելով սկյութների հարձակումը Խերսոնեսի վրա,
բանակցութեանների մեջ մտավ Բոսպորի թագավոր Պերիսագի
հետ Բոսպորի իշխանութեանը Միհրդատ Պոնտոսուն հանձնելու
վերաբերյալ: Պերիսագն ստիպված յեղավ համաձայնելու այս
գործարքին, վորովհետև միայն Պոնտոսի թագավորը կարող էր
Բոսպորը պաշտպանել սկյութական ցեղերի գրոհից: Յեթե այս
գործարքը ձեռնուու յեր Բոսպորի ազնվականութեանը, ապա
Բոսպորի սկյութ սարուկների և գյուղացիութեան համար սա
նշանակում էր ճնշման ուժեղացում, վորը մի տեսակ դառնում
էր կրկնակի ճնշում՝ տեղական սարկատերերի և ոտարերկրյա
իշխանութեան — պոնտական թագավորի ու նրա չինովիակների
կողմից:

Յերբ Բոսպորում իմացան, վոր Պերիսագն իր թագավորու-
թեանը հանձնել է պոնտական թագավոր Միհրդատի իշխանու-
թեանը, ամբողջ ժողովրդական մասսան յերավ ապստամբութեան:
Այս անգամ ապստամբութեանը լայն ազատագրական շարժման
բնույթ ընդունեց՝ նման Արիստոնիկի ապստամբութեանը Պեր-
գամում: Այս շարժման մեջ գլխավոր դեր էին խաղում բոս-
պորյան մագնատների սկյութ սարուկներն սարուկ Սավմակի
գլխավորութեամբ:

Բոսպորի սկյութ սարուկները, վորոնք վոտքի էին
յեղել իր թագավորութեանը Պոնտոսին վաճառած Պերիսագի գեմ,
սպանեցին նրան և թագավոր ընտրեցին իրենց առաջնորդ Սավ-
մակին: Դժբախտաբար մեզ հայտնի չեն այս ապստամբութեան
մանրամասնութեանները: Ըստ մեզ հասած մի արձանագրու-
թեան, վոր լավ ուսումնասիրել է մեր խորհրդային գիտնական
ակադեմիկ Փեքելյովը, կարելի չէ դատել միայն այն մասին, վոր
Սավմակը մտցրեց իր կարգերը և պաշտպանում էր իր պետու-
թեան անկախութեանն ոտարերկրյա նվաճողների ամեն տեսակ
վտանգութեաններից: Նա մոտ յերկու տարի կառավարեց և
նույնիսկ իր անունով դրամ բաց թողեց:

Միհրդատը պատժիչ արշավախումբ ուղարկեց Բոսպոր, բայց
ապստամբութեանը ճնշվեց միայն մեծ դժվարութեամբ: Սավ-
մակը բռնվեց և տարվեց Պոնտոս՝ Միհրդատ թագավորի դատա-
տանին:

Այս ապստամբութեանը տեղի ունեցավ 2-րդ դարի վերջում
և նույնպես իր ժամանակով զուգահեռում է սիցիլիական յերկ-
րորդ հեղափոխութեանը:

Յերկրորդ դարի վերջին և առաջին դարի սկզբին տնտեսու-
թեան ստրկատիրական սխտեմն այնքան էր կեղեքում Հոմոմի և
նրա ծայրամասերի գյուղացիական բնակչութեանը, վոր գյու-
ղացիների ագրարային շարժումներն ու սարուկների ապստամ-
բութեաններն սպառնում էին ավելի վիթխարի չափեր ընդունե-
լու: Հոմոմի մանր գյուղացիութեանն սկսում է ավելի ու ավելի
գիտակցել իր դրութեան ծանրութեանը: Միցիլիայի ապստամբու-
թեանից հետո, վորի մեջ Միցիլիայի գյուղացիութեանն իր հա-
մար էլ յեղք էր տեսնում ծանր դրութեանից, հասունանում է
մանր հողագործների լայն շարժում հենց Հոմոմում: Այս շարժումն
Սարուկների հեղափոխութեանը — 3

արտահայտվեց 91—88 թվերի, այսպես կոչված՝ գաշնակցային պատերազմում:

Մինչև մեր թվականության առաջին դարի զկզքներն Խառիայի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական ամբողջ բնակչութունն իր քաղաքական իրավունքներով բաժանվում էր հոռոմեական քաղաքացիների և «խառիկների» կամ «գաշնակիցների», վորոնք կառավարման ինքնավարութուն էյին վայելում իրենց քաղաքներում (մունիցիպալներում), զինվորական ծառայության բեռը կրում էյին հոռոմեացիներին հավասար, բայց այս ծառայութունը կատարում էյին վոչ թե լեզիոններում, վորոնք կազմված էյին միայն հոռոմեական քաղաքացիներից, այլ այսպես կոչված ոժանդակ զորքերում: Սրա հետևանքով՝ նվաճված ավարը բաշխելիս նրանք շատ անձեռնտու դրության մեջ էյին ընկնում հոռոմեական քաղաքացիների համեմատությամբ: սրա հետ միասին «գաշնակիցներն» իրավունք չունէյին մասնակցելու հոռոմեական քաղաքացիների ժողովրդական ժողովներին, չէյին ոգավում նաև հոռոմեական քաղաքացիության հետ կապված մի ամբողջ շարք ուրիշ արտոնութուններից: Մինչդեռ Խառիայից դուրս, զավառներում «գաշնակիցները» հոռոմեական քաղաքացիների հետ միասին ոգավում էյին արտոնյալ դրությունից, վորը նրանց հնարավորութուն էր տալիս առևտրական հարաբերությունները լայնորեն զարգացնելու արևելքում և արևմուտքում: Այսպիսով ներգրավված լինելով հոռոմեական քաղաքականության ընդհանուր շրջապտույտի մեջ, նրանք իրենց վրա զգում էյին նաև նրա հետևանքները: հարստության կուտակում քաղաքային ազնվականության վերնախավերում, քայքայում ու աղքատացում մանր հողագործների մեջ: նրանց և մյուսների շահերը վերջին հաշվով բնավ չէյին զուգադիպում, բայց ավյալ փուլում նրանց միավորում էր հավասար վոչ իրավազոր դրությունը հոռոմեական քաղաքացիների վերաբերմամբ: «Բաշնակիցները» բազմիցս փորձեցին իրենց դրությունը հավասարեցնել հոռոմի քաղաքացիներին: Այս հարցը սերտորեն կապված էր ազրարային հարցի հետ: Գրակքոս յեղբայրներն իրենց ունեցողների պլանի մեջ մտցրին նաև «գաշնակիցների» իրավական դրության հարցի լուծումը: Սակայն նման ունեցողների կիրառման հույսը վաղուց վերացել էր:

Տրիբուն Լիվիոս Դրուզի 91 թվի նոր փորձը՝ իրավունքներ ձեռք բերելու գաշնակիցների համար, նույնպես անհաջողութուն կրեց: Խնքը՝ Դրուզն սպանվեց իր սան շեմքին: Այն ժամանակ գաշնակիցներն ապստամբութուն կազմակերպեցին, վորի հետևանքով քաղաքային բնակչութունն ստացավ քաղաքացիական իրավունքներ: Այս ապստամբութունը վոչինչ չտվեց գյուղացիներին: Հոռոմեական կապալառուները, հողային մագնատներն ու խոշոր սարկատերերը շարունակում էյին իրենց ձեռքը հավաքել Խառիայի մանր հողագործների հողերը: Գյուղացիության չքավոր մասն սկսում էր գիտակցել, վոր գլխավոր բանը, վորին պետք է ձգտել, — այդ սեփականության վերաբաշխումն է, վորովհետև քաղաքացիական իրավունքներն ինքնին քիչ բան են նշանակում: Բայց գյուղացիներն ինքնուրույն չէյին կարող յեղնել, այս պատճառով սկսվում է սպասելու և իր դրության հետ ժամանակավորապես հաշտվելու մոմենտը:

Գյուղացիությունն ազատորեն շունչ քաշել կարող էր միայն ամբողջ Խառիայում ծավալված՝ ստրուկների սպարտակյան հեղափոխությունն սկսվելուց հետո: Այս հեղափոխությունը նախապատրաստված էր ստրուկների ամբողջ նախընթաց շարժումներիով, վոր այժմ փոխադրվեցին ամբողջ Խառիայի լայնարձակ տարածությունների վրա և իրենց շարքերն ընդլրկեցին վոչ միայն ստրուկներին, այլև գյուղացիներին չքավոր մասսաներին:

ՍՊԱՐՏԱԿՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՍՊԱՐՏԱԿԻ ՄԱՍԻՆ

Սպարտակն ամենահերոսական զեմքերից մեկն է հին աշխարհի պատմութեան մեջ, բայց հին, բուրժուական գիտութեանը, վոր սիրում է փառաբանել աստվածներին ու հերոսներին, լուսթյան է մատնել Սպարտակի անձնավորութեանն ու նրա հերոսական խիզախութեանը: Հին ժամանակներին վերաբերող բուրժուական պատմութեանը պատմում էր միայն այն հերոսների մասին, վորոնք հանդես չէին գալիս իշխանութեաններէ և հասարակական կյանքի կարգերի դեմ: Նա միայն զբաղվում էր այնպիսի անձնավորութեաններով, վորոնց մասին պատմելով կարելի լինէր հասնել խոնարհութեան, հնազանդութեան և շահագործողների հասարակակարգի ամրացման: Այսպիսի հին պատմութեանը, վոր զգալի չափով հենվում էր ավետարանի վրա, զանազան սուրբ գրութեանների հեքիաթների վրա, խնդիր ունէր որորոգ հեքիաթ ստեղծել հին, բարի ժամանակների վերաբերյալ, վորի մեջ տեսնում էին «յերջանկութեան և առաքինութեան»:

Այսպիսով ստեղծում էին մի յուրատեսակ իդեոլոգիական նուրբ գործիք, վորը պետք է յերիտասարդութեանը հետ պահեր արդիականութեանից, գասակարգային լարված պայքարից նրանց ուղղորդութեանը հրավերելով հին ժամանակների կողմը, աստվածների ու հերոսների իդիլիական խաղաղութեան կողմը, վորի մեջ էլ առաջարկվում էր իդեալներ վորոնք ժամանակակից կյանքի համար:

Մարքսիստական պատմագիտութեանը վաղուց արշավանք է սկսել հին պատմութեան այսպիսի իդիլիական կառուցման դա-

սակարգային դրույթների դեմ: ԽՍՀՄ-ի պրոլետարական մեծ հեղափոխութեանը վերջ է դրել հին, ցարական Ռուսաստանում գերիշխող դաստիարակութեան սիստեմին ու հին պատմութեան ուսուցմանը: Մարքսիստական պատմագիտութեանն զբաղվում է հին ստրկատիրական հասարակութեանների դասակարգային պայքարի հարցով: Այս պայքարը, վոր այնքան հեռու չէ մեզնից իր ժամանակով, մեզ մոտիկ է իր գաղափարներով, իր գարմանալի տոկունութեան, համառութեան ու անհաշտութեան որինակներով, վոր ցուցաբերել են շահագործողների դեմ մաքառելիս:

Այս տեսակետից մենք չենք կարող հին Հռոմի հերոսական անձնավորութեան՝ Սպարտակի կողքով անցնել: Նախակապիտալիզմի հին պատմութեան մեջ Սպարտակն ստրուկների առաջնորդի այն հղորդեմքն էր, վորի շուրջը կազմվում է լուծվում են անտիկ պրոլետարիատի պատմութեան մի շարք պրոբլեմներ: Սպարտակի՝ հին Հռոմի ստրուկներին ազատագրողի և ստրկատիրական հասարակակարգը կործանողի անվան հետ կապված է ամենափառավոր էջը, ամենալավն այն բանից, ինչ կար անտիկ ստրուկ-պրոլետարի մղած պայքարում ընդդեմ իր տիրոջ: «Սպարտակն ամբողջ հին պատմութեան լավագույն մարդն է, — գրում էր Մարքսը, — խոշոր զորավար (վոչ-Պարիբալդի), ազնիվ բնավորութեան, հին պրոլետարիատի խկական ներկայացուցիչ»): Սպարտակի մասին այսպես է արտահայտվում նաև Լեոնինս իր «Պետութեան մասին» դասախոսութեան մեջ: «Սպարտակը, — գրում է նա, — յեղել է սրանից մոտ յերկու հազար տարի առաջ տեղի ունեցած ստրուկների ամենախոշոր ապստամբութեաններից մեկի ամենականավոր հերոսներից մեկը: Մի շարք տարիների ընթացքում ամբողջովին ստրուկութեան վրա հիմնված և կարծես թե ամենակարող հոմեյակական կայսրութեանը, վոր ցնցումներ ու հարվածներ էր կրում ստրուկների հսկայական ապստամբութեանից, վորոնք գինվեցին և հավաքվեցին Սպարտակի առաջնորդութեամբ, կազմելով հսկայական բանակ»): Սպարտակն իբրև ապստամբութեան առաջնորդ սկիզբ դրեց ստրուկների այն հեղափոխութեան, վորը, ընկեր Ստալինի

*) Կ. Մարքս և Ֆ. Էնգելս. Նամակներ, էջ 119, 1931 թ. ռուսերեն:
 **) Լեոնին. «Պետութեան մասին», տես «Պետութեան և հեղափոխութեան» զրբի 1934 թ. հրատ. 118—119 էջերը:

առատորեն մատակարարում էր Հոռմին, այժմ սկսեց հեռանալ
 ասպարեզից: Հողային մագնատները պրովետարացիները եյին մանր
 հողագործներին և նրանց խառնում բերված սորուկները ընդհա-
 նուր մատայր հետ: Յեթե սրան ավելացնենք սորկատերերի դա-
 ժանությունն ու բռնությունը, վորն ավելի անմիջականորեն եր
 անդրադառնում գլադիատոր-սորուկները վրա, ապա զարմանալի
 չի լինի, վոր այսպիսի դրության մեջ 75 թվի սովից հետո
 ապստամբության պոսթիկում անգի ունեցալ հենց գլադիատոր-
 ների դպրոցում:

Թե ճիշտ չեք սկսվեց ապստամբությունը, աղբյուրները մեզ
 ուզողի չեն ասում: Կարելի չե միայն յենթադրել, վոր Կապուա-
 յի գլադիատորները դպրոցից փախան և Վեզուվում ամրացան
 74 թվի ամառը: Շատ աղբյուրներ անուղակի վկայում են ապս-
 տամբության սկսվելու այս թվականի ոգտին: Այս ժամանակ
 Հոռմի ուժերն զբաղված եյին սերտորիական պատերազմում և
 Միհրդատ թագավորի դեմ մղված պատերազմում, արևելքում:
 Նույնիսկ այս քաղաքի կոնսուլները Հոռմից դուրս եյին և զե-
 կավարում եյին Փոքր Ասիայի ռազմական գործողությունները:
 Միանգամայն հասկանալի չե, վոր այս պայմաններում կառա-
 վարությունը մեծ նշանակութուն չեր տալիս 74 գլադիատոր-
 ների փախուստին: Սրա հետ միասին գլադիատորները ղեռն
 փոքրաթիվ եյին և անբավարար զինված, վորպեսզի ակտիվ կռիվ
 մղեյին Հոռմի դեմ: Ուստի ամբողջ աշունն ու ձմեռը նրանց հա-
 մար պետք ե գառնային ուժերի պարտիզանական հավաքման
 շրջան, վորպեսզի 73 թվի դարնանը կարելի լիներ իսկական
 կռիվ սկսել Հոռմի դեմ:

Կռիվն ակտիվորեն ծավալվում ե իրոք միայն 73 թվից:
 Համենայն դեպս, միայն այս տարվանից ե Հոռմը վճռում կռիվ
 սկսել ասպտամբների դեմ: Ապստամբության առաջնորդ Սպար-
 տակը, վոր Վեզուվ եր փախել իր մերձավոր ողնականներ
 Կրիկսի և Ենոմայի ողնությամբ, վոչ միայն կազմակերպեց մի
 փոքր շոկատ, վորը մշտապես անհանգստացնում եր Կամպանիա-
 յին իր ասպատակություններով, այլե մի քիչ ավելի ուշ կա-
 բողացալ մեծ զորք հավաքագրել հողագործական սորուկներից,
 գլադիատորներից և նույնիսկ ինչպես ասում ե Ապիանոսը,
 «իտալական դաշտերի ազատ քաղաքացիներից»: Ֆլորի վկայու-

թյամբ (2-րդ դար), հարձակողական կռիվն սկսելու նախորդակին
 Սպարտակի մոտ հավաքվեց 10 հազար մարդ, վորոնք սկսեցին
 անհանգստացնել արդեն ամբողջ Կամպանիայի մարզը: Վեզուվի
 հրաբխարեբանը կարծես նորից լավայով լցվեց՝ պատրաստ
 ժայթքելու: Զենք ձեռք բերելով մի շոկատից, վորը ռազմական
 հանդերձանք եր տանում մի գլադիատորական դպրոցի համար,
 և իր զորախումբը համալրելով մարզկանցով, Սպարտակն այժմ
 վճռեց հարձակման անցնել:

Հոռմը, վոր սկզբում անվայել եր համարում պատերազմ
 մղել գլադիատորների դեմ, վերջապես ստիպված եր իր կողմից
 ակտիվ կռիվ ձեռնարկելու Սպարտակի դեմ: Սպարտակին վոր-
 սալու համար ուզարկվեց պրետոր Կլոդիոսի ուժեղ զորամասը,
 վորն անհապաղ դիմեց վճռական գործողությունների: Վորոշ
 ժամանակ անց Սպարտակը շրջապատված եր Կլոդիոսի զորամա-
 սով: Միայն զորավարի իր ձեռքի շնորհիվ Սպարտակը կարողա-
 ցալ ռազմական մի դժվարին տրյուկի միջոցով ձեզքել թշնամու-
 ողակը, դուրս բերել իր զորքը և, անցնելով Կլոդիոսի թիկունքը,
 գլխովին ջարդել նրան: Այժմ կամպանիայի ամբողջ նահանգն
 Սպարտակի իշխանության տակ եր:

Նույն տարվա աշնանը Հոռմը հապճեպ արշավախումբ ե կաղ-
 մակերպում նոր պրետոր Պուբլիոս Վարինիոսի հրամանատարու-
 թյամբ, վորն ուժեղ շոկատով պետք ե կասեցնել Սպարտակի
 առաջխաղացումը, վորը Սամնիումի և Ապուլիայի վրայով շարժ-
 վում եր դեպի Ալբիատիի ծովի ափերը: Բայց Սպարտակը հեր-
 թով ջարդեց Վարինիոսի յերկու քվեստորին և քիչ ֆնաց զերի
 վերցներ իրեն իսկ Վարինիոսին: Բնորոշ ե, վոր Սալլուստիոսի
 (մինչև մեր թվակ. առաջին դար) մի Ֆրագմենտում խոսվում ե
 Հոռմի զորքերի կատարյալ անկումային տրամադրության մա-
 սին, վորոնք ղեռնա մինչև ճակատամարտը ցանկություն եյին
 հայտնել կռվել Սպարտակի դեմ: Ապիանոսը մեզ պատմում ե
 հոռմեյական կողմից անցած փախստականների մասին, վորոնց
 սակայն, Սպարտակը միշտ չե, վոր վերցնում եր իր զորքի մեջ:
 Այս բոլորը, ի միջի այլոց, քավական ցուցադրական ե դաշնակ-
 ցային պատերազմից հետո այն մանր գյուղացիության տրամա-
 դրության համար, վորից հավաքվում եյին հոռմեյական լեզիոն-
 ները և վորը հազիվ թե յենթադրեր, վոր քաղաքացիական իրա-

վունքներ կտանա, վորպեսզի զրանց փոխարեն «աշխատավճարի» աշխատի արշավանքներում, ինչպես պատերազմի Սպարտակի դեմ:

Հոռոմեյական բանակի այս վիճակը նպաստեց ստրուկների բանակի մեծացման և քանակական ու բարոյական գերակշռություն ստեղծեց Սպարտակի զորքի համար: Ստրուկների մասսաները, ազատ գյուղացիներն ու փախստակները շարունակում էին լցվել նրա զորքի մեջ: Բանակն աճում և սպառնալից ուժ էր դառնում Հոռոմի համար: «Այժմ,—ասում է Պլուտարքոսը,— Սպարտակը հզոր էր ու սարսափելի, և ապստամբության ամօթից ու խայտառակությունից չէ մեկնակ, վոր վրդովված սենատն ստրուկների դեմ ուղարկում է 72 թվի յերկու կոնսուլներին էլ»:

Մինչ այդ ապստամբների շտաբում տարածայնություններ սկսեցին ապստամբության ղեկավարներ Սպարտակի ու Կրիկսի միջև ստրուկները պայքարի հետագա պլանի և նրանց հետագա արշավանքների պլանների շուրջը: Այն ժամանակ, յերբ Սպարտակը, առաջնորդվելով ստրուկների ազատագրման իր պլանով, առաջարկում էր շարժվել դեպի Ալպերը՝ Գաղիա, և, զրանք անցնելով, ստրուկներին վերագարձնել իրենց հայրենիքը, մյուս առաջնորդ Կրիկսը պնդում էր Հոռոմի դեմ կռվելու և հոռոմեյական մարզերի հետագա եքսպրոպրիացիայի վրա: Տարածայնությունները հանգեցին այն բանին, վոր Սպարտակն իր պլանն իրականացնելու համար շարժվեց դեպի հյուսիս, իսկ Կրիկսը գերմանացիների մի զորախմբով անջատվեց Սպարտակի զորքերից և մնաց հարավում: Շուտով այս այն հետևանքն ունեցավ, վոր Կրիկսը դեմ առնելով Լյուցիոս Գելլիոս կոնսուլի զորամասին, Գարգան լեռան մոտ պարտություն կրեց, մինչդեռ Սպարտակը, մեջ տալով Հոռոմը, իր ամբողջ զորքով շարժվեց դեպի Ալպերը, ցանկանալով ստրուկներին վերագարձնել իրենց հայրենի յերկրները:

Այս տարածայնությունները մեզ համար միանգամայն հասկանալի չեն և հետագայում հարկ կլինի նրանց վրա ավելի մանրամասն կանգ առնել: Բնական է, վոր ապստամբության զարգացման այս փուլում, յերբ նա ընդգրկել էր Իտալիայի վոչ միայն հարավային, այլև հյուսիսային մասը, յերբ 120 հազար ստրուկների միանալուց հետո կովի գործնական հարցերը վեր-

աճում դառնում էին ամբողջ Իտալիայի ստրուկների ազատագրման պլանի ընդհանուր հարցեր, ապստամբների շտաբի տարածայնություններն էլ ավելի սրվեցին, սկզբունքային բնույթ ընդունեցին և բեկում մտքերին ամբողջ շարժման մեջ: Այս տարածայնություններն իրենց մասին զգալ էին տալիս նաև ավելի ուշ: Յեթե տվյալ փուլում Սպարտակի զորքերից անջատվեց Կրիկսն իր զորամասով, ապա հետագա շրջանում—Կրասոսի յեյուլթը տարածայնությունների հողի վրա—Սպարտակից անջատվեցին նաև ուրիշ շոկատներ:

Տարածայնություններն ոգնեցին Հոռոմին կասաղի հարձակում սկսելու Սպարտակի դեմ: Կրիկսը ջախջախվեց և ինքն էլ ընկավ: Այլևի շուտ ընկավ Ենոմայը մեզ անհայտ հանգամանքներում: Հնարավոր է, վոր Ենոմայն ընկավ Սպարտակից հեռանալու հետևանքով:

Յերկու կոնսուլն էլ սկսեցին հարձակվել Սպարտակի վրա: Բայց ստրուկների առաջնորդն այստեղ էլ գտնվեց իր բարձրության վրա իբրև ռազմական գորավար: Նա գորահավաքեց իր բոլոր ուժերը, զրանք դատավորեց կանոնավոր շարքերով, կողմեց հարձակման պլան ու հերթով, իսկ հետո նաև միասին ջարդեց յերկու կոնսուլներին էլ, վորից հետո անարգել մտավ Գաղիա և Մուսինայի ճակատամարտում ջարդեց նրա փոխարքա, պրովոնսուլ Կասիոսի զորքին:

Այժմ ամբողջ Իտալիան, Գաղիայից մինչև Բրուտիական թերակղզին, բռնված էր ապստամբության հրդեհով: Վոչ վոք չէր կարող կանգնել ստրուկների դեմ, վոչ վոք չէր համարձակվում ստանձնել հրամանատարությունն Սպարտակի դեմ, և 72 թվի առնանել հրամանատարությունն Սպարտակի դեմ կռվելու նշանը սենատը մեծ դժվարությամբ թեկնածու գտավ ստրուկների դեմ հրամանատար կարգելու համար: Սպարտակի դեմ կռվելով իր համար կարյերա ստեղծելու հետ համաձայնեց վաշխատուսպեկուլյանտների մեջ ճարպիկ հարուստ, ձիավորների դասից մի դուրս պրճած, ապագա կոնսուլ Մարկոս Կրասոսը:

Կրասոսի յեյուլթով սկսվում է ստրուկների համաիտալական շարժման վերջին շրջանը: Մեծ ուժեր գորահավաքելով, զորքի մեջ կանչելով նույնիսկ նրանց, «վորոնց ձեր մարմնի մեջ,—Սալլյուստիոսի վկայությամբ,—դեռ կենդանի յեր ռազմական վոգդին», և, այսպես կոչված, դեղիմիցիայի միջոցով (շարքի մեջ յուրաքանչյուր տասերորդին մահապատժելով) հաշվետես կատա-

ընելով այն զորքերի հետ, վորոնք չէյին ուզում կովել ստրուկներն զեմ, Կրասոսը հանգես յեկավ Սպարտակի զեմ, մտադրվելով մի ճակատամարտում վերջ տալ նրան:

Կամպանիայի հարավում, Պիցենտյան մարզի սահմանադիրին կանգ առնելով, Կրասոսն սպասում եր Սպարտակին, վորն իր զորքերի ճնշմամբ, թե փոխելով իր սկզբնական սլանը, վորոշել եր Ալպերից կրկին շարժվել հարավ, հոռոմեյական զորքերին ընդառաջ: Կարելի չե յենթադրել, վոր Սպարտակը, հաշվի առնելով Ալպերից անցնելու դժվարությունները և աշակցություն չստանալով հյուսիսի ուժեղ գյուղացիությունից, փոխեց ստրուկներին զուրս հանելու սլանը և ուղղվեց հարավ, մտածելով անցնել Սիցիլիա և այնտեղից ծովային ճանապարհով ստրուկներին հասցնել իրենց հայրենի յերկրները: Կրասոսի հետ առաջին անգամ հանդիպելիս Սպարտակին հաջողվեց շարդել նրա զորամասը: Ստրուկների բանակը կրկին շարժվեց զեպի Լուկանիա և այնտեղից զեպի ծով, վորպեսզի այժմ իրականացնի նոր սլանը:

71 թվի ամառն անցավ ստրուկների հետ Կրասոսի համար անհաջող ընդհարումներով: Վերջապես, սպարտակին հետ մղելով Բրուտտիական թերակղզին, Կրոսոսը վորոշեց ամբողջ պարանոցով անցնող հսկայական փոսով, պատնեշով ու ցանկապատով մեկուսացնել ստրուկներին և թույլ չտալ նրանց հյուսիս վերադառնալու: Այնուհետև վորոշելով մի շարք հարձակողական զործողություններ ձեռնարկել ստրուկների զեմ, Կրասոսն ոգնության կանչեց Պոմպեոսին: Բացի սրանից, Ապիանոսն ասում է, վոր շուտով Լուկուլլոսն ել Փոքր Ասիայից Հռոմ գնալու ճանապարհին ափ իջավ Բրուենդիդի, վորպեսզի ոգնություն ցույց տա Կրասոսին: Սպարտակը դժվարին դրության մեջ ընկավ: Իր ամբողջ սրամտությամբ ու համարձակությամբ հանդերձ Սպարտակին չհաջողվեց անցնել Սիցիլիա, վորովհետև Կիլիկիայի ծովահենները չկատարեցին ստրուկներին նեղուցով անցկացնելու իրենց խոստումը:

Ժամանակ շահելու նպատակով Կրասոսի հետ ձեռնարկված բանակցությունների փորձերը նմանապես անհաջողություն կրեցին: Վերջապես, հենց ստրուկների բանակում զորքի մի մասն արշավանքների սլանի վերաբերյալ տարաձայնությունների հողի վրա անշատվեց Սպարտակից: Այն ժամանակ, մնացած Իտալիա-

յից կտրված և մթերքի պաշարեղենի սուր կարիք զգալով, Սպարտակը վճռեց ձեղքել Կրասոսի ամրությունները, մտադրելով իրագործել իր արդեն նոր սլանը՝ արշավանքը Բրուենդիդի: Մութ գիշերով, ընտրելով հարմար մոմենտը, Սպարտակը ձեղքում է Կրասոսի ամրությունները և շարդում նրա զորքը: Ստրուկների բանակը միանգամից ընկավ Լուկանիա և կարողացավ շարժվել առաջ, զեպի հյուսիս: Այն ժամանակ Կրասոսը, տեղեկություն ստանալով Պոմպեոսի մոտենալու մասին և չցանկանալով, վոր նա տիրանա Սպարտակին հաղթողի փառքին, վճռեց վորոշ հետապնդումից հետո վճռական ճակատամարտ տալ ստրուկներին: Այս ճակատամարտը վերջինը յեղավ ստրուկների համար, վորովհետև նրանք չկարողացան այլևս դիմանալ Կրասոսի զորքի զրոհին: Նրանց առաջնորդը, ինչպես վկայում են աղբյուրները, առաջին շարքերում կովելիս ընկավ հերոսական մահով:

Պոմպեոսն ասում է: «Այսպես ընկավ ավագակային մեծ խրմբապետը»: Ապիանոսի տեղեկություններով, զեպի բուն վաժ 6 հազար ստրուկն և ըր կախվեցին Կապուա յից մինչև Հռոմ ընկած ամբողջ ճանապարհին:

Սպարտակն ընկավ, բայց նրա բանակի մնացորդները դեռ յերկար ժամանակ շարունակում եյին կռիվը. ապստամբությունը դեռևս չեր մարել: Որինակ, Ցիցերոնի տեղեկություններից մենք իմանում ենք, վոր մի փոքրիկ ջոկատ դեռ յերկար ժամանակ դիմաճում եր Բրուտտիական Տեմես փոքրիկ քաղաքում, հարձակվում եր այնտեղից, քաղաքներ եր վերցնում Իտալիայի հարավում և ստրուկներին համախմբում իր շուրջը: Այս է ընդհանուր ու համառոտ գծերով բուն ապստամբության ընթացքի պատմությունը: Վվետոնիոսի վկայությամբ, սպարտակյան զորքերի վերջին ջոկատները սենատի հանձնարարությամբ վոչնչացրեց Գայ Ոկտավիոսը միայն 62 թվին մինչև մեր թվականությունը:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սպարտակի ապստամբության պատմությունից և ստրուկների իրենց ազատագրության համար մղած համախառնական պայքարի հիմնական փուլերի բնութագրությունից մենք այժմ պետք է անջատենք այս շարժման այն ավելի ընդհանուր հարցերը, վորոնք կազմում են սպարտակյան հեղափոխության յուրացրել, վորոնք կազմում են սպարտակյան հեղափոխության յուրացրել, վորոնք այս ապստամբությունը

բարձրացնում ու զատում են ստրուկների հին ժամանակների մյուս ապստամբություններից: Կարելի չէ նշել այսպիսի յերեք հարց:

Առաջին հարցը, քաղաքացիական պատերազմի կազմակերպումն և ստրուկների ապստամբության մեջ, վորն առաջին անգամ որինակ տվեց կռիվը մինչև վերջ հասցնել կարողանալու և դասակարգային կռվում ապստամբությանն, իբրև արվեստի մի առանձին տեսակի, տիրապետել կարողանալու վերաբերյալ: Յերկրորդ հարցն ապստամբության մասնայական լինելու հարցն է, ապստամբների սոցիալական կազմի հարցը, վոր Հոռոմի պայմաններում շատ պարզորոշ նշում եր ապստամբության դասակարգային բնույթը: Յե՛վ, վերջապես, վերջին հարցը, վորի լուստի տակ միայն կարելի չէ բմբանել նախորդ յերկուսը,—դա Ս պ ա յ Ր տ ա կ ի ա պ ս տ ա մ բ ու թ յ ա ն ս ո ճ ի ա լ ~ ք աղ ա ք ա կ ա ն ծ ը ա գ ը ի կ ա ը ե ո Ր հ ա ը ց ն է: Այս բոլոր հարցերը հարկ կա ձևակերպելու միայն նրանց զբման և վոչ թե նրանց ինչ-վոր վերջնական լուծման կարգով, վորովհետև աղքատիկ աղբյուրները մեզ բավականաչափ հիմք չեն տալիս զբա համար: Աղքատիկ աղբյուրներին, վորոնք հատ ու կտոր անդեկություններ են տալիս ըստրուկների պայքարի պատմությունից, ոգնության պիտի հասնի փաստաթղթերով ստուգված գիտական հիպոթեզը, վորպեսզի այսպես թե այնպես պատասխան տրվի այս հարցերին:

Առաջին հարցը լուսաբանելու մեջ մեզ ոգնում են առանձին եպիզոդներ, վերցրած Սպարտակի ռազմական ընդհարումներից, նրա կռվի տակտիկայից և ստրուկների բանակի կազմակերպությունից: Մի շարք դեպքերում Սպարտակը մեզ ցույց տվեց, թե ինչ վարպետությամբ նա կարողանում եր ոգտովև ռազմական արվեստից դասակարգային կռվում:

Վորպես կոնկրետ որինակ վերցնենք յերկու դեպք: Առաջինը, դա Կլոդիոսի հետ կռվելու եպիզոդն է ապստամբության սկզբնական շրջանում, յերբ փախած գլադիատորների մի փոքրիկ խումբ ամբողջով Վեզուվում, ուժեր հավաքեց հետագա կռվի համար: Կլոդիոսը բոլոր կողմերից սպարտակին շրջապատեց մի զորամասով, վորը քանակապես զգալիորեն գերազանցում եր ստրուկներին, և սպասում եր ստրուկների շուտով հնազանդելուն: Գլադիատորների զրությունը բացառիկ ծանր եր, վորովհետև նրանց սողև

կանգնած եր յերեք հազարանոց լեգիոն, լավ զինված, իսկ միակ յեւթը լեռան կողմից, վորով կարելի կլիներ դուրս գալ թագստոցից, արդեն զբավել եր Կլոդիոսը: Թշնամուն չհանձնվելու վճռահանությամբ լցված, պատրաստ, ինչպես ասում է Սալլյուստիոսի Ֆրագմենտը, «ավելի շուտ մեռնելու յերկաթից, քան սովից», Սպարտակը յեւթ և գանում զժվարին, մեծ ոխովի հետ կապված ձեռնարկումից: Գիշերը նա իր զորախմբի հետ ժայռից իջնում է խաղողի վոտերից պատրաստած սանդուխքներով և անցնում թշնամու թիկունքը: Ֆրոնտինը հաղորդում է, վոր Սպարտակի յերեւալը թիկունքում անայլախ սարսափ ազդեց Կլոդիոսի զորքի վրա, վոր այդ զորքն ստիպված եր նահանջելու մի խումբ գլադիատորներից: Համարձակությունը, հնարագիտությունը, ազատագրության համար կռվելիս մինչև վերջ գնալու ցանկությունն այնքան ակնբախ են դարձրել այս եպիզոդը, վոր նրա մասին միաժամանակ վկայում են թե Պլուտարքոսը, թե Ֆրոնտինը և թե Ֆլուրը: Հնարավոր է, վոր Սալլյուստիոսից մեզ հասած Ֆրագմենտը, վոր պահպանվել է միայն յերեք խոսքով՝ «կապված է շղթայի նման», նույնպես վերաբերում է այս եպիզոդին և վկայում Սպարտակի այն աշխատանքի մասին, վոր նա կատարել է Վեզուվից իջնելիս խաղողի վոտերից սանդուխքներ կապելով:

Մյուս եպիզոդը անդի յե ունեցել կռվի վերջին տարում՝ Բրուտատիական թերակցողում: Այս եպիզոդով Սպարտակը ցույց տվեց, վոր նա ապստամբության հետ չի խաղացել, այլ ամեն բոպե հարձակողական գիծ է վարել թեկուզ նրա համար, վորպեսզի գեթ փոքրիկ հաջողություններով իր զորքի մեջ բարոյական գերակշռություն ստեղծի թշնամու հանդեպ: Յերբ Կլիվիա յի ծովահենները, վորոնք խոստացել էյին Սպարտակի զորքը փոխադրել Սիցիլիա, խաբեցին նրան, ստրուկների առաջնորդը վճռեց փոխադրումը կատարել ինքնուրույն:

Սալլյուստիոսը նկարագրում է, թե ստրուկներն ինչպես էյին լաստեր շինում, նրանց տակից տակառների կապելով, վորպեսզի ավելի ապահով լինի: Պարաններ չլինելու պատճառով այս տակառները լաստերին կապվում էյին հասարակ ձյուղերով: Միայն ծովի վրա առաջացած փոթորիկը խորտակեց այս պլանը: Իայց Սպարտակն այստեղ ել չշփոթվեց: Նա մշակեց կռվի նոր պլան և շարժվեց դեպի Կրաստսի ամբությունները, վորպեսզի դուրս գա

Թշնամու ողակից: Հարկավոր եր անհապաղ վերակառուցել կովի առաջուց նշված բոլոր պլանները, վորպեսզի ժամանակ չկորչի և Թշնամին հնարավորություն չունենա շտկվելու: Այն փոսի մեջ, վոր փորել եր Կրասոսն Սպարտակին հյուսիսից մեկուսացնելու համար, սորուկները վառվող ծառերից շինած ջահեր են նետում, մեծ անհանգստություն պատճառելով Թշնամուն: Այսպիսի գրոհները պահպանում եյին Սպարտակի զորքի բարոյական վորոշ մակարդակը, վորը պարենի բացակայության պատճառով գտնվում եր չափազանց ծանր դրության մեջ: Վերջապես, փոքր լցնելով ծառերով, ճյուղերով և սեփական հեծելազորի ձիերի դիակներով, Սպարտակը փոսի վրայով դուրս հանեց իր զորքը, ձեզքեց Կրասոսի ամրությունները և ջարդեց Կրասոսի ջոկատը: Սա նրան հնարավորություն տվեց աշտ արդեն կառուցելու Բրունդիզի արշավելու նոր պլան, վորպեսզի այնտեղից անցնեն իրենց հայրենիքը:

Այս եպիզոդներում, վորոնք ավելի շուտ հետաքրքրական են ուղղակի մասնագետի համար, քան պատմաբանի, կարևոր ե նշել այն հանգամանքը, վոր սորուկները քաղաքացիական պատերազմը վարում եյին զարմանալի կազմակերպվածությամբ, բացառիկ կերպով մորիլիդացիայի յենթարկելով բոլոր հնարավորությունները: Այս եպիզոդները վկայում են, վոր Սպարտակը կարողանում եր քաղաքացիական պատերազմը յենթարկել այն հատուկ որենքներին, վոր նա ունի իբրև քաղաքական կովի մի ձև: Հենց այս մոմենտն առանձնապես տարբերում եր տվյալ ապստամբությունը հին Հռոմի սորուկների նախընթաց բոլոր ապստամբություններից, Միցիլիայի ապստամբություններից և Արիստոնիկի ապստամբությունից: Այս մոմենտն առանձնապես հարկավոր ե նշել զինված ապստամբության, իբրև մի առանձին տեսակի արվեստի վերաբերյալ Լենինի ասույթների կապակցությամբ: Սպարտակը կարողանում եր տիրապետել այս արվեստին, վորպիսի հանգամանքն ել հենց վորոշում եր նրա կովի հաջողությունը հեղափոխության առաջին քայլերի ժամանակ:

Ապստամբության իրականացման կազմակերպական մոմենտների վրա մենք կանգ չենք առնի: Միայն կնշենք, վոր Սպարտակը, անտարակույս, բանակի կազմակերպման հարցին հսկայական նշանակություն եր տալիս: Կլոդիոսին ջարդելուց անմի-

ջապես հետ սորուկների զորքերում կազմակերպվեցին հեծելազոր և ծանր ու թեթև զինված հետևակի ջոկատներ, բանակի ամրացումն Սպարտակի հրամանով հատկապես կատարվեց Պուբլիոս Վարինիոսի հետ ընդհարվելուց առաջ: Բանակի սպառազինումը նույնպես պատշաճ բարձրության վրա յեր գտնվում և, հավանաբար, քիչ բանով եր հետ մնում հռոմեյական սպառազինությունից: Սորուկների բանակում կային դարբիններ, վահաններ եյին շինում, և արհեստանոցներ կազմակերպում սրագին կոելու համար:

Պատերազմի ընթացքում իրենց վրա ուշադրություն են գրավում նաև Սպարտակի տակտիկայի վորոշ մոմենտները խաղաղ բնակչության վերաբերմամբ: Բնորոշ ե, վոր այստեղ ել Սպարտակն իրեն ցույց տվեց իբրև զարմանալի ձկուն քաղաքական առաջնորդ: Այնտեղ, վորտեղ նրա զորքը շփում ուներ բնակչության հետ, նա հանձնարարում եր վոշ մի բռնություն չգործադրել, իսկ բանակի համար անհրաժեշտ նյութեր հավաքելու դեպքում ամեն ինչի համար լրել վճարել: Մանավանդ, ինչպես յերևում ե Մալլուստիոսի վկայություններից, Սպարտակը հանձնարարում եր մանր գյուղացիությանը ձեռք չտալ:

Այսպիսով, մենք բավականաչափ նյութ ունենք հաստատելու համար, վոր ապստամբության մեջ քաղաքացիական պատերազմի կազմակերպումն Սպարտակը դնում եր պատշաճ բարձրության վրա: Բանակի հստակորեն կազմակերպումը, նրա բաժանումը զորքի տեսակների, մատակարարման զործի և զենքի արտադրության հմուտ դրվածքը, գործակցումը բնակչության հետ— այս բոլորն Սպարտակին բարձրացնում հասցնում են մարդկային պատմության մեջ յեղած մեծ զորավարների մակարդակին:

ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տերկրորդ հարցը, վոր կանգնում ե մեր առջև Սպարտակի հեղափոխությունն ուսումնասիրելիս, — այդ սորուկների համատարական ապստամբության մասսայական բնույթի և Սպարտակի բանակի սոցիալական կազմի հարցն ե: Տարակույս չկա, վոր Սպարտակի ապստամբությունն ինքն առաջին առավել կազմակերպված մասսայական շարժումն եր սորուկների բոլոր նա-
Սորուկների հեղափոխությունը—5

խընթաց ապստամբութեաններէ համեմատութեամբ: Ապիանոսի տեղեկութեաններով, Սպարտակի բանակում 120 հազար սորուկ կար: Այս թիվը չի կարելի ճշգրիտ համարել, բայց համեմայն դեպս, այն շատ ցուցական է, վորովհետև հաստատում է, վոր սպարտակի յելուցին սորուկների մասսայական շարժում էր: Ուշադրութեամբ է գրավում նաև այն փաստը, վոր ապստամբութեանը մեծ չափով ընդգրկեց Իտալիայի հարավային մասը և հարավի բնակչութեան վրա ավելի շատ էր հենվում, քան Հյուսիսային Իտալիայի մարզերի վրա: Այս մտմենտների վրա անհրաժեշտ է կանգ առնել ավելի մանրամասն:

Ապիանոսը մեզ հողորդում է, վոր դեռ առաջին շրջանում Վեզով փախած գլադիատորներին հարեցին բազմաթիվ գլադիատորներ և սորուկներ: Կլոդիոսի և Վարինիոսի դեմ գլադիատորների կռիվում մոմենտին՝ 73 թվին սորուկները զորքն արգեն հասել էր մինչև 10 հազար հոգու: Այս թվերը մենք գտնում ենք Տլորի մոտ:

Ապիանոսը վկայում է, վոր Կլոդիոսի և Վարինիոսի պարտութեանից հետո 73 թվին Սպարտակի բանակը մեծացավ և արգեն հասավ մինչև 70 հազար սորուկ:

Շարժման մասսայական բնույթի մասին վկայում է նաև նրա տարածման շրջանը. Կամպանիայից հետո վոտքի յելավ Ապուլիան, Լուկանիան, և այնուհետև ապստամբութեանը տեղափոխվեց Կարբերիա և Բրուտտիա: Ամբողջ հարավային Իտալիան կանգնած էր Հռոմի դեմ և միայն առիթի յեր սպասում Հռոմի դեմ վորեք ապստամբութեան միանալու համար:

90-ական թվականների քաղաքացիական պատերազմները միայն մասամբ լուծեցին ագրարային-գյուղացիական շարժման առաջադրած հարցերը, ուստի պատահական չէ այն հանգամանքը, վոր Հռոմի հատկապես հարավային նահանգները կրկին հանդես յեկան, կազբեր մատակարարելով ապստամբ սորուկներին: Կարելի չէ յենթադրել, վոր այսպիսի կազբեր էյին վոչ միայն ըստբուկները, այլև ազատ մանր գյուղացիութեանը, վորովհետև ագրարային-գյուղացիական շարունակվող ճգնաժամի և սորակատիրական անտեսութեան ի հաշիվ մանր հողագործների ուժեղանալու պայմաններում սա միանգամայն որինաչափական յերեւոյթ էր: Վաշխառուական կապիտալը խոշոր հողատիրութեան

հետ դաշնակցած էլ ավելի խոր ներխուժեց Հռոմի հարավային նահանգները և այնտեղ շարունակում էր ավերիչ աշխատանքը: Միջակ գյուղացիութեանը քայքայվում էր: Մանր հողագործն իր փոքրիկ հողաբաժնով կախման մեջ էր ընկնում իր վարկատու հողային մագնատից: Զինվորական ծառայութեան բեռը, ազմինիստրացիայի ճնշումները, և գլխավորը, հարկերի ուժեղացումը 73 թվի կոնսուլային որենքով,—այս բոլորը կրկնվող անբերբութեան պայմաններում տաժանելի յեր դարձնում հարավային Իտալիայի գյուղացիութեանը: Ուստի 73 թվին՝ ապստամբ սորուկների ակտիվ կռիվ դիմելու տարում, Իտալիկ գյուղացին սկսեց հասկանալ, վոր նրա կողմից քաղաքացիական իրավունքներ նվաճելը դաշնակցային կռիվում բնավ նրան չերաշխավորեց քայքայումից ու շահագործումից: Յեթե սորուկն ապստամբում էր տիրոջ դեմ ապստամբութեան նվաճելու համար, ապա գյուղացին այժմ բարձրանում էր իբ սահող ապստամբութեանը պահպանելու համար:

Անհրաժեշտ է նշել, վոր Սպարտակի ապստամբութեանից դեռ միքանի տարի առաջ Իտալիայի հարավում չքավոր գյուղացիութեանն ու սորուկները միացան ավազակային խմբերի մեջ, վորոնք այնքան հաճախ էյին հարձակումներ գործում սարքկատերերի սեփականութեան վրա, վոր նրանց դեմ կռիվելու 77 թվին հատկապես հրատարակվեց կոնսուլային որենք: Սրա համաձայն առաջին անգամ դարգացվում էր կողոպուտի գաղափարը, մինչդեռ հին հռոմեյական իրավունքը կողոպուտը չէր տարբերում գողութեան ընդհանուր գաղափարից:

Մի շարք աղբյուրներ հաստատում են, վոր ամենաչքավոր գյուղացիութեանը պաշտպանում էր սորուկների Իտալիական շարժումը: Ապիանոսն, որինակ, միանգամայն վորոշակի կերպով նշում է, վոր, բացի յերկրագործ սորուկներից, Սպարտակի մոտ հավաքվեցին նաև «դաշտերի ազատ գյուղացիները», և նշում է, վոր այս մասսան անընդհատ աճում էր:

Հաջորդ տարում՝ 72 թվին ազատ գյուղացիները շարունակում էյին ավելի մեծ թվով միանալ սորուկների ապստամբութեանը: Սա նույնպես վկայում է Ապիանոսը, վոր ասում է, թե փախստակ սորուկների և ծառաների հետ միասին Սպարտակի մոտ էր գնում ազատներից յելած ամեն մի «խուժան» (ուղեկից-

ներ): Անտարակույս, այս կատեգորիայի տակ Ապիանոսը, հասկանում էր այն «դաշտերի ազատ» գյուղացիներին, վորոնց մասին նա խոսում էր առաջ՝ Բայց սրանք, ըստ յերևույթին, հողագուրկ գյուղացիներն էին և հովիվները, այլապես նրանք ուղղակի կկոչվեյին գյուղացիներ:

Վերջապես, Մալլուստիոսը խոսում է կոլոնների մասին, վորոնք զինավորում էին Սպարտակին: Վոր ազատ գյուղացիութունը համակրում էր ապստամբ ստրուկներին, այս մասին մենք կարող ենք դատել նմանապես և այն բանով, վոր Հոմեյական գործերը տնօրէնութամբ էին կոմում Սպարտակի բանակի դեմ: Մալլուստիոսի, Պլուտարքոսի և Ապիանոսի տվյալներից յերևում է, վոր հոմեյական գործի մեջ խիստ զարգացած էր դասալքութունը: Ապիանոսն ասում է, վոր Հոմի կողմից փախստակներն այնպիսի մասսայով էին միանում ապստամբներին, վոր Սպարտակն ուղղակի հրաժարվում էր նրանց ընդունել: Իսկ վոր այս փախստակները—հոմեյական լեգեոնների զինվորները—ազատներ էին, այսինքն գյուղացիներ, սա հայտնի չէ մի շարք աղբյուրներից: Ապիանոսի մեզ հասած տեղեկութուններով մենք կարող ենք յենթադրել, վոր այս զինվորները հավաքարկվում էին շտապ դորահավաքի հետևանքով և հենց Հոմից դժգոհ գյուղացիութունից՝ հարավային մարզերում Ընդհանուր առմամբ հոմեյական լեգիոնների մեջ յեղած գյուղացիության վորոշակի մասը վոչ միայն համակրում էր Սպարտակի հեղափոխությանը, այլև միացավ նրան:

Սպարտակի գործերի այս գյուղացիական մասը, վոր կազմված էր փախստակներից, «դաշտերի ազատներից» և ազատներից յերած ծառաներից, իհարկե, տարբեր շահեր էր ներկայացնում ապստամբ ստրուկներին մեջ, բայց այս մասին մենք կխոսենք հետո:

Յեթե մենք ճշգրիտ գիտենք, վոր հարավում Սպարտակն ապստամբ ստրուկներին շուրջը հավաքեց նմանապես և գյուղացիական տարրերին, ապա մենք վոչ մի տվյալ չունենք այն մասին, թե ինչպես էր հյուսիսային մարզերի գյուղացիութունն արձագանգում ստրուկների ապստամբությանը: Հյուսիսի ուժեղ գյուղացիութունը զուցե և հանդես էր գալիս Սպարտակի դեմ:

Հարավային մարզերի գյուղացիության վերաբերմունքը

դեպի Սպարտակը մեզ համար շատ ցուցական է սոցիալ-տնտեսական այն ճգնաժամի տեսակետից, վոր գրակքույան շարժման և դաշնակցաչին պատերազմից հետո հենց ամենից ավելի պատեց Իտալիայի հարավի գյուղացիությանը: Հարավային մարզերի մանր գյուղացիութունը, միանալով ստրուկներին, վորձում էր պաշտպանել իր շահերը, հանդես գալով ստրուկների զեկավարությամբ, իբրև ստրկատիրական հասարակարգին հակառակ կանգնած հիմնական դասակարգ: Այսպիսով շարժումն ընդունում էր ավելի մասսայական, այս պատճառով էլ իսկական հեղափոխական բնույթ, վորը և այս շարժումը պատում է ստրուկների նախընթաց ապստամբութուններից: Մյուս կողմից՝ Սպարտակի բանակի այսպիսի խայտաբղետ կազմը չէր կարող չանդրադառնալ շարժման բնութի վրա, հեղափոխության ծրագրում յերկու խնդրի առաջադրելու վրա՝ մեկը գյուղացիության, մյուսը՝ ապստամբ ստրուկների կողմից:

Վերջին և չափազանց կարևոր հարցը, վոր առաջ է գալիս Սպարտակի շարժումն ուսումնասիրելիս—ապստամբության ծրագրի մասին—ավելի քիչ է մշակել գիտությունը: Հարկ կա կրկին մատնանշելու, վոր այս հարցում աղբյուրների ազդատության պայմաններում առանձնապես դժվար է վորևե վճռական դատողության հանդէր: Ուստի և այս հարցը պետք է միայն զնել հետագա ուսումնասիրության համար:

Սպարտակի ծրագրի հարցում աղբյուրները համամիտ չեն: Յեթե Մոմզենն Սպարտակի բոլոր ռազմաքաղաքական ձեռնարկումների մեջ տեսնում է ստրուկների միայն ավազակախմբերի կազմակերպութուն, վորն իրեն նպատակ է դնում կողոպտել, ապա մյուս գիտնական Իրոմանն Սպարտակի մեջ տեսնում էր ստրուկների իրենց ազատագրության համար մղած կռվի զեկավար: Սակայն այս տեսակետներից և վոչ մեկը հետագա զարգացում և գիտական հիմնավորում չտացավ: Մոմզենի տեսակետն ուղղակի հակառակ է իրականության և անտեսում աղբյուրները, իսկ Իրոմանը, չողտագործելով բոլոր աղբյուրները, չէր կարող ուրվագծել նաև ստրուկների ազատագրման սպարտակյան ծրագրի յերկու կետերը, այսինչ այս հարցի վերաբերյալ աղբյուրներն իրենց ամբողջ ազդատությամբ հանդէր:

այնուամենայնիվ վորոշ նյութ տալիս են խիստ կերպով հարց
դնելու Սպարտակի վորոշակի ծրագիր ունենալու մասին նրա
գլխավորած ստրուկների համախոտարական ապստամբութեան մեջ:

ՍՊԱՐՏԱԿԻ ՅԵՎ ԿՐԻԿՍԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հին հեղինակներ Ապիանոսն ու Պլուտարքոսն ասում են,
վոր միջանի հարյուր հոգի միացրած Սպարտակի զավազրու-
թյունն անպայման ուրվագծում էր ստրուկների ազատագրման
պլան: «Սպարտակը, — ասում է Ապիանոսը, — համոզեց իր ընկեր-
ներին հանդես գալու և ավելի շուտ վտանգի յենթարկվելու
ազատութեան համար կռիւթով, քան հասարակութեան զվարճու-
թեան համար գլադիատորական հանդեսներում»:

Սպարտակի կյանքի բոլոր հանգամանքները դեռ մինչև
նրա գլադիատոր դասնալը նրան նախապատրաստում էին պայ-
քարելու ազատութեան համար: Սպարտակի՝ ազատութեան համար
կռվելու հաստատ կամքը հասկանալի յե նաև այն պատճառով,
վոր Սպարտակն ազատածին թրակիացի յեր: Հոմայեցիք գերել
էին նրան և վաճառել իբրև ստրուկ, իսկ հետո՝ իբրև գլադիա-
տոր: Իհարկե՝ Սպարտակը չէր կարող հաշտվել իր ստրկական
զրութեան հետ: Պլուտարքոսի մոտ մենք տեղեկութեաններ ենք
գտնում այն մասին, վոր Սպարտակը գլադիատոր դասնալուց
առաջ մի քանի անգամ փորձել է փախչել իր տերերից: Բացի
սրանից, աղբյուրներում տեղեկութեաններ կան, վոր Սպար-
տակն ապրիւնի կերպով էր վաճառված գլադիատորութեան: Իսկ
քանի վոր գլադիատորութեանը ծանր պատիժ էր մեծ հանցա-
գործութեանների համար, ապա կարելի յե կարծել, վոր Սպար-
տակի հենց սխառնամտիկ փախուստն էր իր նախկին տերերից
տոթի ավել նրան գլադիատորութեան դատապարտելու համար:

Միանգամայն բնական է, վոր միայն անհատական ու
ապարդյուն փախուստի փորձերից հետո Սպարտակի մեջ կարող
էր հասունանալ ստրուկների արդեն մասսայական յեւույթի
պլանը: Այս լույսի տակ հասկանալի յե դառնում Սպարտակի
զավազրութեան պլանը Բատիատի գլադիատորական դպրոցում
կապուստում:

Անցնելով ստրուկների գլուխ և նվաճելով իր անհատական

ազատութեանը, Սպարտակն սկսեց կազմակերպել ստրուկների
մասսայական շարժում: Յեվ 73 թվին, հենց վոր ստրուկների
ապստամբութեանն ընդգրկեց համարյա ամբողջ Հարավային
Իտալիան, ազատագրութեան համար մասսայական շարժման
հարցը մտավ նոր փուլի մեջ: Այժմ գլխավորն ստրուկների նոր
մասսաներ ապստամբների բանակը ներգրավելը չէր, և վոչ էլ
նրանց իրենց տերերի դեմ բարձրացնելը, այլ արդեն նվաճված
ազատութեան ամրացումը, նրա ապահովումն ապագայում: Սպար-
տակը նույնիսկ հրատարվում էր իր բանակը չափազանց լայն
կերպով մեծացնելուց:

Վոր Հոմի դեմ գործնականորեն կռվելու հարցը դարձավ
հետագա շարժման պլանի սկզբունքային հարց և հետագա կռիվը
վարելու հարց, այս ցույց են տալիս այն տարածայնութեան-
ներն ապստամբութեան շտաբի ներսում, վորի վրա նշում են
շատ աղբյուրներ:

Սալլյուստիոսի վատիկանյան առաջին ֆրագմենտում ասված
է, վոր 73 թվին, ապստամբութեան բեկումնային և Վարինիոսի
դեմ կռվելու մոմենտին Սպարտակը, կրկնապատկելով իր բա-
նակը, առաջարկեց հյուսիս արշավելու պլանը, այլևս խոր-
հուրդ չտալով հարձակվելու Վարինիոսի վրա: Իսկ Կրիկսը, վոր
գլխավորում էր զորքերի իբրև թե գերմանա-գադիական մասը,
այն տեսակետին էր, վոր զորքերը պետք է շարժել թշնամու
հանդեպ և կռվի բռնվել նրա հետ: Տարածայնութեանները չվի-
րացան նույնիսկ այն բանից հետո, յերբ Սպարտակն ու Կրիկսը,
վճռեցին միահամուռ կերպով հանդես գալ Վարինիոսի դեմ:
Վարինիոսը ջախջախվեց, բայց տարածայնութեաններն ավելի
սուր բնույթ ստացան: Այն ժամանակ, յերբ Սպարտակը, Պլու-
տարքոսի տեղեկութեաններով, հաջորդ տարվա գարնանը շարժ-
վեց դեպի հյուսիս, Կրիկսը բաժանվեց Սպարտակից և սկսեց
զբաղվել Հարավային Իտալիայի կողպուստով:

Ինչից էին ծագում այս պարածայնութեանները:

Մոմզենն ասում է, վոր նրանք առաջացան ազգային յերկ-
պառակութեան հողի վրա: Այն ժամանակ, յերբ Սպարտակը,
Մոմզենի յենթազրութեամբ, միավորում էր հեղինակներին, Կրիկսը
միավորում էր գադիացիներին ու գերմանացիներին, իսկ թե
սրանք և թե մյուսներն իբրև թե փոխադարձ թշնամանքի մեջ

եյին: Այսպիսի բացատրութիւնը վոչինչ չի տալիս յերկու առաջ-
 նորդներէ դիւքերը պարզելու համար, իսկ Մոմզենի յեզրակա-
 ցութիւնն ուղակի սխալ է դառնում հետեյալ հանգամանքներով:
 Ամենից առաջ սխալ է, վոր Սպարտակի գորքերի մեջ միայն
 հելլեններ կային: Պլուտարքոսի նույն տեղեկութիւններով կա-
 րելի յէ հաստատել, վոր Սպարտակի գորքերում կային նաև
 գաղղիացիներ, ընդվորում որանք, ըստ յերևույթին, հելլեններից
 պակաս չէին: Այնուհետև Պլուտարքոսը հայտարարում է, վոր
 յերբ Սպարտակը շարժվեց դեպի Ալպերը, ապա, ցանկանալով
 ստրուկներին դուրս բերել իրենց հայրենիքը, նա յենթադրում
 էր ստրուկներէ մի մասը տեղափոխել Թրակիա (Թրակիացի-
 ներին ու հելլեններին), մյուս մասը՝ Գաղիա (կելտերին կամ գա-
 դերին): Կնշանակի՝ նրա գորքի մեջ գյուղացիներ կային: Իսկ
 մյուս կողմից՝ յեթե յեննք միայն Մոմզենի տեսակետից, ան-
 հասկանալի յէ դառնում այստեղից բղխող նաև մի ուրիշ հարց,
 այն, թէ ինչու գաղղիա-գերմանական ցեղերը Կրիկսի գլխա-
 վորութեամբ մնացին հարավում և վոչ թէ գնացին Սպարտակի
 յետեից, մինչդեռ նրանց մեջ պակի շատ ձգտում պիտի լինէր
 հենց դեպի հյուսիս, դեպի իրենց հայրենի մարզերը: Մոմզենի
 այսպիսի պնդումը վոչ միայն մեզ չի բացատրում ստրուկների
 յերկու առաջնորդների իսկական տարածայնութիւնները, այլև
 առհասարակ հարցական է դարձնում ազգային յերկպառակու-
 թեան առկայութիւնն այն պայմաններում ստրուկների շարքե-
 րում: Մոմզենի վկայակոչութիւնը Պլուտարքոսից շատ անհաջող
 է, վորովհետև այս կետում հին հեղինակի մոտ հակասութիւն կա:

Միանգամայն ակներև է, վոր ապստամբների առաջնորդնե-
 րի վեճերը մղվում էին ստրուկների հետագա շարժման պլանի
 շուրջը: Հին ժամանակների բոլոր հիմնական աղբյուրները՝ Սալ-
 լյուստրոսը, Ապիանոսը, Պլուտարքոսը վորոշապես նշում են, վոր
 Սպարտակը միանգամայն գիտակցաբար խուսափում էր հռոմի
 վրա արշավելուց: Այս խուսափումը բացատրվում է նրանով, վոր
 Սպարտակն ստրուկների ընդհանուր արշավանքը նշում էր դեպի
 հյուսիս՝ նպատակ ունենալով ստրուկներին վերադարձնել իրենց
 հայրենիքը—Թրակիա և Գաղիա: Բացի հին հեղինակների վկա-
 յութիւնից, այս պլանը հաստատվում է նաև հենց Սպարտակի
 արշավանքներով: Փոխելով ստրուկներին Ալպերի վրայով դուրս

բերելու իր պլանը և ուղեորվելով հարավ, Սպարտակը նորից
 մտադրվում է ստրուկներին հանել Իտալիայի սահմաններից: Նա
 կրկին իր առջև է դնում այս նույն խնդիրը, վորի հաստատումն
 է հանդիսանում Սիցիլիա փոխադրվելու նրա պլանը: Ինչպես
 մենք կտեսնենք ստորև, նույն խնդիրն է հետապնդում նաև
 Սպարտակի վերջին՝ Բրունդիզի արշավելու պլանը: Այսպիսով,
 շարժման ծրագրում հիմնականը հենց ստրուկներին Իտալիայի
 սահմաններից հայրենի յերկրները դուրս բերելու պլանն էր:
 Տվյալ մոմենտը չի կարելի համարել պատահական, վորովհետև
 այն կրկնվում է Սպարտակի նշված բոլոր յերեք արշավանքների
 պլաններում:

Միանգամայն ուրիշ բնույթ էր կրում ստրուկների շար-
 ժումը Կրիկսի ղեկավարութեամբ: Վերջինս հետամուտ չէր լի-
 նում ստրուկների ազատագրման և նրանց ազատութիւնն ամրա-
 պնդելու պլանին: Համենայն դեպս աղբյուրները չեն վկայում
 այսպիսի պլանի մասին: Այս պատճառով Կրիկսի ջոկատը չոճան-
 դակեց Սպարտակին, յերբ նա շարժվում էր հյուսիս: Մնալով
 հարավում, Կրիկսն իր ջոկատով շարունակում էր խաղաղ բնակ-
 չութեան եքսպրոտրիացիան, հարձակումը նրա վրա: Յե՛վ նույ-
 նիսկ այն ժամանակ, յերբ այս ջոկատի մնացորդները միացան
 Սպարտակին, նա չէր ուզում մինչև վերջ պաշտպանել Սպար-
 տակի՝ Իտալիայի սահմաններից դուրս գալու պլանը: Պլուտար-
 քոսը հաղորդում է, վոր վճռական բուպեյին Սպարտակի դեմ
 լարված այս զորախմբերը Գաննիկի և Կաստի ղեկավարութեամբ
 կրկին անջատվեցին Սպարտակից: Հետաքրքրական է նշել, վոր
 ամեն անգամ, յերբ Սպարտակն սկսում է վորեւ նոր արշավանք
 ձեռնարկել՝ կապված ստրուկներին Իտալիայից հանելու հետ,
 նրանից զորախմբեր են անջատվում:

Ինչպի կարելի յէ բացատրել այսպիսի տրամադրութիւն-
 անքը և Կրիկսի, իսկ հետո Սպարտակի դեմ տրամադրված Գան-
 նիկի ու Կաստի զորախմբերի նման հեռացումը Սպարտակի
 զորքից: Տվյալ դեպքում պետք է յենթադրել, վոր Սպարտակի
 և Կրիկսի միջև առաջացած տարածայնութիւնների մեջ վճռա-
 կան դեր է խաղացել զորքերի սոցիալական կազմի տարբերու-
 թիւնը: Սպարտակը, ըստ յերևույթին, միավորում էր ստրուկ-
 ների հիմնական մասսան, վորն ամենից առաջ ուզում էր իրոք

ազատվել տերով իշխանությունից: Այս պատճառով միանգամայն բնական էր նրանց ձգտումը դուրս գալու Իտալիայի սահմաններից դեպի իրենց հայրենի յերկրները, վերադառնալու իրենց բնակավայրերը, իրենց հողը: Հենց այս էլ Սպարտակի ամբողջ ծրագրի հիմնական կետն էր նրա յերեք արշավանքների մեջ, սա սպարտակյան հեղափոխության առաջին և հիմնական հարցն էր: Իսկ Կրիկսի գործամասերի կազմը միանգամայն տարբեր էր. հազիվ թե հիմնականում նա կազմված լիներ ստրուկներից: Ավելի հավանական է յենթադրել, վոր այս կազմի մեջ հիմնականում մտնում էյին վոչ թե ստրուկները, այլ հենց այն «դաշտերի ազատ» գյուղացիները, ուղեկիցներն ու փախստակները, վորոնց մասին խոսում է Ապիանոսը: Մրանք մանր հողագործներ էյին, Իտալիայի հարավի գյուղացիական մասսան, վորը, ինչպես մենք արդեն նշեցինք վերև, պրոլետարականանալով, ստրուկների հետեից ապստամբության դիմեց վոչ թե հանուն ազատության, այլ իր աստիճանաբար սահող հողային սեփականության համար: Միայն կողոպուտներով, հարձակման և սխտեմատիկ ասպատակությունների միջոցով էյին նրանք մտածում հետ ստանալ համարյա ճիշտ այդպես իրենցից խլված սեփականությունը: Սա, իհարկե, դորքի փոքրիկ մասն էր: Որողիտսի սեղեկություններով, Կրիկսն ուներ վոչ ավելի, քան 10 հազար այսպիսի խայտաբղետ գորք, վորն իրեն՝ Կրիկսին զրդում էր դեպի անտեսական անհավասարության դեմ կռվելու ուղին: Սպարտակի բանակի այս մասն իբրև հեղափոխության հիմնական հարց առաջադրում էր հողի հարցը, ստրկատերերին սեփականազրկելու հարցը, վոր չէյին լուծել վոչ Գրակքոսների ազրարային շարժումը, վոչ էլ 90—80 թվականների դաշնակցային պատերազմը:

Անտարակույս, այս հանգամանքը տարածայնություններ էր ստեղծում Սպարտակի ու Կրիկսի միջև և չէր կարող չստեղծել: Մեզ թվում է, վոր այսպիսին էր այն տարածայնությունների սցեյարական բազան ապստամբության շտաբում, վորոնք նույնիսկ հանգեցին այն բանին, վոր Սպարտակից հեռացան նրա մի շարք ջոկատները:

Իսկ ինչ վերաբերում էր Սպարտակի ծրագրին, ապա նա վոչ միայն իրականացնում էր այդ ծրագիրը, այլև ակտիվ կռու-

վում էր նրա համար և հանդես գալիս Կրիկսի դեմ, վորը գլխավորում էր սպարտակյան բանակի գյուղացիական մասը: Միանգամայն ակներև է, վոր Սպարտակն այլ կերպ էր պատկերացնում իրեն ամբողջ շարժման խնդիրները, քան Կրիկսը: Այսպես, վատիկանյան յերկրորդ Փրագմենտում Սալլյուստիոսը ձառ է դնում Սպարտակի բերանը Կրիկսի կատարած կողոպուտների, բնակչությանը հասցրած վերավորանքների և անկարգությունների դեմ: Հեակաբար Սպարտակն եքսպրոպրիացիաներին դեմ էր: Գյուղացիության հանդեպ բանակի առաջնորդի վերաբերմունքի մասին կարելի չէ դատել Սալլյուստիոսի նույն Փրագմենտի հիման վրա, վորից յերևում է, վոր անասունները բռնագրավել հարկադրված Սպարտակն առաջադրում է շատ գզուշ կատարել այդ: Նա խորհուրդ է տալիս հարձակվել միայն այն դաշտերի վրա, վորոնք հարուստ են անասուններով, ըստ յերևույթին, նկատի ունենալով կանխել բռնագրավումը սակավազոր գյուղացիությունից: Իսկ Ապիանոսն ասում է, թե յերբ Սպարտակը յերկաթի ու պղնձի կարիք ուներ զենք կռելու համար, նա հրամայում էր զրանք վաճառականներից գնել լրիվ արժեքով և բռնություններ չգործադրել բերդների նկատմամբ: Սա, ի միջի այլոց, պեռք է կատարելայպես հերքի Մոմզենի արտահայտած այն կարծիքը, թե Սպարտակը, իբրև «ավագակային մեծ խմբապետ», կողոպտիչ, ասպատակություններից այն կողմը չանցավ: Ավելի մանրակրկիտ վերլուծությունը ցույց է տալիս, վոր «մեծ ավագակի» սլանը շատ ավելի լուրջ ու խոր դուրս յեկավ, քան մեծ գիտնականի դատողությունները:

Այսպիսով, գյուղացիության վերաբերմամբ Սպարտակը սահմանափակվում էր միայն նրանով, վոր առաջադրում էր նրան չհեղացնել, բռնություններ չգործադրել: Այս պատճառով էլ հանդես յեկած գյուղացիների, ստրկատերերի դեմ նրանց մղած ակտիվ կռվի դեկավարությունն անցավ նրա ոգնականներին: Սպարտակի հեղափոխության մեջ հանդես յեկած յերկու խնդիրները՝ ստրուկների ազատագրումն ու գյուղացիների ազատագրումն ստրուկների լծից—չմիացվեցին մի դեկավարությամբ, վորը և կանխորոշեց հեղափոխության տնհաջող յեկքը:

Դժբախտաբար, մեզ համար մնում է անհայտ, թե ինչպես էր Սպարտակը կազմակերպում իր հսկայական բանակի ներքին

կյանքը, մասնավորապես, թե ինչպիսի տնտեսական կազմակերպութիւնն գոյութիւն ունեւր այնտեղ: Ապրանսուսի միայն մի վկայութիւնն էր թույլ և տալիս կարծելու, վոր այն պայմաններում ստրուկներն սպառողական կոմունիզմից այն կողմ չանցան և չեյին կարող անցնել: Ապրանսուսը գրում է, վոր բոլոր գրաված բարեքներն ստրուկները միմյանց միջև բաժանում էյին հավասար կերպով, վորով դեպի իրենց էյին գրավում նաև ուրիշ ժողովրդի ստրուկների մասսաներին: Ուշագրութիւնն է գրավում էր վրա նաև այն, վոր նրանց բանակում, Սպարտակի հրամանով, արգելվում էր վտակու և արծաթի գործածութիւնն: Այս մասին մեզ հաղորդում է նաև Պլինիոս Ավագը: Այս հարցի վեցաբերյալ այլևս վոչ մի տեղեկութիւն մենք չունենք, և հենց այս հարցն էլ մեծ նշանակութիւնն չեր կարող ունենալ սպարտակյան շարժման ծրագրում, վորչափով վոր ծրագրերը չեր հենվում և չեր կարող հենվել տնտեսական կյանքն արմատապես վերակազմելու վրա: Ծրագրերն ստրուկների վերաբերմամբ խընդիր եր դնում ստրուկների միայն այնպիսի ընդհանուր ապստամբութիւնն, վորի հետևանքով առաջացած ստրուկների ազատագրումը պատկերացվում էր վոչ այլ կերպ, քան նրանց իրենց հայրենի յերկրները, իրենց սեփական բնակավայրերն ու հողերը տանելու ձևով: Իսկ գյուղացիութիւնն վերաբերմամբ, վորին գըլխավորում էյին Կրիկըր, Կաստն ու Գաննիկը, մեզ վոչ մի տեղեկութիւնն չի հասել, բացի այն տեղեկութիւններից, վոր նրանք տարածայնութիւններ ունեյին Սպարտակի հետ կովի պլանի շուրջը, և այն հայտնի տեղեկութիւններից, թե ստրուկների բանակի գյուղացիական մասն զբաղվում էր եքսպորտըրիացիայով:

Այսպես է մեզ ներկայանում սպարտակյան ապստամբութիւնն ծրագրի վերաբերյալ վերջին հարցը:

Մեր քննարկած հարցերը բավականաչափ լուսարանում են Սպարտակի ապստամբութիւնն սոցիալական նշանակութիւնը: Ստրուկների ապստամբութիւնն այս առաջին փուլը նախապատրաստեց հեղափոխութիւնն հետագա՝ յերկրորդ փուլը, վորն իրականացրեց «աշխատավորների շահագործման ստրկատիրական ձևի» վերացումը:

Հեղափոխութիւնն առաջին փուլը՝ սիցիլիական յերկու ապստամբութիւններն ու Սպարտակի ապստամբութիւնը՝ տվեց

կովի, մինչև վերջ մղված հետևողական կովի կլասիկ որինակներ ստրուկներին ամբողջ Իտալիայի սահմաններում ազատագրելու ցանկութիւնն ղեկըրում: Չնայած ստրուկների հեղափոխութիւնն այս առաջին փուլը վերջացավ անհաջողութիւնով, նա հակայական հետևանքներ ունեցավ: Այս հեղափոխութիւնն սոցիալական նշանակութիւնն այն է, վոր նա բավականաչափ թափահարեց ստրկատիրական հասարակարգը, տնտեսութիւնն ստրկատիրական սխառեմը և չքավորագույն գյուղացիութիւնը տրամադրեց հոգուտ իրեն: Այս վերջինս վիթխարի նշանակութիւնն ունեցավ հեղափոխութիւնն հետագա զարգացման համար, նրա յերկրորդ փուլը 4—5-րդ դարերում նախապատրաստելու համար:

ՍՊԱՐՏԱԿՅԱՆ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Հոռմեյական հանրապետութեան հետագա ճակատագրի համար վճռական դեր խաղաց Սպարտակի հեղափոխութեանը, վոր նախապատրաստովել եր ստրուկների մասսայական անհամար ապստամբութեաններով ինչպես Հոռմում, այնպես ել նրա ծայրագոյններում: Ստրկատեր դասակարգը, վորի գերիշխանութեանը խախտված եր հեղափոխութեամբ, այժմ ստիպված եր անցնելու բացահայտ սահմանադրական դիկտատուրայի: Այս հանգամանքը հասցրեց դասակարգային կռիւի նոր սրման, ստրուկների ու գյուղացիութեան նոր հեղափոխութեան, վորը 4—5-րդ դարերում վերջնականապես վերացրեց տնտեսութեան ստրկատիրական սիստեմը:

Պատմաբանները դեռ մինչև այժմ թերազնահատում են ստրուկների համախտալական հեղափոխութեանն Սպարտակի դեկլարութեամբ: Իսկ մինչդեռ անտիկ աշխարհի անկումը, ստրկատիրութեանից ճորտատիրութեան անցումը մշտապես առեղծված կմնա, յեթե մենք չուսումնասիրենք դասակարգային կռիւը հին Հոռմում, կռիւ, վորի ամենատիպիկ արտահայտութեանը հանդիսացան ստրուկների հռչակավոր հեղափոխութեանները, սկսած Սպարտակից և վերջացրած բողոտեղների (գյուղացիների) — ստրուկների հեղափոխութեամբ, վորոնք միացան գերմանական «բարբարոսների» հետ ընդգեմ ստրկատիրական Հոռմի:

Անտիկ աշխարհից միջնադարին անցնելու բնույթը ճիշտ ըմբռնելու համար Մարքսն ու Ենգելսը տվել են մի շարք ամենաարժեքավոր ցուցումներ, բայց սոցիալաբանները խեղաթյու-

րել են այս ցուցումները և հակառակ նրանց արել իրենց յեզրակացութեաններն անտիկ աշխարհի սոցիալական կռիւ վերաբերյալ: Մենք արդեն նշել ենք, վոր սոցիալ-Ֆաշիստ Կաուցկին մարքսիզմի, սոցիալական հեղափոխութեան ուսմունքի դեմ կրու վելիս առաջադրել ե այն գրույթը, վոր հին ժամանակներում վորեւ հասարակական հեղաշրջում չի յեղել և չէր կարող լինել: Ըստ Կաուցկու, վոչ թե ստրուկների հեղափոխութեանները հանդեցին ստրկատիրական հասարակութեան տասլայման և նոր հասարակութեան՝ ֆեոդալիզմի հաստատման, այլ նոր ժողովուրդների նվաճումները, ներխուժումները:

Ժամանակակից Ֆաշիստների թեորիայով, անտիկ հասարակութեան կործանման և ֆեոդալիզմի առաջացման գլխավոր ֆակտորը հանդիսացավ այն հանգամանքը, վոր բնաջնջվեց հոռմայեցիների «մաքուր ցեղը», իբրև թե կտորվեցին «հոռմեյական հասարակութեանից լավագույնները»: Մրա հետևանքով հոռմայեցիների աղնիվ ցեղը հեռացավ թատերաբեմից և նրա տեղը հանդես յեկավ գերմանացիների նոր ու ստեղծագործ ցեղը»: Այս ե Ֆաշիստ Ոտտո Ձեեկի կարծիքը, վորը միքանի հատոր ե գրել այս հիման վրա անտիկ աշխարհի անկումն ապացուցելու համար: Այս Ֆաշիստ պատմաբանը հասարակական ամեն մի հեղաշրջում պատկերացնում ե հենց «լավագույն մարդկանց», զիտութեան, ուժի ու բարոյականութեան արիստոկրատների վոչնչացման կապակցութեամբ: Ձեեկի կարծիքով, Ռուսաստանի Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեանն ել հենց առաջացավ այն պատճառով, վոր ժողովրդից յելած «սև վոսկրավորները» վոչնչացրին «սպիտակ վոսկրավոր» մարդկանց: Իսկ այն, ինչ գալիս ե ժողովրդից, Ձեեկը վաղորոք նվաստացնում ե, վարկաբեկում ե ցուցադրում իբրև անկման աղբյուր:

Այս կետում համամիտ են համարյա բոլոր Ֆաշիստ պատմաբանները՝ Ձեեկը, Մեյերը, սպիտակ եմիգրանտ Ռուստովցիը և ուրիշները, վորոնք հայտարարում են, թե հենց վոր կուլտուրան արիստոկրատների վոքրիկ կաստայից սկսում ե անցնել ժողովրդին, մասսանների ներքնախավերին, ապա անմիջապես սկսվում ե կուլտուրայի ու հասարակութեան անկումն իր ամբողջութեամբ: Ֆաշիստ պատմաբանների կարծիքով, հոռմեյական կայսրութեանը քայքայվեց այն պատճառով, վոր «լավագույն-

ների» վոչնչացումով կուլտուրային տիրացավ ժողովրդական մասան, վորը դուրս յեկավ վոչ ավել, վոչ պակաս, քան «անտիկ բուլճերիներ» (Կարշտեգո): Ֆաշիստական այս թեորիայի քաղաքական գիտավորութունն այն է, վոր փառաբանի «գերմանական ցեղը», նոր հիմք տա գերմանական իմպերիալիզմին, պրոլետարիատի ու գյուղացիութան ուշադրութունը հետ դարձնի դասակարգային կովից դեպի «ցեղային հակասութիւններ» կողմը: Գերմանացիների յերակներում արիական մաքուր արյուն լինելու վերաբերյալ նոր լողունդներով ֆաշիստները խաչակրաց արշավանք են պատրաստում ԽՍՀՄ դեմ, պրոլետարիատի դիկտատուրայի դեմ, սոցիալիզմ կառուցող յերկրի դեմ, վորտեղ ապրում են սլավոններ և ուրիշ ժողովուրդներ, վորոնք, ֆաշիստների կարծիքով, ստոր ցեղ են, վորին պետք է գլխավորի գերմանացիների բարձր, արիական ցեղը: Այսպիսի դրուլթներին ընկեր Ստալինը վճռական հակահարված տվեց Համ(բ)Կ 17-րդ համագումարում:

«Հայտնի յե,—ասում եր ընկեր Ստալինը,—վոր հին Հուովը ճիշտ այնպես եր նայում այժմյան գերմանացիների ու Ֆրանսիացիների նախնիների վրա, ինչպես հիմա «բարձր ուսայի» ներկայացուցիչներն են նայում սլավոնական ցեղերի վրա: Հայտնի յե, վոր հին Հուովը նրանց քամահրում եր վորպես «ցածր ուսայի», «բարբարոսների», վորոնք կոչված են հավիտյան յենթակա լինելու «բարձր ուսային», «մեծ Հուովին», ըստ վորում—մեր մեջ ասած—հին Հուովը դրա համար ուներ վորոշ հիմք,—մի բան, վոր չի կարելի ասել այժմյան «բարձր ուսայի» ներկայացուցիչների մասին: Իսկ դրանից ի՞նչ դուրս յեկավ: Դուրս յեկավ այն, վոր վոչ-հոտմայեցիները, այսինքն բոլոր «բարբարոսները» միավորվեցին ընդհանուր թշնամու դեմ և վորոտով խորտակեցին Հուովը: Հարց է ծագում՝ վճռեղ ե յերաշխիքը, վոր այժմյան «բարձր ուսայի» ներկայացուցիչները հավակնութիւնները չեն տանի դեպի նույն այդ վոզբալի արդյունքները: Վճռեղ ե յերաշխիքը, վոր ֆաշիստական-գրական քաղաքագետներէ բախար Բեռլինում ավելի կրանի, քան հին փորձված աշխարհակալներինը՝ Հուովում»*):

Իր այս պատմական ճառում ընկեր Ստալինն առաջադրեց

*) Ի. Ստալին. «Լենինիզմի հարցերը», հայերեն, էջ 677—678:

մի շարք հարցեր: Նա ամենից առաջ վորոշակի կերպով նշեց այն ճակատագիրը, վոր կարող է ունենալ ֆաշիստական Գերմանիան և նրա «բարձր ուսան», յեթե միայն նա փորձի այնպիսի քաղաքականութիւն վարել, վորպիսին իր ժամանակ վարում եր մեծ Հուովը: Ինչպես վոր բարբարոսների ձեռքից ընկավ ստրկատիրական Հուովը, այնպես ել կարող է վոչնչացվել ֆաշիստական Գերմանիան:

Այս ճառից բղխում է նաև մի այլ հարց, վոր անմիջականորեն վերաբերում է անտիկ ստրկութիւն կործանման պրոբլեմին: Ընկեր Ստալինը մատնանշեց «բարբարոսների» դերը: Ի՞նչ հիման վրա միավորվեցին «բարբարոսները» և հանդես յեկան: Այս մասին ընկեր Ստալինն ասել է դեռևս հարվածային կոլաբնտեսականների 1-ն համագումարում, յերբ նա դիտողութիւն արեց «ստրուկների հեղափոխութիւն» մասին, «վորը վերացրեց ստրկատերերին և վոչնչացրեց աշխատավորների շահագործման ստրկատիրական ձեռը»: Միանգամայն ակներե է, վոր արտաքին «բարբարոսների» (գերմանացիների) յելուլթն իրականացավ այն ներքին «բարբարոսների» (ստրուկների) հետ կատարելապես համերաշխ և գրա հիման վրա, վորոնք բարձրացան հեղափոխութիւն կատարելու ստրկատիրական շահագործման սիտատի դեմ: Արտաքին «բարբարոսը» և ներքին «բարբարոսն» ստրկատիրական Հուովի դեմ կովելիս նույնքան անբաժան է յին, ինչպես անբաժան են «ներքին» և «արտաքին» պրոլետարները ֆաշիստական դիկտատուրայի և կապիտալիստական շահագործման դեմ մղվող ներկա կովում:

Ստրուկների հեղափոխութիւն, վորն իր հետեից բարձրացրեց նաև գերմանական բոլոր ճնշված «բարբարոսներին»,—անսթե ինչն եր, Մարքսի և Ենգելսի, Լենինի և Ստալինի հայացքների համաձայն, վճռական ֆակտորն ստրկատիրութիւն վոչնչացման, անտիկ հասարակութիւն կործանման և դարգացման նոր, ավելի պրոգրեսիվ աստիճանի անցնելու մեջ: Իբրև հակակշիռ բուրժուական թեորիաների, այս հարցն այսպես են լուծում մարքսիստները:

Այս միակ ճշմարիտ, իսկական գիտական տեսակետից հրակայական նշանակութիւն ունի մեր մարքսիստական պատմա-

գրութեան համար անտիկ ժամանակների դասակարգային կովի ուսումնասիրութեանը, մասնավորապես, հին Հռոմի ստրուկների հռչակավոր հեղափոխութեանների ուսումնասիրութեանը: Այս հեղափոխութեանների, գյուղացիութեան և ստրուկների մասսայական շարժումների, առանձին փուլերում նրանց կովի ունեցած բնույթի, նրանց կապի ձևի, ծրագրային գրույթների, տարածայնութեանների կոնկրետ ուսումնասիրութեանը և այլն—այս բոլորը հին պատմութեանը կուսարանի մեղ համար նոր լույսով և կբացի մեզնից այնքան հեռավոր դարաշրջանի կյանքի ու կովի իսկական, ճշմարիտ պատկերը:

Սպարտակյան հեղափոխութեանը ջախջախիկեց, բայց նա հսկայական հարված հասցրեց ստրկատիրական Հռոմին: Իր հրուշակավոր արշավանքների ժամանակ Սպարտակն ակոսեց ամբողջ Իտալիան ու ամառացրեց իր անցած բոլոր մարդերը, վորով մեծ ֆլաս պատճառեց ստրկատեր իշխանավորներին: Հեղափոխութեան ժամանակ խիստ ընկալ առևտուրը և կրճատվեցին Իտալիայի առանձին մարդերի միջև յեղած կապերը: Վերջապես, վտար յեղած ստրուկները, վորոնք մասամբ կոտորվեցին կոնվներում, մասամբ ել վախան, առանձին դեպքերում ստրկատիրական լատիֆունդիաները թողեցին միանգամայն առանց աշխատող ուժի, ել ավելի ուժեղացնելով ստրկատիրական սիստեմի ուրվազոված ճգնաժամը: Հեղափոխութեանից վախեցած ունեւոր դասակարգերն ամբողջ ժամանակ գտնվում էյին ստրուկների ապստամբութեանների նոր բռնկման, գյուղացիութեան նոր յելույթի ուրվականի առջև՝ նրանից հափշտակված հողերն իրեն վերադարձնելու նպատակով կովելու համար: Միանգամայն ակներե եր, վոր դարձյալ ստրուկների ու գյուղացիների մի այսպիսի խոշոր ապստամբութեան—և ստրկատիրական Հռոմը փուլ կգա տնտեսութեան ստրկատիրական սիստեմի հետ միասին:

Այսպիսի պայմաններում հռոմեյական ստրկատիրական դեմոկրատիայի համար սկսվեց խոր ճգնաժամ: Իբրև այս ճգնաժամի արտաքին արտահայտութեան ծառայում եր այն հանգամանքը, վոր ստրկատեր դասակարգի ձեռքին գտնվող հանրապետութեան քաղաքական ապարտան այլևս անընդունակ եր պաշտպանելու ստրկատիրական պետութեան անվտանգութեանը: Գերիշխող դասակարգը գտնվում եր ներքին և արտաքին վտան-

գի հանդեպ: Հռոմեյական պետութեան ծայրագավառների պատերազմները նույնպես անհանգստացնում էյին հանրապետութեանը, շատ միջոցներ էյին պահանջում, յերկպագակութեան էյին առաջացնում հրամանատարների մեջ: Ստրկատիրական դեմոկրատիայի ներքին անկարգութեանները, ինչպես և գյուղացիութեան անհանգստութեանն ու ստրուկների պոթկուսները կրկին արթնացնում էյին սպարտակյան հեղափոխութեան ուրվականը: Արտաքին ու ներքին վտանգի հանդեպ հին, հանրապետական հասարակակարգը, հին, հանրապետական հիմնարկներն իրենց անշատ ֆունկցիաներով անբավարար գտնվեցին ապահովելու իշխանութեանը, կարգն ու անվտանգութեանը: Անվերջանալի արտաքին պատերազմների և ներքին քաղաքացիական պատերազմի պայմաններում բոլորն անհրաժեշտութեան էյին զգուս ամուր իշխանութեան, միանական ռազմական հրամանատարի, զիկտատորի միահեծան իշխանութեան: Եյսպես ասած՝ այսպիսի պայմաններում ռազմական զորավարներն այնքան լայն լիազորութեաններում անտանում, վոր արդեն դառնում էյին զիկտատորներ: Իզուր չե, վոր զորավարներ ընտրելիս հաճախ առաջանում եր առանձին կուսակցութեանների սուր պայքար:

Առանձնապես լարված պայքար տեղի ունեցավ 88 թվին դեմոկրատական «պոպուլյարների» և արիստոկրատական «ուպտիմատների» կուսակցութեանների միջև, յերբ զլիսավոր հրամանատար եր ընտրվում արեելքում Հռոմի վտանգավոր թըշնամի Միներզատ թագավորի դեմ կովելու համար: Հաղթող դուրս յեկավ «ուպտիմատների» թեկնածու Կոռնելիոս Սուլլան ընդդեմ «պոպուլյարների» թեկնածու Մարիի: Կոռնելիոս Սուլլան վոչնչացրեց դեմոկրատական հիմնարկները, ժողովրդական տրիբունների իրավունքը՝ վետո (արգելք) դնելու սենատի վորոշումների վրա, սահմանափակեց ժողովրդական ժողովի իշխանութեանը, Սենատը կազմեց իր կողմնակիցներից: Կոռնելիոս Սուլլան առաջին զիկտատորն եր, կամ, ինչպես նրանց լիոս Սուլլան առաջին զիկտատորն եր, կամ, ինչպես նրանց նաև անվանում էյին՝ «զադութային կայսրը»: Նրա իշխանութեանը հարատե չեր, բայց հետագա պայքարն ընթացավ նույն ուղղութեամբ, տենդենց արտահայտելով դեպի զիկտատորական սկզբունքի աճումը:

Ահա թե ինչպես եր գնահատում հանրապետութեան գրու-

թյունն սպարտակյան հեղափոխությունից հետո ուղղական զիկտատորի մի անհաջողակ հավակնորդ. «Պետության մեջ յերկու մարմին կա. մեկը՝ թույլ, վոչ ուժեղ գլխով (նկատի ուներ սենատը), մյուսը՝ ուժեղ, բայց անգլուխ (նկատի ուներ ժողովուրդը)։ Թող այս յերկրորդ մարմինն ինձ պաշտպանի, և նա, քանի զեռ յես կենդանի յեմ, անգլուխ չի մնա»։ Այս խոսքերը, ըստ Յիցերոնի, պատկանում են Սուլլայի համախոհներից մեկին՝ Սերգի Կատիլինային, վորը զավաղրություն կազմեց, մտադրվելով իշխանությունը գրավել իր ձեռքը։ Սուլլան, այս առաջին զիկտատորը, իշխանության գլուխ անցնելով և վոչնչացնելով զեմոկրատական հիմնարկները, այնուամենայնիվ խնայեց սենատը, իսկ Կատիլնան, ուղղական զիկտատորայի հասնելով, ուզում էր վոչնչացնել նաև Սենատի իշխանությունը։

Կատիլինայի զավաղրությունը պաշտպանում էյին ուղղական խոշոր ու ազդեցիկ հրամանատարներ Կեսարն ու Կրասոսը, վորոնք զեմ չեյին իրենք եւ առաջանալու ուղղական զիկտատորության, բայց խելամոտորեն սպասում էյին ավելի հարմար մոմենտի։ Կատիլինայի զավաղրությունը մեղ համար հետաքրքրական է իբրև հանրապետության անգորության արտահայտություն, իբրև միանգամայն նոր, սպարտակյան հեղափոխությունից հետո սկսված դասակարգային ուժերի հարաբերակցության ցուցանիշ։

Գերիշխող դասակարգը ձգտում էր ստրկատիրական հասարակարգի համար կռիվիս միավորել ազատ բնակչության բոլոր խավերը։ Առանձին զորավարների ուղղական զիկտատորան դառնում է քաղաքական իշխանության համակենտրոնացման լավագույն ձևը՝ ստրկատերեր դասակարգի զիբքերն սպահովելու համար ընդդեմ ստրուկների ու գյուղացիության հեղափոխական յեյուլթիների։ Այսպես հեղհետե ստեղծվեց հռոմեյական պատմության մեջ հայտնի ցեղարիզմը։

Կատիլինային չհաջողվեց զիկտատոր դառնալ. սենատի զորքերի զեմ ձակատամարտելիս նա սպանվեց։ Բայց նա վորոշ չափով ճանապարհ հարթեց բառացի նրանից անմիջապես հետո հանգես յեկած ուղղական զիկտատորների համար՝ հանձին Գայ Յուլիոս Կեսարի (այստեղից ցեղարիզմ), Մարկոս Կրասոսի, Գնեյոս Պոմպեոսի, Լեպիդի և Մարկոս Անտոնիոսի։ Սրանք բո-

լորն արտահայտում էյին բացահայտ զիկտատորա շահագործվողներին նկատմամբ, հենվում էյին այն զինված ջոկատների վրա, վորոնք ավելի ուշ հայտնի էյին Հռոմի կայսրների պրետորիական զվարդիա անունով։ Բացի սրանից, նրանք ջանում էյին սոցիալական զեմագոգիայով կեղեքված մասսաներին հետ պահել դասակարգային պայքարից։ Սկզբում Կատիլինան, իսկ հետո Կեսարը և հռոմեյական առաջին կայսրներն իրենց զեմոկրատական ծրագրերով ու զեկրեաներով ջանում էյին, ինչպես այժմ Ֆաշիստները, մանր վորոքմություններով իրենց կողմը գրավել բնակչության սակավագոր և նույնիսկ շահագործվող խավերը։

Ստրկատերերի ու հողատերերի դասակարգը քաղաքական իշխանության այսպիսի կոնսոլիդացիայի, ցեղարիզմի և կայսրության ձևով կոնսոլիդացիայի հասավ սպարտակյան հեղափոխության ջախջախումից հետո։

Բայց այսպիսի դրությունը հնարավոր էր միայն մինչև այն ժամանակ, քանի զեռ ստրուկների ու գյուղացիների կեղեքված դասակարգը չէր հավաքել իր ուժերը։ Կործ ժամանակամիջոցում ստրուկները կրկին հավաքում են իրենց ուժերը։ Սրա արտահայտությունը հանդիսացան մեր թվականության ամենասկզբում կատարված յեյուլթիները։ Ինչպես բուն Հռոմում, այնպես էլ կայսրության ծայրագավառներում՝ Պաննոնիայում, Թրակիայում, Գերմանիայում տեղի ունեցած այս ապստամբությունները վկայում են, վոր թե պարհակներով ստրկացված մանր արտադրողները և թե գյուղացիները պատրաստվում էյին վճռականորեն բաղխվելու շահագործվողներին հետ։

Սպարտակյան հեղափոխությունը նախապատրաստեց նոր հեղափոխության հաղթանակը, վորն արդեն վերջնականապես վոչնչացրեց աշխատավորների ստրկատիրական շահագործման սիստեմը։

Անհրաժեշտ էր սպասել ավելի քան յերկու դար, վորպեսզի ստրկատիրական սիստեմի ճղնաժամն ավելի ուժգնորեն հարվածեր Հռոմին և ստրկական աշխատանքի փոխարեն սկսեր զարգանալ ֆեոդալական հասարակարգը։ «Վորպեսզի անտեսության ֆեոդալական սիստեմը, —ասում է ընկ. Ստալինը,— ապացուցեր իր առավելությունը տնտեսության ստրկական սիստեմի նկատ-

մամբ, սրա համար անցավ, կարծեմ, մոտ յերկու հարյուր տարի, յեթե վոչ պակաս*):

Հեղափոխական ավերի յերկու-յերեք դար հետո սկսած վերելքը հասնում է այնպիսի բարձրության, յերբ ստրուկների ու գյուղացիների հետ միասին ընդհանուր թշնամու դեմ միանում են նաև բոլոր «բարրարժաները», և Հռոմը վորոտով կործանվում է (410 թ.): Սկսվեց ստրուկների յերկրորդ և այս անգամ հաղթական հեղափոխությունը: Այսպես, ի վերջո, հաղթեց այն գործը, վորն այնպես հերոսաբար նախապատրաստված էր դեռևս սպարտակյան հեղափոխությամբ:

Այս հեղափոխության հետևանքով դեն շարավեցին հռոմեյական կեսարները, և աշխատավորների շահագործման ստրկատիրական ձևը վերացավ:

Հասարակությունը թեակոխեց զարգացման մի նոր, ավելի պրոգրեսիվ փուլ՝ ֆեոդալական հարաբերությունների զարգացման փուլը:




*) Ի. Ստալին. «Ուղղիցիայի մասին», էջ 537, 1928 թ., ռուսերեն:

Նախֆան գրքի կարդալն ուղղեցեմ հետեվյալ սխալներն
ու վրիպակները

ՏՊԱԳՐՎԱԾ Ե	Ե Զ	ՊԵՏԻ Ե ԼԻՆԻ
12-րդ տախտակներէ	9	«12 տախտակներն»
Ապուլէյ	10	Ապուլիոս
Գալիկարնացի	14	Հալիկարնացի
ձիավորներէ	15, 41, 59	հեծյալներէ
Յերցեյ	16	Յերցեիոս
Սիրակուզի	19, 20, 40	Սիրակուզայի
Եննում	23	Եննայում
Եննից	24	Եննայից
Գիպսեյի	24	Կիպսեոս
ապստամբություններ	25	ապստամբություններ և
Ֆուլլի	25	Ֆուլլիոս
պուբլիկանտի	30	Պուբլիգուանի
Բիթինիան	35	Բյութանիան
կեմբներէ	40	կեմբրական
Նիկոմիդ բիթինացին	40	Նիկոմիդոս Բյութանացին
Գա	46	Գայոս
Դոնիս	46	Դիոնիսոս
Բոսպոր	48, 49	Բոսֆորյան
սկյութ	49	սկյութացի
Ապիանոս	55-րդ եջից սկսած բո- լոր եջերում կարդալ՝	Ապիան
Կրիկս	55, 54, 70	Կրիսոս
Ենումա	55	Ենումեյոս
Սերաորիայի	55	Սերաորիոս
դեզիմիցիոս	59	դեսիմիցիոս
Գայ Ոկտավիոս	61	Գայոս Ոկտավիանոս
Ֆրոնտինը	63	Ֆրոնտինիոսը
Կաստի	73	Կաստիոսի
գյուղացիներէ ազատագրումն ստրուկներէ լծից	75	գյուղացիներէ ազատա- գրումն ստրկատերերէ կա- պալային լծից
Մարիի	83	Մարիուսի
Յուլիոս	84	Հուլիոս
Լեպիցի	85	Լեպիլոս

ԾԱՆՈԹ.—59-րդ եջի վերեկց 6-րդ տողից մինչև նախադասության վերջը կար-
դալ «Յեթե տվյալ փուլում Սպարտակի զորքերից անջատվեց Կրիկան
իւր զորամասով, ապա հետագա շրջանում, ալսիքը՝ Կրասոսի յե-
լույթի ժամանակ, տարածայնություններէ հողի վրա, անջատ-
վեցին նաև ուրիշ ջոկատներ»:





<< Ազգային գրադարան



NL0408841

